





Հ Ա Յ Ծ Է Ս Ը

ՍՅՈՒԳՎԱԾ Է 1961 Ք.

1911 ՏԱՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ

ԳՈՐԾՈՅ ՄԷՁ

ԳՐԵՑ


399

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՐԵՐ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ՌՑԿԸ - 1919





153

# Հ Ա Յ Ծ Է Ս Ը

1911 ՏԱՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍԻՒՆՅՈՂՈՍԻ

ԳՈՐԾՈՅ ՄԷՁ



Հին Կարգի Կրթական

181.6  
2-43

ՍՏՈՒԳՎԱՆ Է 1961

# Հ Ա Յ Ծ Է Ս Ը

1911 ՏՄՐԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆՆՅՈՒՄԻ

ԳՈՐԾՈՅ ՄԷՁ

ԳՐԵՑ

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ՌՅԿԸ - 1919

A  $\frac{T}{927}$

## Ա Ջ Դ

1914ն էր: Հազիւ ծնորս հասած Սիւնհո-  
դոսին նորատիպ Գործերը, որ եկեղեցական  
մտաւոր նոր ասպարէզ մը կը բանային մեր  
առջև, նստած կղզեկիս առանձնութեան մէջ՝  
ուշի ուշով ու խնդութեամբ կը կարդայի  
եռանդագին և կը նշանակէի խորհրդածու-  
թիւններս: Չէի մտածեր բնաւ, — ո՞վ կարող  
էր մտածել, — թէ թիչ մը վերջ պիտի  
պայթէր աշխարհաւոր պատերազմը, որ մեր  
հովիւներն իրենց հօտերուն հետ զազանաց  
ժանիքներուն զոհ պիտի դնէր, զգեցնելով  
անոնց մարտիրոսաց կարմիր պատմութեանը.  
որ պղծել և ասպականել պիտի տար մեր ե-  
կեղեցիքն ու սրբութիւնքը. և մեր երկիրը  
պիտի պատէր աղէտ մ'այնքան ահաւոր, որ  
հարայելի և Թորգոմայ հին եղբրերգուաց միա-  
համուռ կոծերն անբաւական պիտի լինէին  
ողբալու, և ապիկար՝ ամոքելու մեր կսկիծը:  
Անցաւ փոթորիկը կործանմամբ ամբարըը-  
տաց, և մեր թշուառ ազգին բեկորները կը  
հաւարուին այժմ իրարու քով, վերակազմելու

քայքայուած մարմինը, վերաշինելու աւերած տունը։ Կ'արժարժի մեր յոյսն յաւերժական փրկութեան շահին հանդէպ՝ որ կախուած է մեր առջև։ Պիտի դառնանք մահուանէ ի կեանս, պիտի յառնենք մեր իսկ աճիւնէն՝ մահան փիւնիկ հաւին։ Պիտի կանգնին մեր հովիւներն ալ, և մեք պիտի խմբուինք ամոնց շուրջ մեր նորակերտ ու նորազարդ սուրբ փարախներուն մէջ։

Այս յոյսն է, այս հաւատքն է՝ որ կը մղէ դողդոջ ձեռքս՝ յամծնելու մեքենային սոյն աշխատութիւնը, որ հիմզ տարիներէ ի վեր լքեալ կը մնար փոշիներու ներքև։ Յետ մեր չարչարանաց՝ անմիջական պահանջի մը գոհացումը տալու չէ այս փոքրիկ գործը. այլ ասպացոյց մը՝ թէ քաղաքակիրթ ժողովրդները, որ կոշկոճուած շնչուած բռնութենէն, մրրկէն ոստաքանց ու տերևաթափ ծառի մը պէս կը բողբոջին վերստին, կը սկսին ապրիլ իրենց գործունեայ, մտաւոր և հոգևոր կենաց ըլլոր ոստերուն մէջ միանգամայն։

---

---

## Ա

### ՍԻՒՆՀՈՒՈՍԻ ԳՈՐԾԵՐԸ<sup>1</sup>

Նախ քան մտնելը մեր ծիսական խընդրոյն մէջ, կանգ առնունք պահ մը Սիւնհողոսի ընդհանուր « Գործոց և Վճռոց » առջև, որ լոյս տեսան հայ ու լատին լեզուներով, և պաշտօնապէս հրատարակուեցան մեր պատրիարքական վիճակին բոլոր թեմերուն մէջ:

1. — Հոյակապ հատոր մ'է այդ աշխատութիւնը. և բանիրուն ընթերցողին վրայ կը թողու հաճելի տպաւորութիւն մը՝ իւր նոխութեամբ և շահաւէտ ու կարգաւոր յօրինուածով: Մինչև ցարդ Հայ կա-

1. Գործք և Վճիռք ազգային Սիւնհողոսի Հայոց որ քուսմարեցաւ ի Հոսմ, առ Ս. Նիկիոզայոսի տունեաինացոյ, յամի Տեառն 1911. Կոստանդնուպոլիս, 1914:

թող. Եկեղեցին չունէր իւր օրինագիրքը: Ունէինք մեր ձեռքը Հայ Եկեղեցւոյ հին կանոնները, մասամբ տպագրեալ ու ցրիւ, և մեծ մասամբ դեռ անտիպ մնացած, որոնք իրենց հնութեամբ ու ժամանակիս բարուց և համոզմանց հետ ըստ մեծի մասին անմիարանութեամբ՝ մոռացութեան դատապարտուած էին: Կային Տիեզերական Ժողովոց վճիռները, Տեսական ու Բարոյական Աստուածաբանութիւնը, որոնք մասամբ միայն կը լեցնէին մեր կղերին պէտքը: Ս. Քահանայապետաց և Ս. Աթոռոյն հին կամ նոր շատ վճիռներ, տրուած առ Ընդհ. Եկեղեցին և առ Արևելեայս կամ Հայս՝ փակուած կը մնային դիւաններու կամ հեռաւոր այլալեզու մատենադարանաց մէջ, սակաւուց միայն մատչելի և ծանօթ: Ներկայ հատորը կու գայ ուրեմն մեծ պակաս մը լեցնելու, հայ կղերին ձեռքը տալով ինչ որ կարևոր է իւր վիճակին ու պաշտօնին համար ի գիտութիւն և ի գործադրութիւն:

2. — Իւր բովանդակութիւնն է այս: Նախ կը դրուին «Վաւերագիրք որք հային ի Սիւնհոզոս», հանդերձ ժողովոյն գումարման պատմութեամբ: Յետոյ կու գան



«Վճիռը Սիւնհոզոսի», բաժնուած տասներկու տխրոսաց և ութսուն զլխոց:

Սիւնհոզական Հարք այդ վճոց խմբագրութեան համար՝ իրենց ամենակարևոր օժանդակ ունեցած են վեց լատին արևելագէտ աստուածաբաններ, յանուանէ յիշատակուած (էջ 12): Ժողովի պատմութենէն զգալի է՝ որ այդ աստուածաբանք իսկ կը պատրաստեն վճիռները, որոցմէ յետոյ օրինակներ կը բաշխուին «ի չորեսին մասնաժողովսն», կազմուած սիւնհոզականներէ, որպէս զի քննեն, և իրենց զիտողութիւնըն աւելցնելով՝ Սիւնհոզոսի վիճման ենթարկեն (էջ 16, 17): Այսու գործն արդէն զիւրացած էր. և Սիւնհոզոսի յաջորդական զումարմանց մէջ վճիռները կը կարդացուին, և այն՝ «բստ զլիաւոր մասանցն միայն», և Հարց հաւանութիւնը հարցուելով կը վաւերացուին (էջ 18-20 ևն): Սիւնհոզական իննեւտասն Հայրերէն մին ձեռնպահ կը մնայ Գ և Ե տխրոսաց մասին, որ են «Յաղագս աստուածային պաշտաման» և «Յաղագս բարեկարգութեան ժառանգաւորաց» (էջ 26): Նոյնպէս մի ձեռնպահ կայ Զ տխրոսի Ա զլխոյ մասին՝ որ «Վասն Հաստատութեանց ա-

րանց» կրօնաւորաց. և հինգ ձեռնպահք  
Բ գլխոյ նկատմամբ՝ որ «Վասն Զմմառեան  
Միաբանութեան» (էջ ԾԳ):

Յ. — Այդ վճիռը՝ ըստ ընդհանուր  
բովանդակութեան կրնան բաժնուիլ ի վար-  
դապետականս, կանոնականս, բարեկար-  
գականս և ծիսականս: Առաջին երեքը, խրմ-  
բագրուած եկեղեցւոյ կեդրոնին մէջ և Ս.  
Աթոռոյն մասնագէտ պաշտօնէից գործակ-  
ցութեամբ ու պատրաստ աղբիւրներէ, —  
որոցմէ շատ կարևոր ու հետաքրքրական  
հաւաքոյթ մ'ալ, գլխաւորապէս արևե-  
լեայց և Հայոցս վերաբերեալ, կը զետե-  
ղուին Յաւելուածին մէջ, — կատարեալ  
միայն կրնային լինել՝ գէթ ըստ էական  
մասին. թէպէտև այս պատճառաւ լատին  
կղերէն ալ դիտել տրուի մեզ, ինչպէս ինձ  
պատահեցաւ լսել յաճախ. «Բայց այդ  
մատենին մէջ՝ բաց ի ծիսական բաժնէն՝  
ամէն ինչ նոյն է լատինականին հետ»: Արդարև  
փափաքելի էր՝ «Հայոց ազգային  
Սիւնհոգոսի» մը գործոց մէջ՝ կաթողիկէ  
Եկեղեցւոյ հին ու նոր համախումբ սահ-  
մանաց կից տեսնել՝ պատահաբար դրուա-  
ծէն շատ աւելի ճոխ յառաջբերութիւն մը  
հին հայ ժողովոց այն սահմաններէն՝ որոնք

կը համաձայնին արդի եկեղեցական կանոնաց ու սկզբանց հետ։ Եւ վարդապետական խնդրոց մէջ՝ արևմտեան Հարց հետ աւելի յաճախ զուգորդութիւն մը մեր Հարց վկայութեանց։ Ահա երկուց բնութեանց խնդրոյն մէջ՝ անոր երիցագոյն և հզօրագոյն ախոյեանն Յովհ. Խմաստասէր, որ լոյս սփռեց Շնորհալուոյն ու Լամբրոնացւոյն, և որոց սուրբն էր, աներևոյթ կը մնայ։ Այս կողմանէ, և միանգամայն մեր ազգայնոց մէջ պտղաբեր, աւետարանութեանը զրաւական մը պիտի լինի, Հայոց հայրախօսութեան ներմուծումը՝ Սիւնհոդոսէն մեր կղերանոցաց հրամայուած այն ուսումնական ծրագրին մէջ՝ «որովք վարժարանք Հոռմայ վարին» (հ. 711), և որով մեր կղերը պիտի կարենայ Սիւնհոդոսին հետ աւելի ընդարձակ գիտակցութեամբ մը «պաշտպան կալ ուղղափառ վարդապետութեան և նախնի հաւատոց Ս. Հարցն Հայաստանեայց» (հ. 125)։ Իսկ մեր ծիսին խորագոյն ծանօթութեան ու պահպանութեան համար՝ օգտակար պիտի լինի նաև հայ սրբազան հնախօսութեան ուսուցումը։

Սիւնհոդոսին գործոց մէջ տկար կը մնայ

նաև ծիսական բաժինը, որոյ կատարելութեան չէին կարող նպաստել անշուշտ, — և ոչ ուսումնասիրաց իրաւունք տալ խստապահանջութեան, — ոչ Սիւնհողոսին կարճ տևողութիւնը, ոչ կանխեալ սպարաստութեանց սակասը, և ոչ ուրիշ ինչ ինչ հանգամանքներ: Զայս բաջ գիտնալով Սիւնհողոսն ինքնին, իմաստութեամբ ապագային թողուց ծիսական խնդրոյն վերջնական կարգադրութիւնը:

## Բ

### Հ Ա Յ Ծ Է Ս Բ

1. — Թէպէտ Սիւնհողոսը դիւրութիւն չունեցաւ մշակելու բաղձացեալ չափով ծիսական բաժինը, սակայն դրաւ անոր հիմունքը, և տուաւ անոր շինուածին համար կարևոր ատաղձը: Եւ նախ վճռեց հայ ծիսին պարտուպատշաճ մեծարանքը, որ իբր խարխիս պիտի ծառայէ անոր առաջիկայ բարգաւաճմանը, և զոր այսպէս

կը բացատրէ, յետ ակնարկելու յընդհանուրս արեւելեան եկեղեցեաց ու ծիսից արժանաւորութեան. «Նմին իրի պարտանծին համարիմք՝ ի մասնաւորի հայկականս ծիսի զազնուութիւնն և զվաղեմի ձևոյն զհնութիւն մեծարարբառ հռչակել և մեծարելի հանդիսացուցանել, և միանգամայն որ ինչ ի պահպանութիւն, յանարատութիւն և ի բարեգարդութիւն ձևոյն առաջնորդեսցէ, վճռել և սահմանել» (հ. 610):

Այս վճռոյն մէջ մեր ուշադրութիւնը կը գրաւէ նախ հայ ծիսի ազնուութիւնը, զոր ուրիշ կերպով չենք կարող իմանալ՝ եթէ ոչ վաղեմի հետքեակը մէջ. զի ծէսը այն ժամանակ ազնիւ են, երբ՝ ըստ ճշգրիտ և իմաստուն սահմանին Լևոն ժԳի՝ «նոցին իսկ Առաքելոց և Հարցն սրբոց կիրարկութեամբ ազնուագոյն զործեալ են» (էջ 796). և անշուշտ նոյն «մեծափառ հնութեամբ» է առաւելապէս՝ որ արարողութիւնը օժանդակ կրնան հանդիսանալ հաւատոց, ըստ նոյն Քահանայապետին (անդ, և հ. 613), ցուցնելով բողոքականաց և այլ հերձուածողաց, թէ ինչ որ իրենք կը խոտեն՝ է հաստատութիւն և թարգման

հաւատոց նախկին քրիստոնէական դարերու: Հարկաւ մեր ծիսի հին ու սեպհական նկարագրին մէջ կը կայացնէ Սիւնհոգոսն անոր անարատութիւնն ալ:

2. - Սիւնհոգոսի յիշեալ յօդուածն եթէ, ինչպէս կ'ենթադրուի, մէկ կողմէն ներբողն է հին հայ ծիսին, միւս կողմանէ ազդարար ակնարկ մը կը սքօղէ հայ կաթողիկեայցս այժմեան ծիսին նկատմամբ, որ՝ ինչպէս զիտենք՝ ուրիշ բան չէ՝ բայց զանգուած մը հնոյն ու նորին, սեպհականին ու եկամտին: Եւ կը թուի՝ թէ զայս իսկ ի նկատի ունի Սիւնհոգոսն՝ երբ կը յիշեցնէ կանոնական իրաւունքը, « յորում սահմանեալ է, կ'ըսէ, զի արևելեան ծեսն ընդ յատկականին մի խառնեացի, որպէս կայ ի բովանդակ վճռագիրս կեղեատինոսի Գի» (հ. 619): Միանգամայն այդ խառնման հոսանքին դէմ ամբարտակ կը կանգնէ Բենեդիկտոս ԺԳի հօր վճիռը, թէ « Ոչ ումեք ցարդ եղեալ կամ յայսմ հետէ իցէ իշխանութիւն, որով և իցէ տիտղոսիւ կամ պատրուակաւ կամ որով և պէտ ճոխութեամբ կամ արժանաւորութեամբ, նաև պատրիարքականաւ կամ եպիսկոպոսականաւ իցէ պերճացեալ, նորոգել կամ

մուծանել ինչ որ նուազութիւն ածիցէ ա-  
նարատ և ձշգրիտ պահպանութեան նոցուն»  
(հ. 611): Եկեղեցւոյ գերագոյն Պետին  
այս խօսքերը, յատակ և հատու, կը ջնջէին  
այն օրէն իսկ բոլոր ծիսական խանգա-  
րումներն որ եղած էին իւրմէ յառաջ կամ  
պիտի կարենային լինել իւրմէ վերջ՝ որ  
և է եկեղեցական արևելեան իշխանութեան  
կողմանէ, և որ և իցէ պատճառանօր:

Եթէ մեր հասարակութեան մասնաւոր  
հոգեբանութիւնը չէր թոյլատրած իրեն  
ըմբռնել ժամանակին Բենեդիկտոսի վճռոյն  
ոյժը, — բացառութիւն կը կազմէին Պաւ-  
ղոս Մարուշեան նախագահի նմանող ա-  
զատ ու կիրթ մտքերը (հմմտ. էջ 676-9),  
— յաջորդ Քահանայապետը սակայն չդա-  
դրեցան յեղյեղել զայն՝ անոր և իրենց  
անուամբ միանգամայն, մինչև ցլևոն ժԳ,  
որ մեծախորհուրդ միտք՝ աւելի ազդեցիկ  
ձայն մը բարձրացուց. և յետ յիշեցնելու  
Առաքելական Աթոռոյն ջանքն ու հսկողու-  
թիւնը իւր նախորդաց օրով, «զի իւրա-  
քանչիւր արևելեան ազգի անձնիւր սովո-  
րութիւնը և կարգաւորութիւնը նուիրական  
պաշտամանց... ցանկ առ նոյն ժողովուրդս  
անվթար պահեսցին և պաշտպանեսցին»

(էջ 795), նոյն հրամանը բազմապատիկ կապերով ամրացուց: Հասած էր մեր կղերին ու ժողովրդեան համար՝ Լեոնի լայն միտքը հասկանալու ժամանակը, և 1890ի Սիւնհողոսը, նախագահութեամբ լուսամիտ պատրիարքի մը (Ազարեանի), առաջին հիմունքը կը դնէր ծիսական վերանորոգութեան, և որ անձանօթ՝ բայց գուշակելի պատճառներով մոռացութեան քողին ներքև ծածկուած մնաց նոյն Սիւնհողոսի ամբողջ սահմանաց հետ միասին: Իւր օրով ու քաջալերութեամբ սկսաւ եկեղեցական մատենից հրատարակութիւնն ալ ըստ ընթերցուածոց նախնեաց<sup>1</sup>:

Յ. — Յիշեալ ժողովին գործը վերանորոգելու պատիւը պահուած էր վերջին Սիւնհողոսին: Սա գործնական և արդիւնաւոր ընծայելու համար իւր ձեռնարկը, կը


1. Միայն թէ պայման մը, զոր նոյն պատրիարքը գրաւ և Սիւնհողոսն ալ կը հաստատէ՝ աստուածաբանական բացատրութեամբք տպագրելու ժամագիրքն ու շարակնոցը, կրնար թերեւ բարեյօժար հաւանութեամբ Ս. ժողովոյն պանց լինել. զի արդարև շատ համակրելի չի թուիր՝ հասարակաց ազօթամատենից էջերը կոչումներու և մեկնութեանց ասպարէզ դարձած տեսնել: Հաւատացելոց պարզմտութիւնն անկարօտ է աղոնց. իսկ կղերը ժամանակին ուսած ու տեղեակ Ս. Հարց լեզուին, նոյնպէս անկարօտ կրնայ համարձուի այգպիսի յաւելուածոց:



սահմանէ կարգել պատրիարքարանի մէջ  
 ծիսական ժողով մը, « առ որ հարկ է ածել  
 յամենայն վիճակաց զտարակուսանս և  
 զվէճս զխորագրոց և զայլոց որ ի ծէսն  
 հայկցին, զի ըստ պատշաճի իրացն լուծցին  
 և վճոհեցին », աննլով անոնց մասին  
 էպիսկոպոսաց կարծիքը, և ի կարևորս  
 նաև Ս. Աթոռին հաւանութիւնը (հ. 614,  
 615, 638):

Սիւնհոդոսն այդ ընդհանուր կարգա-  
 դրութեամբ չի գոհանար. այլ աւելի յա-  
 ռաջ կ'երթայ, և մի առ մի կը նշանակէ  
 այն զործերը՝ որոցմով պիտի զբաղի յիշեալ  
 ժողովը: Կ'ուզէ՝ որ « ամենայն մատեանը  
 ծիսականը քննեցին » և այնպէս տպա-  
 գրուին (հ. 635): Այսպէս Հայրապետա-  
 կան Մաշտոցին մէջ, որ կը բովանդակէ  
 ձեռնադրութեանց և ինչ ինչ օրհնութեանց  
 կարգերը, և ձեռագիր է տակաւին, հարկ  
 է որ քննուելով՝ « ամենայն ինչ ի հնա-  
 գոյն ձև ածիցի », մնալով միանգամայն  
 համաձայն վճոռոյ փլորենտեան ժողովոյն  
 (հ. 636): — Հասունեան Մաշտոցը, որ  
 տպագրուած էր « առ ի փորձ », պէտք է  
 « ի վերջնական կատարելութիւն » հաս-  
 ցընել, և իւր կարգերն « եթէ հարկ թուիցի,  
 չայ Ծէսը

927  
 926  
 A



համեմատեսցին ընդ հնագոյն ձեռագիրս և կատարելագունից ի սոցանէ միաբանեսցին» (հ. 637)։ — նոյնպէս Հասունեան Խորհրդատեարը, «առ ի փորձ» հրատարակուած, «քննելի է վերստին», և պընդապէս կը յորդորէ՝ որ բարսեղեան սըրբագրութիւնը քննութեան բովէն անցնին, և եթէ անկարևոր դատուին՝ «ի բաց բարձցին» և հին ընթերցուածը հաստատուին, առանց վերապահելու Հանգանակն իսկ, որոյ մէջ՝ բաւական կը համարի «և յՈրդւոյ» յաւելուածը (հ. 638), քան զոր աւելին չէ պահանջած Ս. Աթոռն ալ (էջ 594, 676)։ Գլխաւորապէս այս երեք ծիսական գրոց մէջ կը կայացնէ Սիւնհոդոսը վերանորոգման իւր գործը<sup>1</sup>, զի այս մատեանը են հայ ծիսի աղբիւրն և հիմունք։

**Ուշագրաւ պարագայ մը կայ Սիւնհոդոսի**

1. Ինձ անձանօթ է պատճառը՝ որով Սիւնհոդոսի յաջորդ տարին շրջաբերական մը պատրիարքական վիճակին մէջ «ի իզճէ և ընդ մեզօք» պարտաւորիչ կը դարձունէր «մի միայն» Հասունեան «առ ի փորձ» հրատարակեալ Խորհրդատեարին ու Մաշտոցին գործածութիւնը, զաղբիցնելով միւս հրատարակութիւնքը՝ որ վաւերացած էին Առաք. Աթոռոյն կողմանէ, և Հասունեանէն շատ կանուխ արդէն ի գործածութեան։ Կէ որոնք մօտաւոր ապագային՝ իբրև աւելի համաձայնք հնոյն, ըստ որոշման Սիւնհոդոսին պիտի վերահաստատուին կատարելագոյն ձևով մը։

դիտաւորութեան մէջ, Կորոզութեան համար չի դիմեր որ և է ազգային կոչուած կամ կարծուած արդի արարողութեանց, զուցէ խորհելով՝ — և իրաւամբ՝ — թէ հայկական բնիկ ծիսի նժարներուն վրայ աղոցմէ շատերը պիտի կորուսանէին իրենց արժէքը: Այլ մեր ակնարկը կ'ուղղէ ձեռնադրութեանց հնագոյն ձևոց, Մաշտոցին հնագոյն ձևագրաց, և Պատարագի ընթերցուածոց ստաշին կիրարկութեանը: Ամենայն ինչ, բաց ի քանի մը ստիպողական համարուած կիտերէ, կ'ուզէ որ մօտենան մեր ուղղափառ Հարց հին ու հարագատ աւանդութեանց: Զի այս է Լևոն ԺԳի և Սիւնհոզոսին հասկացած «ազնուագոյնը»:

Աղոցմէ զատ որոշած է՝ որ Տօնացոցին խորագիրը ու կարգերը «մանրամանր արձանագրեսցին», արարողութեանց մէջ միաձեռութիւնը պահելու համար (հ. 639): — Հոս աւելի խոշոր քայլ մ'ալ կ'ընէ Սիւնհոզոսը, սահմանելով որ Սրբոց տօնից այժմեան օրակարգը, զոր կը համարի «ի յետին ժամանակս առ մեզ մուծեալ», յեղաշրջուի «ի վաղեմի և յընդհանուր սովորութիւն» միւս եկեղեցեաց (հ. 678):

Հոս ալ իւր նպատակն՝ ի վաղեմին դառնալն է և գովելի, թէև արդիւնքը՝ զոր կ'ուզէ ձեռք բերել՝ չհամապատասխանէ այդ նպատակին, ինչպէս պիտի ցուցնեմ իւր կարգին:

## Գ

### ԾԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԳՈՐԾԸ

1. — Այս ժողովը, որուն յանձնուած է վերոյիշեալ մեծ գործը, պիտի կազմուի « եթէ յաշխարհիկ և եթէ ի վանական կղերէն » . անշուշտ գործին լաւագոյն յաջողութեան, և միանգամայն Սիւնհոդոսին բաղձացած « միաձեռութիւնն և համաձեռութիւն » ամբողջ կղերին մէջ ձեռք բերել կարենալու համար (Տ. 614)<sup>1</sup>:

1. Գիտելի է՝ թէ ինչպէս Արևիկոս Նիկիեցոյ Հին ու Նոր սոփոութիւնը ներքէն է միշտ ծիսական տարբերութիւններ աշխարհի ու վանական եկեղեցեաց մէջ: Շնորհալոյն օրով ժամերգութեանց տարբեր « կարգաւորութիւնք » կային Մաքենեաց մենաստանին մէջ ի Սիւնիս, և տարբեր ի Թեզննիս Այրարատայ. որոց առաջինն առաւ Հայրա-

ժողովին անդամք պիտի լինին նաև «ի քաջատեղեակ արանց յարարողականն» (անդ), զիտնալով թէ որքան կարևոր, խոհական և լուրջ է անոնց պաշտօնը: — Ո՞չ ապաքէն Ս. Աթոռն ալ սովոր է նման պարագայից մէջ համայն կաթողիկէ աշխարհի լաւագոյն մասնագէտներն ընտրել: — Եւ քաջատեղեակդ կ'իմացուի հարկաւ ոչ թէ արդի արարողութեանց միայն, այլ նաև՝ և առաւելապէս՝ վերանորոգելի հին

պետք, «զպական ելից, զսխալսն ուղղեաց» և ազգին տուաւ ի զործածութիւն. որով եղան երեք զանազանութիւնք: Ըստ Խրատուց Գր. Խլաթեցոյն՝ արևելեան Հայոց սահմանք ևս տարրեր էին Շնորհալուոյն կարգածէն. Նոյնպէս Սեպուհ լերան վանքերն ունէին յատուկ մեք ու խրատներ: — Այս ազատութիւնն յարգեց նաև արևմտեան Եկեղեցին ու կը յարգէ տակաւին, որով լատինականէն զգալի կերպով կը զանազանին Ամբրոսիան ծէսը, կարգուսեանք, կարմեղեանք ու Գոմինիկեանք: — Այն շրջանին՝ ուր հայ կաթողիկեայ ծէսը շատ աւելի խոտն էր լատինականին հետ, Բենեդիկտոս ԺՊ առ Միխիթարեանս ուղղած 22 Յուլիսի 1750 հրամանագրով, պահուած ի Ս. Ղազար, կը պատուիրէր անոնց՝ «զի արևելեան Եկեղեցւոյ սովորութիւնք և ծէսք՝ հաւանեալք յԱռաքելական Աթոռոյն՝ ճշդիւ պահեսցին. և ի նախասացեալ (լատինակերպ) նորութեանց և յայլոց սոյն պիտեաց առ նոսա եղիւոց հակառակք իւրեանց ծիսի՝ յայտնապէս հրամարեցուցանել և արգելու» են: Այդ օրէն և հրամանին զօրութեամբ Վ. Ենեակոյ մենաստանը սկսաւ գտել հայ ծէսը, որով և տարրերիլ հասարակաց սովորութիւնէն, որ իւր կարգին նոյնպէս պիտի բարեփոխուէր, բայց աւելի զանգագօրէն:

հայ ծիսին, և փոքր ի շատէ նաև ընդհանուր արևելեան ծիսի հոգւոյն ու նկարագրին, որոյ մասն է հայկականը:

2. - Վանական կղերին մասնակցուցութիւնն ենթադրել կու տայ նաև անոր արդիւնական օժանդակութիւնը զրչագրաց համեմատութեան գործին մէջ, որոցմով ճոխ են անոնց մենաստանը, և առաւելապէս Ս. Ղազարու մատենադարանը, որ կը բովանդակէ քննելի ծիսական զրոց օրինակներ կիլիկեան ու նախակիլիկեան շրջաններէն. ճշմարիտ զանձեր, որոնք պիտի կարենան զոհացում տալ Սիւնհողոսի նպատակին ու բաղձանաց, և որոնք՝ ըստ իմ խոնարհ համոզման՝ անպայման կերպով կը պահանջեն Մաշտոցի բաղդատութիւնն ալ, պայմանաբար միայն յանձնարարուած Սիւնհողոսէն, «եթէ հարկ թուիցի»: Հոն է, զոր օրինակ, սոյն մատենի հնագոյն և իւր տեսակին մէջ միակ օրինակը, որ կը բովանդակէ ձեռնադրութեանց, խորհրդոց և օրհնութեանց կարգերը նախակիլիկեան հնագոյն ձևով, ուստի և շատ համառօտ: Հոն է 1248ի ձեռնադրութեանց տետրակը, Պահլաւունեանց շրջանի կազմութեամբ: Հնագոյն ձևերու վերադարձը՝ հա-

մառուտութեան հետ, որ առանց վարանելու քսենք՝ թէ կը փնտռուի այժմ, և որուն ուշ գրուած է Հասունեան Մաշտոցին մէջ ալ, կը գուզէ նաև Ս. Հարց հեղինակութիւնն ու ծիսի հարազատութիւնը: Եւ ի՞նչ քան քան զայս ընտիր և «ազնուագոյն» : Հոն են վերջապէս եկեղեցական բոլոր գրոց բազմաթիւ և ընտրելագոյն օրինակները, համեմատութեան լուսատու գործիներ, առանց անտեսելու Վիեննայի Ռուստին հաւարածոյի կարևոր օրինակները:

Յ. — Իրիսական ժողովին քննութեան նիւթ պիտի լինին խորագիրք ու քնագիրք (հ. 614), երկուքն ալ հաւասարապէս անհրաժեշտը հայ ծիսի զտման և անարատութեան համար, և երկուքն ալ որոնելիք հին գրչագրաց մէջ: Բայց գրչագիրք ինքնին անբաւական պիտի լինէին, եթէ ժողովն առաջնորդ չառնուր անոնց խուզարկութեան մէջ գիտնական և ընտրական ոգի մը, կարևոր նոյն իսկ դուզնաքեայ համարուած կիտերու մէջ անգամ, և որով միայն կարելի է պատրաստելի գործը կատարեալ ու պատկառելի ընծայել: Այս ոգին երբեմն մէկ գրչագրի աւելի յարգ կու տայ քան անոր հակառակ հարիւրոց:

Պատմութիւնը կամ նախնեաց մատենագրութիւնը կամ լեզուին բերականութիւնն ինքնին իրեն օժանդակ կ'առնու՝ ուր գրչագիրը զինքը չեն գոհացներ, կամ կը հակառակին իրարու: Քանի մ'օրինակ յառաջ բերեմ:

Վենետկոյ նոր ժամագիրքը (1893ին), համեմատուած գրչագրաց հետ, կատարած է քանի մը մանր փոփոխութիւններ բնագրին մէջ. և մաս մ'ալ ցուցակագրեր է սկիզբը, որպէս զի նախ ընտանեան ընթերցողաց և ապա մտնեն բնագրին մէջ: Սակայն ընտրական ոգին կը պահանջէ դեռ հոն ինչ ինչ սրբագրութիւն. գոր օրինակ՝ Աշխարհ ամենայն երգին մէջ հարկ է գրել ըստ ընտրելագոյն գրչագրաց՝ «Միծաղին զգլորմամբս» և «Ճաշակեցի զմահ», զորս հայագէտ Շնորհալին իսկ տարբեր կերպով չէր կրնար ըսել. (ձաշկ)՝ կերակրոյ յատուկ է): — Լոյս զուարթի մէջ՝ «որ տաս կենդանութիւն», ըստ յոյն բնագրին և գրչագրաց ումանց (1465ի ևն), և ըստ ուղիղ շարադրութեան, զի երգդ երկրորդ դէմքով է: Նոյնպէս գրելի է «Յիսուս Քրիստոս» ըստ յունարենին, խոսրովու ընդարձակողին (ժԳ դար) և յիշեալ ժամագրոց: —



Հաստատվ խոստովանելը կ'ուզէ՝ «Անկեղ (ոչ անկեղ) բնութիւն, մեղայ քեզ» ըստ ընտիր գրչագրաց, և ըստ ոճոյ հեղինակին, որ նոյն բառախաղը կը կրկնէ նաև միւս տանց մէջ. «Խմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն». «Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո» ևն. — Խորագրոց մէջ պատմութեան ու հին գրչագրաց հետ անմիաբան է Լուսաւորչին ընծայել Աստուած մեծ քարոզը, և Հանգանակին իսկ մեք փաստաւորեցուքը (թարգ. յունարենէ). Սարկաւազ վարդապետին՝ Յիշևա տէր զգաշտօնեայս քո ուղերձը. և Թովմայի առաքելոյն՝ Սուրբ Աստուածին յարակից Փաստաւորեայ մաղթանքը, հաւանօրէն ազդեցութեամբ անճիշդ կարծեաց Միսիթար Գոշի (յԱրրտ. 1901, 121) և Գր. Տաթևացւոյն (տպ. ընդ Խոսր. 432):

Խորհրդատետրի մէջ ալ կան ուղղելի շատ կիտեր, որոցմէ զոմանս կը յիշեմ: Պատարագը սկսելու չէ Եւ շաղկապով, որ սխալմամբ առնուած է ժամատեղաց խրատուց միջէն, ուր կը գրուի. «Եւ ասէ աւագերէցն (ժմրբ.), Լուսցայց սրբութեամբ զձեռս իմ, եւ վասն սրբունոյ Աստուածածնին. եւ Սուրբ զԱստուածածին ասէ սար-

կաւագն» . ուր կը տեսնենք թէ և՛ կըրկնուած՝ իւրատի մասն է, ոչ թէ յարակից մաղթանաց կամ քարոզին: — Ըստ ընտիր գրչագրաց գրելի է՝ «Ի յարկի քում սրբութեան», որ աղօթքը պատմական ձևէն կը հանէ և առ Աստուած կ'ուղղէ վայելչապէս՝ նման իւր շարունակութեան, «զարութիւնդ քո օրհնեմք» ևն: — Ընծայից պատրաստութեան պահուն նորամուտ և աւելորդ յաւելուած մ'է՝ «Եւ ևս խաղաղութեան. — Օրհնութիւն և փառք», և օրհնել ընծայքը, որոնք իսկոյն կրկին պիտի օրհնուին արդէն սպասուց մէջ: Նախնիք այս տեղ խնամով դրած են կարևորը, «Յիշատակ տեառն մերոյ» և «Յազագս յիշատակի», որպէս զի նոր յաւելուածի պէտք չլինի: — Զօրականաց ժամամտին բով Մանրուամունք լուսանցի մէջ կը յաւելու Սարգիս և Շապինյ, իմացնելու համար՝ թէ ըստ տօնին փոփոխելի են սրբոյն ու թագաւորին անուանքը: — Ղազարու երկրորդ ժամամտին բով գրչագիրք կը գրեն՝ Գերեզմանի, զի յատուկ էր գերեզմանօրհնէից (աստ, ԺԳ, 1), և երկու ժամամուտք միասին՝ աւելորդ են ու հակառակ բոլոր միւս տօնից: — Հրեշտակաց

առաջին ժամամուտը միայն ունին հին տօնացոյցը, որ կը վերջանայ ըստ գրչագրաց՝ «օրհնեցէք և բարձր արարէք յաւիտեան»։ Իսկ երկրորդ ժամամուտն է հարցնափառ, և ոչ յատուկ պատարագի։ — Նոյնպէս Սիմէոնի առաջինն է ժամամուտ. իսկ երկրորդը՝ տօնացոյցը կը նշանակեն իբր փառք ճաշոյ շարականին, կամ նախատօնակին՝ յետ շարականաց։ — Հանգանակին մէջ կարդալու է՝ «բարոզեաց յառաքեալսն», ըստ յոյն բնագրին, Ներսէս Շինողի առ Յոյնս թղթին, (Սերէոս, Գ, 1Գ), Լամբրոնացւոյն (Պատր. 209), Ստոյ 1342ի ժողովին (Mansi, ԻԵ, 1270), ու գրչագրաց ոմանց. և կը նշանակէ՝ թէ Ս. Հոգին բարոզեց առաքելովը, կամ առաքեալը խօսեցան ու գրեցին Հոգւովորով ճշմարտութիւն մ'աւելի կ'ունենանք Հանգանակին մէջ։ — Ողջոյն տուրք բարոզին մէջ՝ «և որք ոչ էք կարող հազորդել աստուածային խորհրդոյս և սոս դուրս եք, աղօթեցէք», ըստ 1284ի օրինակին, որ կը ներկայացնէ արդի ձևին առաջին ու հարագատ ընթերցուածը<sup>1</sup>. Իսկ «առ դուրս

1. Խոսքովու օրով կ'ըսէին. «Որ ոչ կարող էք հազորդել՝ ի միմեանց ուսարուք, և առ գրուես աղօթեցէք»

կէր» հակառակ է պատմութեան ալ, ըստ որում ապաշխարողը կ'ելնէին՝ «Մի որ յերախայից» քարոզով: — Հոգւոյն սրբոյ կոչման բանաձևին երիցս կրկնութիւնը և ամբողջ վերջին տունը նորահնար են, անդէպ և աւելորդ՝ եթէ կոչումն հարկաւոր մասն է խորհրդոյն, ինչպէս Ասէր կերայքը՝ չի կրկնուիր. և հակառակ յոյն ու հայ սուրբ Հարց աւանդածին. և է գիւտ բիւզանդական հերձուածամտութեան, ինչպէս իրաւամբ կը դիտէ Հ. Գաթրճեան (Սրբ. Պարգ. 143, 160), որ մեր զրչագրաց մէջ հազիւ ժե դարուն կը սկսի երևիլ ըստ բնութեանս: — «Սրբուքիւնք սրբոց» և ոչ «ի սրբուքիւն սրբոց», զի իմաստն է՝ թէ «Սրբուքիւնք սրբոց վայելեն», ինչպէս արդեամբք ալ կ'ըսէին երբեմն Ասորիք ու Հայք, և կը գրեն Մանդակունին (177, 168), Խոսրով անձեացի (57) և այլքուր Յոյնք զանց կ'ընէին «վայելեն» բայը, գրելով «Սրբութիւնք սրբոց» (Հ. Գթրճ. 169): — Ի սուրբ ի սուրբի մէջ՝ «յոյս յարուրեան», փոխանակ «յոյս, յարու-

(20). Իսկ Ամբրոսիոսի ըով կը կարդանք այսպէս. «Որք ոչ կարացին հաղորդել աստուածային խորհրդոյս՝ և առ դուրս են, ազօթեցեն» (213).

թիւն» . զի յօրինուած է Յիսուսի խօսքին վրայ՝ թէ «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ... ես յարուցից զնա յաւուրն յետնում» (ՅՏ. 9, 55), ինչպէս կը կարդան ու կը մեկնեն խոսքով (59), Լամբրոնացին (222, 481) և այլք . և որ լաւագոյն է անշուշտ քան անորոշ «յոյսը» : — Ճաշակմանէն յառաջ երեք աղօթք կան, որոց վերջին երկուքը զոնօքեան են բովանդակութեամբ . և հին գրչագրաց մէջ զետեղուած խորհրդատետրին ծայրը, զորս վերջին անհմուտ գրիչը ներս են մուծեր, ճաշակելէն յառաջ գոհանալ տալով մեզ : Ասոնք կրնան իրենց տեղը դառնալ :

Այսպիսի մեծ կամ փոքր, բայց բնագրաց ճշդութեան կողմանէ միշտ կարևոր փոփոխութիւնը՝ այս տեղ ցուցածներէս շատ աւելի են, որոցմէ ես ինքս չափով մը նշանակած ունիմ քովս :

4. — Վերջապէս կը հաւատամ՝ թէ ծիսական ժողովը զերծ պիտի մնայ նաև՝ մեծ թէ փոքր խնդրոց մէջ՝ աւանդութեան կամ վարժութեան կապերէն, որոնք վրտանգաւոր են իւր գործին, առաջնորդ առնլով նախ Սիւնհոգոսին գծած ազատական ծրագիրը . և յետոյ՝ անոր օրինակն

իսկ, որով հաստատեց Մաշտոցի մէջ նորամուտ մկրտութեան օրէն ու օծումն՝ որ երբեմն ի գործածութեան էր առ նախնիս (հ. 387), առ ոչինչ զրելով երկար դարերու անոր դէմ ստացած բռնակալ իրաւունքը: Նմանապէս վերահաստատեց Խաղաղութեան ողջոյնն ի պատարագի՝ ժողովրդեան կողմանէ (հ. 638), և Մասին բաշխումը (հ. 589), որոնք Մարուշեան Նախագահին խնդրանօր արդէն Ս. Աթոռին հաւանութեան ալ արժանացած էին (էջ 678), բայց անգործադրելի մնացած՝ գէթ հասարակաց սովորութեան մէջ:

Այս ուղղութեամբ երբ սրբագրուին ու ճշդուին ծիսական մատեանը, պիտի ունենանք՝ զոնէ անոնց մէջ՝ ծէս մը կաթողիկեայ և միանգամայն գերազանցօրէն հայ՝ քան ամէն հայ կոչուած կամ համարուած արդի ծէս: Այս ինքն համեմատ Ս. Աթոռի և Սիւնհոդոսի նկատածին ու պահանջածին:

---

## Դ

## ՄԵՐ ԾԷՍԸ ՆԵՐԿԱՅԻՍ

Հարկադրեցայ ըսել՝ թէ յիշեալ գործով մեր արարողութիւնը պիտի գտուին «գոնէ ծիսական մատենից մէջ»։ Վասն զի, ինչպէս առիթ ունեցայ ակնարկելու կանխաւ, մեր հայ կաթողիկեայ ծիսին այժմեան խանգարումը շատ աւելի ընդարձակ է։ Խանգարում կը կոչեմ, չչփոթելու համար զարգացման հետ, որ ընդունուած է բոլոր ծիսից մէջ, և որ կը կայանայ՝ հարազատի նկարագիրն անարատ պահելով, զայն ճոխացնելու մէջ։ Մեր ծիսի այլայլումն այդպէս չէ. այլ շատ ընդարձակ և անհարկի ներմուծումն արտաքին տարրին՝ արտաքսմամբ տոհմային կամ խառնակմամբ։ Որուն նայելով զիտակից ակնարկող մը, գուցէ պիտի վարանի պահ մը հաւատալու՝ թէ մեք տասնուհինգ դարերէ ի վեր ի լոյս աւետարանին բնակող հասարակութիւն մ'ենք սեպհական ծիսով։

Այս բանիս մէջ իրենց բաժինն ունին մեր դաստիարակութիւնը, ներքին վրդովումներ, և արտաքին ազդեցութիւնը (Սիւնհ. հ. 617): Տարբեր հանգամանաց ու հոգեբանութեան ներքեւ ապրեք ու վարուեք են իրենց ծիսին հետ ուրիշ կաթողիկեայ արեւելեայք՝ որ մեր շուրջ կը բնակին: Ս. Աթոռին սահմանն ինքնին՝ թէ «արեւելեան ծէան ընդ լատինականին մի՛ խառնեացի», կը մատնէ վիճակ մը՝ յորում արդէն կը գտնուէր մեր արեւելեան ծէսը, և կը թելադրէր այդ արգելքը, որ չէր նախապահեստ մը միայն: Ես պիտի գծեմ այս տեղ այդ վիճակը՝ յորում դեռ կը գտնուի մեր ծէսը, ատաղձս առնլով զլիսաւորապէս Սիւնհոդոսի գործերէն, որպէս զի որոշ և հրահանգիչ պատկեր մ'ունենանք մեր առջև:

1. — Կան ներմուծութիւնք՝ որ «նշանակ» են մեր կաթողիկէութեան, ինչպէս կը զիտէ Սիւնհոդոսը (հ. 638), համաձայն Մարուշեան Նախագահի բացատրութեան, զոր անոր օրով կը հաստատէր և Ս. Ժողովն Տ. Հ. (էջ 677): Եւ են՝ յաւելուածն «և յՈրդոյ» Հանգանակին մէջ. — յիշատակութիւն Ս. Քահանայապետին



ի պաշտամունս. — խառնումն ջրոյ ի բա-  
ժակն. — բարձումն Սր. Աստուածէն «որ  
խաչեցար վասն մեր » յաւելուածին. —  
ծննդեան տօնն ի 25 դեկ. հանդերձ տե-  
ղափոխութեամբ կցորդ տօներուն. — և թիւ  
պատարագ (հ. 638, 639, 679, էջ 676-7).  
Թէպէտ վերջինս լատին ազդեցութեան ար-  
դիւնք չէ՝ գէթ իւր սկզբնաւորութեան մէջ  
Հայոց բով (աստ, ժ, 3):

2. — Կան՝ զորս պատշաճութիւնն իսկ  
մուծեր է մեր արարողութեան մէջ. զոր  
օրինակ եպիսկոպոսական խոյրն ու գա-  
ւազանը, և պատրիարքական պալիունը,  
զորս Քահանայապետը նուէր յղած են,  
սկսեալ ժ. դարէն, մեր՝ կաթողիկոսաց  
ու եպիսկոպոսաց՝ առ ի գործածութիւն  
(աստ ժ, 17). և որոնք բնական էր որ  
այն ժամանակներէն ի վեր ձուլուէին հայ  
ծիսին մէջ, բաց ի պալիունէն՝ որ ամէն  
պատրիարքի նոր պիտի շնորհուէր:

3. — Կան՝ որ ստիպողական կը կար-  
ծուին Սիւնհոգոսէն, ինչպէս Եւզինէոս Գի  
առ Հայս նշանակած խորհրդոց ձևերը (հ.  
636), և որոյ համար իսկ գուցէ յառաջ  
կը բերուին Չեանաղբութեանց և վերջին  
օժման. գլխոց մէջ (հ. 514, 498). կամ

արևմտեան ծնրադրութիւնը պատարագ-  
չէն, զոր Սիւնհոդոսը կը հիմնէ Գրիգոր  
ԺԶի բաղձանաց վրայ (հ. 638): Այս  
խնդրոց պիտի վերադառնամ ընդարձա-  
կօրէն:

4. — Կան՝ որ «յոյժ օգտակար են  
յաստուածպաշտութիւն» . ինչպէս ջուր,  
աղուհացից մոխիր ու ծաղկազարդին ար-  
մաւենի օրհնելու արևմտեան կանոնները,  
որոնք անգամ մը մեր մէջ մտնելուն պատ-  
ճառաւ՝ Ս. Աթոռէն թելադրուած են պահ-  
պանուելու (հ. 637, էջ 679): — Ասոնց  
կարգին կրնան հաշուիլ՝ նաև տեառնըն-  
դառաջի մումերն ու միտալը (հ. 591), և  
օրհնած ջուր առ դրան եկեղեցւոյ (հ. 656),  
փոխան գաւթի հին աղբիւրին՝ յատուկ  
հայ և միւս ծիսից. և որոնք մուտ գործեր  
են ու կը պահուին առանց արտաքին ստիպ-  
ման, թէև այդ բոլոր նորութիւնք ամբողջ  
հայ ուղղափառ եկեղեցեաց մէջ չգործա-  
դրուին այսօր: Այս խորհրդականաց ներ-  
մուծութեամբ՝ կը վտարուին բուն տոհ-  
մայինը ոմանք. ինչպէս են խաչալուայն,  
թէև կանոնը դեռ կը մնայ Մաշտոցին  
մէջ, օժմոռնք ոտնալուայի և ննջեցելոց  
(հ. 507, 506), որոց մասին առանձին  
պիտի խօսիմ:

Մեծապէս դիտելի է՝ որ այսպիսի փոխառութեանց կամ թօթափմանց «օգտակարութիւնը» մեր չափով չեն զգացած ուրիշ կաթողիկեայ արևելեայք, մանաւանդ Յոյները. գուցէ խորհելով՝ թէ ամէն ծէս իւր յատուկ օգտակարութիւնըն ունի. և եթէ թոյլ տրուէր զանոնք բոլորը փոխառուել, դժուարին պիտի լինէր ծիսից խառնուժը խափանել:

Ծ. — Կան որ ընդունուեր ու պահուեր են՝ նոյն իսկ հակառակ Ս. Աթոռոյն յայտնի հաճութեան: Այսպէս Ս. Ժողովն Ն. Հ. 1833ին ազատութիւն կու տայ չպատարագել՝ ըստ հին կարգաց Եկեղեցւոյ՝ Առաջաւոր ու Քառասնորդական պահոց որոշեալ օրերուն. և կը հաստատէ՝ թէ հաւատացելոց հաղորդութիւնն ընդ կրկին տեսակօք՝ «չէ արգելեալ» (էջ 677, 678), ինչ որ 1890ի Սիւնհոդոսը փորձեց նորոգել, թոյլ տալով սարկաւազաց. ուր վերջին Սիւնհոդոսը կ'ամբասանդէ ասոնց ներհակ սովորոյթները (հ. 638, 427): — Մինչդեռ նախ իննսովկենտ Գ. 1246ին առ Հայս գրածով (Գիրք բղրոց, 506) և ապա Յովհաննէս ԻԲ (Պալճեան, 69) կը բաղձային՝ որ Հայք Գրոշմի տուչութիւնը եպիսկո-

պոսաց թողուն, ընդ հակառակն Եւզինէոս Գ (Սիրնհ. էջ 600) և ուրիշ Քահանայայպետք (հ. 398) ճանչցան արևելեան քահանայից զրոշմելու իրաւունքն՝ առանց որ և է սեղմըման, այսու հաստատելով՝ թէ ծիսական փոփոխութիւնք, թելադրուած երբեմն նոյն իսկ Ս. Աթոռէն՝ ժամանակի համոզմամբ կամ պահանջմամբ, կրնան նաև վերադառնալ հարազատ ձևին: Իսկ Սիրնհողոսը սեղմեց մեր ազատութիւնը, արգելլով զրոշմել արտաքոյ մկրտութեան՝ առանց հրամանի եպիսկոպոսաց, և ուզելով որ այդ պարագային աւելի ասոնք զրոշմեն (հ. 399):

6. — Կան՝ որ «էութեան ծիսին ոչ ինչ ստնանեն, զի միայն պաշտամունք են ջերմեռանդականք», կ'ըսէ Սիրնհողոսը. ինչպէս իննօրեայ մաղթանք Ս. Կուսին ու Սրբոց, ճանապարհ խաչի և այլ այսպիսիք, որոց մուտքը «թոյլ տուեալ է» և եպիսկոպոսաց ազատութեան թողուած (հ. 612): Այս կարգէն կրնանք համարիլ մեր նաև Մայիսի պաշտօնը, հասարակաց Վարդարանը, Հրեշտակային ողջոյնը (հ. 827), Օրհնութիւնը Ս. Խորհրդով ու Քառասնածամ պաշտօնը (հ. 637): Ասոնք՝ ստոյգ

է՛ մեր ծիսին «ոչ ինչ ստնանեն» . մանաւանդ երբ իսկապէս արարողական մասանց միջէն թօթափունն եկամուտ նորութիւնք : Միանգամայն դիտելի է՛ որ հրեշտակային ողջունէն և Ս . Խորհրդով օրհնութենէ զատ՝ միւսները բոլոր հայ կաթողիկեայց մէջ գործածական չեն :

Սակայն դժուարին կը թուի՛ թէ չըստնանեն հայ ծիսին նաև Պատարագի Եւ մի ոմն ի գիւնուորացը , և Խոստովանիմ , Ողորմեսցի և Տեր չեմ բառական փոխառութիւնք հազորդելու պահուն , և կամ վերջին յաւելուածական ծնրադիր աղօթքը , որ դեռ նոր մտաւ Պոլսոյ վիճակին մէջ , թէև Սիւնհոդոսը զայդ չէ հաստատած : Ներելի՞ է ծիսական անխառնութեան կանոնէն ազատ նկատել , և ամէն նորաձևութեանց հանդիսարան ընել թիւ պատարագը , որ սակայն նուազ հայկական չէ քան զձայնաւորը (աստ , Ժ , 3) :

7. — Կան՝ որ կատարուեր են՝ հին կամ նոր ժամանակներ՝ առանց որ և է հարկի կամ օգտի . այլ կամ համակրութեամբ նոյն նորութեանց , կամ անգիտութեամբ ազգայնոց , կամ ազդեցութեամբ արևմտեան քարոզչաց : Այսպիսիք են եկե-

դեցեալ ճարտարապետական ձևը. — բեմին սանդղաձև ճակատը՝ զոր կ'ուղղէ Սիւն-հոգոսը (հ. 656). — սեղանոց դիրքը, ձևն ու զարդերը. — եպիսկոպոսական աթոռին դիրքը. — ամբոնը, մանաւանդ իւր ընդհանրացումը (անդ). — պատարագի արարողութեանց ինչ ինչ մասունք, և առաւելապէս քահանային շարժումները, որք թէ սովորութեան և թէ Հասունեան խորհրդատետրի մէջ մեծաւ մասամբ նմանութիւն են արևմտեայց, ինչպէս ցոյց պիտի տայ հին գրչագրաց համեմատութիւնը. — եպիսկոպոսաց զգեստաւորութիւնը սեղանին ըով՝ փոխանակ աւանդատան մէջ, աղօթաւայրը ծառայութեան տեղի ընելով. — ս. նշխարի բեկումն յերիս, ու մանր նշխարաց գործածութիւնը նոյն իսկ առանց հարկի. — անձին տեսնազրութեան և օրհնելու ձեւերը. — լատինակերպ ծնրադրութիւնը նաև արտաքոյ պատարագին ու բոլորէն. — ուսանոցը՝ Ս. Խորհրդով օրհնութեան առթիւ (հ. 643). — եկեղեցականաց արտաքին պարեգօտն ու գղակը. — եպիսկոպոսաց լանջախաչը. — ինչ ինչ խառնուրդներ առ հասարակ խորհրդոց և օրհնութեանց կարգերու մէջ. — լատինացումներ

քահանայական աստիճանաց թուոյն և տու-  
չութեան եղանակին մէջ, և այլն: Ասոցմէ  
ոմանց մասին ևս պիտի խօսիմ աւելի  
վերջ:

Տ. — Հուսկ՝ արտաքին կրօնական հա-  
կառակութիւնք ալ իրենց բաժինն ունեցած  
են մեր ծիսի խանգարման մէջ, և համայն  
ազգին վրայ: Այսպէս՝ ապացոյց ունիմ  
հաստատելու՝ թէ պատարագի անջուր բա-  
ժակն ոչ թէ Լուսաւորչէն, ինչպէս կար-  
ծուած է սովորաբար, այլ քաղկեդոնեան  
խնդրոյն պայքարէն կը սկսի: Եւ մեր քա-  
հանայական զգեստը, որ ըստ գլխաւոր  
մասանց (շուրջառ, վակաս, ուրար) նոր  
ասորականն է, դատելով մեր զրչագրաց  
պատկերներէն՝ ՓՁ դարէն վերջ փոխա-  
նակեց յունականին, որ մեր և Ասորոց  
ալ բնիկն էր ի սկզբանէ, ընդ հակառակն  
Յունացմէ առնելով ու քահանայականացը-  
նելով եպիսկոպոսական սաղաւարտը: Այս  
փոփոխութեանց վախճանն էր՝ Յոյներէն  
հեռանալ աւելի զգալի եղանակաւ, թէև  
սաղաւարտին նկատմամբ ներհակը պա-  
տահեցաւ:

Եւ մեր ծիսի սոյն վիճակն ինձ խորհել  
կու տայ թէ վաղեմի հնուքեան և սևա-

բատուրեան զեղեցիկ մակղիրները՝ զոր Սիւնհոդոսը կ'ընծայէ անոր, աւելի հնոյն վերաբերելու են. և միանգամայն, կը կըրկնեմ, կը սքողեն իրենց ներքև անոր ջերմ բաղձանքը՝ նորոյս ըստ կարի զգեցընելու վաղեմի նկարագիրն՝ ուստի հետացած է:

## Ե

### ԳԵՌԻ ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՈՒՂՂԵԼ

Արդարև Սիւնհոդոսը վերանորոգութեան գործը ծիսական գրոց մէջ կեղրոնացնելով, և միւս նորութիւնքն որ այսօր ի սովորութեան են՝ զրեթէ ամբողջովին արձանագրելով կամ վերահաստատելով, համոզուած եմ՝ թէ բոլորն անփոփոխելի ընել չուզեց, դատելով ծիսական խնդրոյն տրուած բացառիկ վիճակէն զոր տեսանք (աստ, 16), և ծիսական ժողովին համար գծուած սահմանէն՝ թէ պիտի հաւարէ ամենուստ եկած «զտարակուսանս և զվէճս



զխորագրոց և զայլոց որ ի ծեսն հայիցին» (հ. 614): Ինչպէս կը տեսնենք, շատ ընդարձակ է բացատրութիւնս. և Սիւնհոգոսին նշանակած կիտերը՝ բաց յէականաց՝ այդ քննութեան իբր ատաղձ համարել կուտայ քան հաստատուն կանոն: Այս տպաւորութիւնը կրեցի սիւնհոգական Հարց ոմանց հետ ունեցած խօսակցութենէս ևս: Եւ որովհետև յառնելի խնդրոց նկատմամբ Գերպ. Եպիսկոպոսաց կարծիքն ալ պիտի առնուի (աստ, 16), կը հետևի՝ որ անոնք պիտի կարենան նաև առաջնէն տարբեր կարծիք յայտնել, հիմնուելով կատարելի քննութեանց վրայ: Նմանապէս յաջորդ Սիւնհոգոսն ալ հաւասար իշխանութիւն պիտի ունենայ մեծագոյն մղում մը տալու ծիսական վերանորոգման (հ. 1006-7), ինչպէս փորձած էր ընել 1890ի Սիւնհոգոսը, որ՝ ինչպէս յիշեցինք՝ կը ստիպէր սարկաւազներն ու կիսասարկաւազներն հաղորդիլ՝ սուրբ մարմնոյն ստորին մասը թաթաւելով արեան մէջ. որոշեց լատինակերպ ծնրադրութեան բարձումը, և զբաւուրիչ ինչ ինչ սահմաններ (Գործք, 174), որոցմէ զոմանս յառաջ պիտի բերեմ իրենց կարգին:

Այնպիսի ժամանակ մը կ'ապրինք, ուր մեր դատողութեան ու տեսութեան հորիզոնն երթալով կ'ընդլայնի, նոյն իսկ արեւմտեան դաստիարակութեան ազդեցութեան ներքեւ, և արեւմտեան վարժարանաց մէջ իսկ, ուր կը տեսնենք՝ թէ ինչ մեծ կարևորութեամբ կ'աւանդուի Եկեղեցւոյ հին կարգաց և աւանդից ուսումն: Եւ սոսկ հետաքրքրութիւն կամ մտաւորական գրասանք մը չէ անշուշտ նպատակն ուսուցման այն արարողութեանց, որոնք «նոցին իսկ Առաքելոց և Հարցն սրբոց կիրարկութեամբ ազնուագոյն գործեալ են» (Լևոն ԺԳ): Սիւնհոդական Հարք՝ որ նոյն վարժարանաց օդը շնչեցին, հակառակ ուղղութեան մ'ապացոյցը չուզեցին անշուշտ տալ մեզ, եթէ հայ ծէսն իրենց վճռոց գոգն ամփոփելու շտապ գործողութեան մէջ ժամանակ չունեցան զայն ըստ բաւականին հասունացնելու: Ընդ հակառակն քաջ զգալի է իրենց մտածութեան լայնութիւնն որոշած նորոգութեանց և որոշելեաց համար թողած ազատութեան մէջ:

Այս պարագայն է՝ որ կը յորդորէ զիս քանի մը խնդիրներ յուզել հոս, աւելին թողլով այլոց կամ ուրիշ առթի, և են-

Թարկել նոյն ինքն Ամեն, Հոգ, Տեառն, Գերպ. Եպիսկոպոսաց և ծիսական ժողովոյն դատաստանին, որոց համար առաւելապէս կատարած եմ ներկայ աշխատութիւնս: Եթէ գտան ասոր մէջ որ և է պիտանի բան, ուրախութիւնը պիտի ունենամ՝ Եկեղեցւոյ դոյզն ծառայութիւն մը մատուցած լինելու՝ ի փառս Աստուծոյ: Իսկ եթէ գտնեն հոն անճիշդն ու անդէպը, պտուղ մարդկային մտաց սահմանաւորութեան, կամ վրիպման ուշադրութենէս, անոնց առաջին սրբազրիչ ստորագրողս պիտի լինի:

## Զ

### ԵՒԳԻՆԵԱՆ ՎՃՌԱԳԻՐԸ

Սիւնհոդոսը խօսելով Հայրապետական Մաշտոցի պատրաստութեան վրայ, կ'ուզէ՝ որ միանգամայն «ամենևին իսկ համաձայն գտանիցի» Եւզինէոս Գի վճոց՝ որ տրուեցան Հայոց (հ. 636): Կոնդակիս ստի-

պողականութիւնն ի ձեռնադրութիւնս՝ ըստ ինքեան նոյնպէս կ'ենթադրէ զայն և այլ ամէն խորհրդոց ու խնդրոց մէջ: Անոր համար կարևոր կը համարիմ նախ նկատել հոս յընդհանուրս՝ թէ այդ վճիռք ինչ են, ո՛ւր և ո՛ր չափով ստիպիչ մեզ համար:

1. — Երբ մտադիր կարդանք յիշեալ վճռագիրը, զոր Սիւնհոզոսն յառաջ կը բերէ (էջ 592), երկու բան մեր ուշադրութիւնը կը գրաւէ. Քահանայապետին նպատակն ու հրամանին ոճը:

Գիտենք ի պատմութենէ՝ որ այդ շրջանին աշխարհիս ծանօթ և անծանօթ բոլոր մուրրութիւնը բարդուած էին Հայոց ուսերուն վրայ: Սոյ Զ ժողովն հարկադրուած էր 1342ին 117 մուրրութեանց համար պատասխան տալ Բենեդիկտոս ԺԻԻ: Ուրեմն զարմանալի չէ՝ որ Փլորենտեան Հարբ յորդորուեցան ու մեր պատգամաւորաց բերանէն «քննեցին զհաւատս նոցա՝» Աստուծոյ, Երրորդութեան, մարդեղութեան, խորհրդոց և ուրիշ հաւատալեաց ու ծիսից մասին (Սիւնհ. էջ

1. Mansi, *Sacr. Concil. nova Coll.* ԻԵ, 1186-1270.

593): Եւ որպէս զի անոնց հաւատքն ամէն ծփանքէ զերծ մնար, Քահանայապետը պատշաճ կը դատի համոտօտել անոնց «զճշմարտութիւն կաթողիկեայ հաւատոց՝ զոր խոստովանի Եկեղեցին Հռոմայ ի վերագոյն յիշատակեալսն» (594): Ապա կուտայ հաւատոց մասունքը, և յետոյ կ'անցնի ամփոփել «զճշմարտութիւն խորհրդոց եկեղեցոյ՝ ի դիւրընկալ վարդապետութիւն Հայոց», այդ ճշմարտութիւնը նախ կայացընելով խորհրդոց բռնոյն, արդեանց, և վաւերականութեան համար հարկաւոր եիւրիւն, ձեիւն, պաշտօնեիւն և անոր դիտաւորութեան մէջ (598-9). այս ինքն այն ընդհանուր գծերուն՝ որ կը վերաբերին խորհրդոց ետրեան, — առանց նայելու ծիսական խտրութեանց, — որոյ մէջ իսկ է իւր ուսուցած «հաւատքը», որ իւր միակ վախճանն է ամբողջ վճռագրին մէջ: Յետոյ նոյն սահմանը մերձեցնելով իւրաքանչիւր խորհրդոյն, որովհետև անոնց մասին յառաջ պիտի բերէր «Հռովմայ Եկեղեցոյն հաւատքը», շատ բնական էր որ անոնց իբր նիւթ ու ձև նշանակէր նոյն Եկեղեցոյ զործածածներն իսկ. կամ ըստ կղ. Գալանոսի ճշգրիտ բացատրութեան՝ «յանդի-

ման առնել նոցա զնիւթս և զձևս ըստ ծիսին՝ որ առաւել ծանօթն էր Լատինաց» (աստ, 67):

Քայց աղով կը ջնջէ՞ր կամ կը փոխանակէ՞ր Լատինականօր՝ հայ նիւթերն ու ձևեր, որոնք ըստ էութեան սեպհական էին նաև ամբողջ արևելեան Եկեղեցւոյ, և որոցմով վարեր էին այնքան մեծամեծ Հարք արևելեայք՝ պաշտելիք նաև արևմտեայց: Գժուարին է այս հետևութիւնն հանել, ոչ միայն իւր նպատակէն զոր տեսանք, այլ իւր բանից ոճէն ալ: Եւ յիրաւի դիւրին է նշմարել՝ որ Քահանայապետն երկու լեզու ունի իւր վճռագրին մէջ՝ շատ աննմանք իրարու: Ուր կ'ուզէ որ Հայք ընդունին որ և է բան՝ տարբեր իրենց ունեցածէն, յայտնապէս կը հրամայէ զայն: Զոր օրինակ՝ յառաջ կը բերէ Լատին հանգանակը. բայց այդ չափով չի գոհանար, զի յիշեցնելն ստիպողական ընել չէր. այլ անոր հետ կը յարէ. «Հրամայեմք երգել կամ ընթեռնուլ յամենայն եկեղեցիս Հայոց», հանդերձ «և յՈրդւոյ» յաւելուածով (594): Խօսելով սուրբ բաժակի ջրախառնութեան մասին, կ'ըսէ. «Սահմանեմք զի և Հայք միարան լիցին ընդ համօրէն»

ըրիստոնեայ տիեզերս» (601): Իսկ խորհրդոց նիւթերու կամ ձեւերու նկատմամբ չկայ հրամայեմք, չկայ սահմանեմք. այլ պարզ յիշատակութիւն մը: Ինչ կը նշանակէ լեզուի այս տարրերութիւնը, եթէ ոչ՝ դիտաւորութեան իսկ տարրերութիւնը. անստիպողութիւնն այն բոլոր մասանց՝ որ հրամայեալ կամ սահմանեալ չեն իւրմէ:

Աւելին կայ: Խորհրդոց առաջնոյն վրայ խօսելու ժամանակ՝ լատին ձևին քով հայկականն ալ կը դնէ, այսպէս. «Ձև նորա է այս. Ես մկրտեմ զքեզ յանուն Հ. եւ Ռ. եւ Հ. Ս: Սակայն ոչ ժխտեմք՝ եթէ և բանիւքս այսոքիւք՝ Մկրտեացի այս անուն ծառայս Քրիստոսի յանուն Հ. եւ Ռ. եւ Հ. Ս. կամ Մկրտի այս անուն ծառայս ի ձեռս իմ յանուն Հ. եւ Ռ. եւ Հ. Ս. կատարի ճշմարիտ մկրտութիւն» (599): Ինչո՞ւ այս երկծէս յիշատակութիւնը: Յայտնի է թէ ադոնց մին, լատինականը, տեղեկութեան համար էր միայն: «Ոչ ժխտեմք», կ'ըսէ, հայկականին վաւերականութիւնը. ուրեմն կը հաստատէր և յուժի կը պահէր զայն: Այսպէս կը նկատէ Սիւնհոզոսն ալ, որով լատինականը դուրս թողեր է մկրտութեան նկարագրէն (հ. 379): Եստ բնական է

հետևցնել՝ թէ տեղեկութեան համար էր միւս լատին ձևոց յիշատակութիւնն ալ, քանի որ մի և նոյն տեղեկատու լեզուով յիշուած են՝ առանց հրամայականի: Եւ անոնց քով հայկականաց չյիշուիլը՝ կրնայ մեկնուիլ անով, որ առաջին խորհրդոյն մէջ հայուն յիշատակութիւնը բաւական համարուեր է յաջորդաց համար ևս: Վասն զի եթէ Սրբազանին նպատակը խորհրդոց լատին ձևերը մեզ տալ էր, պիտի չխտրէր մկրտութեան ձևը միւսներէն, որոնք քան զառաջինը նուազ ուղղափառական կամ աւելի հայկական չէին:

Գեռ աւելին կայ: Եւզինէոս երբեմն կը շատանայ ակնարկելով միայն. զոր օրինակ՝ յառաջ բերելով քահանայական աստիճանին բանաձևը, կը յաւելու. «Այսպէս մի ըստ միոջէ ձև այլոց աստիճանաց, որպէս ի հոռմէական հայրապետական մաշտոցին ընդարձակագոյնս բովանդակեալ կայ» (էջ 602): Նմանապէս մեղաց արձակման լատին ձևին կ'ակնարկէ միայն՝ ըսելով. «Ես արձակեմ զքեզ և այլն» (անդ): Ուրիշ ստիպողական մասանց համար չի ղրկեր զՀայս լատին ծիսարանաց, այլ ամբողջապէս յառաջ կը բերէ՝ «ի դիպրնկալ



վարդապետութիւն Հայոց», ինչպէս արեւմրտեան և Ս. Աթանասի հանգանակները, զորս կ'ուզէ «տալ» կամ «աւանդել»։ Գիտէր որ Հայոց համար լատինախօս մատեանքը փակ դռներ էին ու պիտի մնային. ուստի ամբողջ բնագրով կը հանէ անոցմէ ինչ որ կարևոր կը դատի, տալով մեզ հետեցնել՝ թէ կարևորաց կարգէն չէին՝ սոսկ ակնարկուած և կամ տեղեկութեան համար յիշուած բանաձևեր։

2. — Ս. Աթոռն ինքնին ստիպիչ իմաստով չէ առած անցելոյն մէջ Եւզինեան վճռագրին ոչ վարդապետական մասունքը։ Գիտենք՝ որ անոր բովանդակած կարգադրութեանց ի Հայս գործնական արդիւնք ունենալն յայտնի չէ (Պալճեան, 147—51), և ոչ ալ հաւանական, ոչ իսկ կաթողիկեայց մէջ. այնպէս որ Ս. Ժողովն Տ. Հ. 1833ին կը հարկադրէր ինքնաբերաբար պահանջել վերստին Մարուշեան Նախագահէն՝ ծանօթ վճռագրին իսկապէս ստիպողական կիտերը. այն է Քաղկեդոնի և միւս տիեզերական ժողովոց վճռոց ընդունելութիւնն իբր կանոն հաւատոյ, «և յՈրդոյ» յաւելուածն ի հանգանակին Հայոց, և եօթն խորհրդոց մէջ «ընկալցի

վերջին օժուժն և պարտուպատշաճ արարողութեամբ մատակարարեսցի» (էջ 676-7. հմտ. հ. 598, 602): Իսկ վճռագրին միւս մասունքը հարկ չի տեսներ պահանջել, ոչ լատին և աթմանասեան հանգանակները և ոչ խորհրդոց ձևերը: Եւ Մկերրոջին ծննդեան տօնն անգամ, Եւզինէոսէ նշանակուած Ի 24 Յունիսի (Պալճ. 132), Ս. Ժողովը թոյլ կու տայ կատարել ըստ հայ տօնացուցին յետ Յայտնութեան (էջ 679): Եւ այսու կը հաստատէ՝ թէ ժամանակի մը մէջ կարևոր համարուածը՝ կրնայ ուրիշ ժամանակի մը մէջ նոյնպէս չլինել ու չստիպել Ի պահպանութիւն:

3. — Հայ կաթողիկեայցս արդի սովորութիւնը և նոյն ինքն վերջին Սիւնհոդոսն ալ ըստ տառին կամ արտաքին ձևին չեն ընդունած Եւզինեան վճռագիրը: Վասն զի յամենայնի անոր «ամենեին իսկ համաձայն» երթալու համար՝ հարկ էր փոխել Գրոշմի բանաձևը լատինականի (էջ 599), ուր Սիւնհոդոսն անշարժ կը պահէ հայկականը (հ. 396): Հարկ էր փոխել նաև դրոշմելու եղանակը, զոր Եւզինէոս դնելով «Ի ճակատու» (էջ 600) և լռելով միւս անդամները, կը յիշեցնէ մեզ աներկրա-

յապէս լատինական ոճը, և եթէ հայկականին լոութիւնը մերժել նշանակէր, — և պէտք էր նշանակել, եթէ նոյնը խորհրդոց հայ ձևոց նկատմամբ մերժողական իմաստ ունենար, — Սիւնհոդոսը չպիտի հաստատէր մարմնոյ միւս մասանց օծումը (հ. 395): Եւզինէոսի՝ արձակման բանաձևէն կոչած բառերը՝ «Էս արձակեմ զքեզ և այլն» (էջ 602), անտարակոյս նոյնպէս լատինականէն են, թէև այդքանը հայկականին մէջ ալ կար. և սակայն Սիւնհոդոսն հայ բանաձևը կը հաստատէ (հ. 462): Եւզինէոս լատին հանգանակը կը հրամայէ պաշտել կիւրակէ և մեծ տօնից օրեր, հանդերձ «և յՈրդոյ» յաւելուածով (էջ 594). Իսկ Սիւնհոդոսն յաւելուածը կը հաստատէ (հ. 638) և հանգանակը զանց կ'ընէ:

Այդ բոլոր խնդրոց մէջ կ'երևի՝ որ Սիւնհոդոսը կը հետևի դարերու շրջանին մէջ հետ զհետէ հասունացած այն սահմանին՝ թէ «Որ և է փոփոխութիւն և խառնակութիւն ի սուրբ կանոնաց և յառաքելական սահմանադրութեանց արգելեալ է խստութեամբ». և կը պահանջէ՝ որ մեր պաշտօնեայր «բազում հաւաստեալ զգոյշ լիցին ի մատակարարութեան ամենայն իսկ

խորհրդոց, զի մի՛ բնաւ լըեալ զսեպհական  
 ծէսն, զայլոյ ծիսի զհետ երթիցեն, փո-  
 փոխելով ինչ կամ խառնակելով» (հ. 370):  
 Սիւնհոզոսի այս ուղղութեան մեծարանօր  
 միայն կրնանք նայիլ:

## Է

### Ս. ԿԱՐԳԻ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՅ ՕԾՄԱՆ ՆԻՒԹԵՐՆ ՈՒ ՁԵՒԵՐ

Սակայն Սիւնհոզոսը՝ Եւզինեան կոն-  
 զակի ամբողջութեան մասին այդքան ա-  
 զատութեամբ երթալէ վերջ, առանձնապէս  
 Ս. Կարգի տուչութեան մէջ կ'ուզէ՝ որ  
 «ամենայն ինչ ի հնագոյն ձև ամիցի, և  
 միանգամայն վճռոց Փլորենտեան ժողովոյն  
 որ վասն Հայոց՝ ամենևին իսկ համաձայն  
 գտանիցի» (հ. 636): Եւ ինքն իսկ կու  
 տայ այդ համաձայնութեան օրինակը,  
 Կարգի աստիճանաց նիւթ նշանակելով  
 լոկ սպասուց տուչութիւնը, յարակից բա-  
 նաձևով հանդերձ, և ի սպառ լոկելով ձե-

ոսաց զրութիւնը, իսկ Հիւանդաց օժման ձև՝  
լատինականը (հ. 514, 498), երկուքն ալ  
ըստ Եւզինեան կոնդակին (էջ 602):

Ինչո՞ւ այս բացառիկ վիճակը երկու  
խորհրդոց միայն, երբ ասոնց յիշատա-  
կութիւնն Եւզինեան վճռագրին մէջ՝ միւս  
խորհրդոց յիշատակութեան ոճէն տարբեր  
ու ստիպողական հանգամանք մը չունի,  
ինչպէս տեսանք. չգիտեմ: Բայց և այնպէս  
քննենք խնդիրը՝ որ շատ կարևոր է, տես-  
նելով նախ՝ թէ որո՞նք են Սիւնհոդոսին ու-  
զած «հնագոյն ձևը», և ապա խօսինք  
անոնց ընդ Եւզինեան կոնդակին համա-  
ձայնութեան վրայ:

Ա. — Կարգի եիւրև ու ձեւ: — 1. —  
Յայտնի է՝ թէ Քրիստոսի Եկեղեցին իւր  
ծագմանէն սկսեալ, երեք բարձրագոյն  
աստիճանաց աւանդման նիւթ ունեցեր է  
ձեւնադրուրիւնը, զայն ընդունելով իւր աս-  
տուածային Հիմնադրէն, ինչպէս կը հա-  
ւատանք այն ամէն նիւթոց ու ձևոց հա-  
մար՝ զորս Առաքեալը ստուգապէս գոր-  
ծածեր և աւանդեր են նոր կտակարանի  
մէջ: Եւ արդարև ձեռնադրութիւնն եղած  
է առաքելական միակ նիւթը՝ սարկաւա-  
զաց, երիցանց և եպիսկոպոսաց նուիրա-

գործման<sup>1</sup>։ Նոյնը ճանչցան ու դաւանեցին բոլոր ժողովները, սուրբ Հարբ և եկեղեցական պատմիչը՝ դարերու երկար շրջանին մէջ։

Անձանօթ է ձեռնադրութեան առաքելական բանաձևը։ Բայց աներկբայելի է՝ թէ այդ ձևը համաձայն էր նիւթին, անոր իմաստին թարգմանն էր, ինչպէս միւս խորհրդոց մէջ է։ Չեռնադրութեան ձևոց հնագոյն աղբիւրն են՝ ինձ ծանօթներէն՝ Սանմակարդուրիւնք Առաքելոց կոչուած կանոնք, որ կը համարուին խմբագրուած Գ դարու վերջը, և որ կարգի իւրաքանչիւր աստիճանաց աւանդման համար՝ եպիսկոպոսի «ձեռին դրութեան» հետ ունին այլ և այլ բանաձևեր, կամ լաւ ևս՝ աղօթքներ՝ աւելի կամ պակաս երկար, և յարմարած իւրաքանչիւր աստիճանին<sup>2</sup>։

2. — Առ ի չգոյէ առաքելական դ յայտնի

1. Գործք Առ. 9, 6. ԺԳ, 3. ԺԳ, 22. — Ա Տիմ. Ե, 22. Գ, 14. — Բ Տիմ. Ա, 6. վիճարանութեան նիւթ է պարզապէս, և մեզ համար աւելորդ քննել՝ թէ Յիսուս երբ կամ ինչպէս աւանդեց աշակերտաց Ս. կարգը։ Այս ստոյգ է՝ թէ Առաքելք որ ձեռնադրութեան հետեւեցան, քան զմեզ լաւ կը ճանաչէին Յիսուսի գործն ու կամքը։

2. Գործք Բ. Եպոսի. Գ, Քհի. ԺԶ, Սրկի. ԺԷ, Կիսրկի. ԻԱ, ևն.

ձևերու, պէտք զգացուեցաւ յիշեալ տարտամ աղօթից յաջորդեցնել համառօտ ու ճշգրիտ ձև մը, որ լաւագոյնս մեկնէր ձեռնադրութեան իմաստը: Անոր համար բիշ վերջ Յունաց բով կը գտնենք երեք վերագոյն կարգերուն յատուկ՝ հետեւեալը, զոր Հ. Գոյար յառաջ կը բերէ յոյն Մաշտոցի հրատարակութեան մէջ<sup>1</sup>, ըստ հին գրչագրաց. «Աստուածային շնորհ, որ միշտ զհիւանդս բժշկէ և զթերիսն լնու, կոչէ զայս անուն բարեպաշտ կիսասարկաւագ ի սարկաւագ (կամ զսարկաւագ ի քահանայ ևն). արդ աղօթեցուր վասն սորա, զի եկեսցէ ի վերայ սորա շնորհ ամենասուրբ Հոգւոյն» (էջ 208, 242, 243): Չեւ ծանօթ է արդէն Ս. Մարսիմոսի, վախճանեալ 662ին, որուն կ'ակնարկէ՝ համառօտեալ բառերովս. «Աստուածային շնորհ կոչէ զայս անուն յայն ինչ» (անդ, 214). հետեւաբար բանաձևս քան զինք կանուխ էր, որուն կը թուի ակնարկել Ոսկերեբան ալ, երբ կ'ըսէ քահանայութեան ճառին մէջ. «Բազումք ի ձեռնադրութեանց ոչ յաստուածային շնորհաց, այլ ի հնարից մարդկան եղեն» (անդ, 215):

1. Goar, Rituale Graecorum, Venetiis, 1780.

Եթէ ստոյգ է՝ թէ ՅՏ. Մանդակունին յօրինեց երեք վերին աստիճանաց ձեռնադրութեան հայ կարգերն՝ ըստ Ասողկան (Բ, Բ) և Վարդանայ (ԻԸ), ուրիշ ապացոյց մը պիտի լինի այս՝ Ե դարու մէջ յունական ձեին գոյութեան, որոյ ազդեցութեամբ հնարուած է հայ ձեռն ալ, ազատ թարգմանութեամբ և կամ մեզ անձանօթ բնագրէ մը: Եւ զոր յառաջ կը բերեմ Ս. Ղազարու երիցագոյն օրինակէն, որ է ԺԱ դարու գրչութիւն, — այլ ոչ անսխալագիր, — յոյնին հետ կցորդութիւնը ցոյց տալու համար: Եպիսկոպոսը, կը գրէ այն, «դնէ զաջն ի վերայ գլխոյն», ոչ երկու ձեռները, և կ'ըսէ այսպէս. «Աստուածային և երկնաւոր շնորհն, որ միշտ և հանապազ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան կաթողիկէ եկեղեցւոյս, կոչեն զայս անուն ի դպրութենէ ի սարկաւազութիւն, Տեանն ի ծառայութիւն և սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն, ըստ վկայութեան անձին իւրում և ամենայն ժողովրդեանս: Ես դնեմ ձեռն ի վերայ, ազօթս արարէք ամենեքեան, զի արժանի լիցի զաստիճան սարկաւազութեան անարատ պաշտել առաջի Աստուծոյ և սրբոյ



սեղանոյս զամենայն աւուրս կենաց իւրոց» ։  
 Գրեթէ նոյնպէս է քահանայական ձեռնա-  
 դրութեան մէջ ալ (եպիսկոպոսականը կը  
 պակսի հոն), և թեթև վերածում մը կը  
 կրէ յաջորդ զըչազրաց մէջ, կազմելով  
 այժմու ձևը ։

Յ. — Սպասուց աւանդումն՝ յարևմուտս  
 անգամ անձանօթ ժ. դարէն յառաջ<sup>1</sup>, տա-  
 կաւին զոյութիւն չունի հող, ոչ ալ Լամ-  
 բրոնացւոյն նկարագրին մէջ (Պարգ. 205  
 -6, 213), ոչ 1248ի ձեռնադրութեան  
 տեսրակին, կամ Ս. կոստանդնի քեոորդ-  
 ւոյն՝ Նիկաւլայոս «սարկաւազի»<sup>2</sup> օրի-  
 նակին մէջ, գրուած հաւանօրէն նոյն դա-  
 բու վերջը, երկուքն ալ ի Ս. Ղազար ։  
 Հետևարար բարեմիտ ու ձրի ենթադրու-  
 թիւն մ'էր Ստոյ 1342ի ժողովին զբաժը՝  
 թէ Հայք «գրեաթէ ի հարիւր ամաց հե-  
 տէ» կը գործածէին անօթոց տուչութիւնն՝  
 յարակից բանաձևովք, սարկաւազի ու քա-  
 հանայի ձեռնադրութեան մէջ, առնլով  
 Հոովմէական եկեղեցիէն (յօդ. Ղ.Բ) ։ Մեր

1. Card. Van Rossum, *De Essentia Sacr. Ord.*  
 Roma, 1914, էջ 135.

2. Այն որ յետոյ «քահանայ», 1314ին կ'օրինակէ  
 պատարագաց լիոնեան բնագիրը ։

աղբերք չեն արդարացներ հարկւր տարին, որոց մէջ ժողովդ առաջին վկայն է նոր սովորութեան, գէթ իւր օրով գոյութեանը. և երկրորդը՝ Ստոյ 1345ի մաշտոցն է, շարադրուած կամ գաղափարուած Եւզինեան կոնդակէն 94 տարի կանուխ, որ անօթոց տուչութիւնը կը ներմուծէ լատինականէն՝ հետեւեալ ոճով:

Եպիսկոպոսը նախ կը ձեռնադրէ հայկական հին բանաձևով՝ զնուիրեալը, որ այդու իսկ արդէն սարկաւազ կամ քահանայ է, ինչպէս կը տեսնուի անոր անմիջապէս յաջորդող աղօթքէն ալ՝ թէ հին և թէ նոր կարգադրութեանց մէջ. «Հայեաց հաշտ ահամբ... ի ծառայս քո այս՝ որ ձեռնադրեցաւ այժմիկ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյ քո» (Սրկ.), և կամ «ընկալար զծառայս քո ի քահանայութիւն զձեռնադրեալս այժմ» (Քահ.): Եւ յետ զգետաւորութեան և օժման՝ կը յանձնէ նուիրելոյն «զմաղզմայն տէրունական մարմնովն և զսկին արեամբ», և կ'ըսէ. «Առեալ ընկալարո՛ւք. քանզի առէք կարողութիւն շնորհօքն Աստուծոյ կնքել և կատարել զսուրբ պատարագս յանուն Տեառն մերոյ՝ կենդանեաց և մեռելոց»: Եւզինեան և

այժմու լատին ընթերցուածն է՝ «Ա՛ռ կարողութիւն» ևն՝ ներկայ ժամանակաւ. իսկ հայն այնպէս յօրինեք է՝ որ «առեալ ընկալարո՛ւք»՝ նուիրաց պատշաճի, և անոր քով կէտ կը դնէ. յետոյ կը յաւելու անցեալ ժամանակաւ կամ պատմական ձևով, «քանզի առէք կարողութիւն» ևն: Այս ինքն՝ թէ այս զործով նոր իշխանութիւն չեմ տար, այլ Սրբութիւնը կը յանձնեմ, որովհետև արդէն կանխաւ առիք ձեռնադրութեամբ՝ զայն նուիրագործելու կարողութիւնը: Այս էր նոր բանաձևս ընդունողաց իմացումն ու նպատակը. արարողական յաւելուած մ՛ընել, բացատրութիւն մը տալ ձեռնադրութեամբ արդէն ընդունուած իշխանութեան. ինչպէս աւելի ուշ, ժեղարու վերջերը, պիտի առնուէր արևմուտքէն ուրիշ բացատրութիւն մ՛ալ, արտայայտող մեղաց թողութեան կարողութիւնը<sup>1</sup>, զոր իսկապէս ձեռնադրութիւնն իսկ կու տար յառաջ և կու տայ ցարդ: Սպասուց աւանդման նոյն ձևն անփոփոխ

1. Այդ մասը նախ կապուած է զօտւոյն տուչութեան հետ. յետոյ կը զատուի, ինչպէս է Ա՛հնեակոյ տպագրին մէջ ևս ուր Հոսովմայ օրինակը թէ զօտւոյն հետ և թէ առանձին կու տայ նոյն իշխանութիւնը՝ կրկին անգամ,

մնացած է 1401ի և այլ հետագայ օրինակաց մէջ ևս, յետ Եւզինեան կոնդակին ալ, ու մինչև ցարդ<sup>1</sup>, և նոյնպէս հասկացած ենք մեր ևս. այս ինքն ևս և ինձ պէս հարիւրաւորք զորս կը ճանաչեմ, և որոց հետ առիթ ունեցած եմ խօսելու այս մասին: Նոյնը կը հաստատէր նաև 1890ի ազգային Սիւնհոդոսը՝ սա խօսքերով. «Վասն ձեռյ և նիւթոյ խորհրդոյ կարգի թէպէտ և տարբեր իցեն կարծիքն, այլ չիք երկբայուարիւն քէ ըստ մեզ՝ կուրիւն խորհրդոյն և ի ձեռնադրուքեան անդ, հանդերձ զուգակից բանիւք. Աստուածային և երկնաւոր շնորհ...: Այլ յապահովութիւն<sup>2</sup> պահեսցի անփոփոխ տուչութիւն սպասուց կամ գործեաց և օծումն, որպէս ի հաւանեալ ծիսարանի աւանդեալ գտանի» (Գործք, 29): Թէպէտև, կը կրկնեմ, սպասուց տուչութիւնը մեզ ծանօթ այժմու ձեռով՝ որ և է արդիւնը չի կրնար ունենալ կարգի աւանդման մէջ. ու կրնանք

1. Գիրք աստիճան տալոյ. Կ. Պոլիս, 1752. – Գիրք կարգաց ևւ ձեռնադրուքեանց, Վ. Ենեաթիկ, 1878. – Գիրք ձեռնադրուքեանց Հոսովմայ, զըչագիր, որոյ նման լինելու են միւս թեմերունն ալ:

2. Բայց ինչո՞ւ «յապահովութիւն», եթէ «չիք երկբայութիւն»:

ըսել՝ թէ Եւզինեան ձևն ու գաղափարը  
դեռ չեն մտած մեր ծիսական գրոց մէջ:

4. — Իսկ ի՞նչպէս հասկացած են ու  
կ'իմանան Լատինք: ԺՊ, հետագայ և ա-  
պագայ բոլոր դարերու աստուածաբանից  
պետը՝ Ս. Թովմաս՝ այսպէս կ'ըսէ. «Իբու-  
թիւն ձեռաց՝ ... ի խորհրդեան կարգին  
շնորհէ գերազանցութիւն իմն կարողու-  
թեան ի գաղանխան աստուածայինս. վասն  
որոյ և առ Տիմոթէոս ասի. Արծարծեսցես  
զշնորհան Աստուծոյ՝ որ են ի բեզ ի ձեռ-  
նադրութենէ իմմէ»: Ուրիշ մեծ վարդա-  
պետ մը նոյն դարու՝ Ս. Բոնաւենտուրա՝  
կը գրէ հետեւեալը. «Ի սուրբ կարգս որ-  
պէս զի տացի իշխանութիւն ազնուական  
և գերազանց, յիևի դրոշքիւն ձեռաց, և ոչ  
սպասուց ևեթ աւանդումն. քանզի ձեռն և  
սպասուց սպաս, այս ինքն ի նմին բնակե  
զիխաւորացես կարողութիւն տարոյ զկարգ,  
ոյր աղագաւ այսպէս աւանդէին զկարգն  
ի նախնի եկեղեցւոջ» (առ Գոյարի, 214):  
Այսպէս սպասուց տուչութիւնն արդէն կար  
այդ շրջանին յարեմուտս, բայց դեռ չու-  
նէր այն մեծ կարևորութիւնը՝ զոր ստա-  
ցաւ Եւզինեան կոնդակով, յորում սա միայ-  
նակ նշանակուած է իբր ձեռնադրութեան  
նիւթ:

Սակայն ոչ միայն արևելեան, այլ և արևմտեան եկեղեցին անշարժ պահեց նախկին հաւատքը, այլազգ մեկնելով Եւզինէոսի բանից ոյժը: Իւր յաջորդներէն մին, գերիմասան Բենեդիկտոս ԺԴ, պատասխանելով անոնց՝ որ եւզինեան վճռով՝ ձեռնադրութեան կարողութիւնը սպասուց փոխանցուած կը համարէին, բացէ ի բաց կը մերժէ այդ տեսութիւնը, զրելով այսպէս. «Ասասցեն հակառակորդը, ո՞ւր և ե՞րբ, յորձւմ դարու, յորձւմ ժողովի, յորմէ՞ Քահանայապետէ լեալ իցէ այդպիսի փոփոխումն: Ապաքէն եթէ եկեղեցի յարարողութենէ տուչութեան կարգին ի բաց հանեալ էր զայն՝ որով վարէին ի վաղընջուց, արդարև հարկ լինէր հաստատել թէ նիւթ և ձեւ ձեռնադրութեան իշխանութեամբ եկեղեցւոյ փոխանակեալը իցեն ընդ նորոց: Ապա եթէ ամենայն որ ինչ ի հին մաշտոցս՝ կացին մնացին անվթարք, և բարեպաշտութեամբ և բովանդակ պաշտին տակաւին, ոչ սք հեշտեաւ հաշտասցէ՝ երէ այնք որ երբեմն շատրե եին, չբառիցեն այժմիկ յիով սա ի կատարումն խորհրդոյ կարգին» (Յղգ. գւ. ժող.):

Նոյնպէս խորհեցան ու վարդապետեցին

ընդհանուր մասնագէտը և աստուածաբանը  
յետ Եւզինէոսի: «Գրուէր ձեռաց կախ-  
կոպոսին, կ'ըսէ բազմահմուտ Հայրն Գո-  
յար, և մայր և աղբիւր բովանդակ տուչու-  
րեան կարգին... Եւ ոչ սոսկ զուգորդ կամ  
օժանդակ, ոչ լրացուցիչ և եթ, և պա-  
հանջեալ ի պատշաճութենէ, այլ ամենևին  
ներքին, հարկաւոր և էական նիւթ»: Եւ  
յիշեցնելով անոր յառաքելոց գործադրու-  
թիւնը, կը յարէ. «Սոյնպէս և յաջորդ  
եպիսկոպոսունք ոչ կարասցեն ապախտ  
առնել զայն ի բարձրագոյն աստիճանն  
դասակարգութեան եկեղեցւոյ: Զայս ճըշ-  
մարտութիւն, զորմէ յուովից ճարտարաց  
յարարողութիւնս Եկեղեցւոյ և ի հրամա-  
նակարգ աստուածաբանութեան վիճեալ է,  
հզօր հաւաստեօք և վկայութեամբ հաս-  
տատեն Փր. Հալիէր, Իս. Հաբերտ, Պա.  
Արկուդիոս, Հուգոյ Մենարդոս, և այլք  
բազումք» (213): Որոց վրայ կարող էինք  
յաւելուլ նաև արդիներէն՝ զՄարտէն, Մա-  
նի, Որսի, Պէշ, Գիհր և ուրիշներ:

Նոյնը միաձայն կը վարդապետեն նաև  
դպրոցական նորագոյն դասագրեանք, որոց  
կը հանդիպինք հրապարակի վրայ. եթէ  
աստուածաբանականք, ինչպէս Մանժո-

նի<sup>1</sup>, ընդունուած իտալիոյ կղերանոցաց մէջ, որ «իսկական նիւթ՝ միայն ձեռաց զրութիւնը» ցոյց կու տայ (Գ, 320): Եթէ ծիսագիտականք, ինչպէս Լապլինի<sup>2</sup>, որ կը զրէ երիտասարդ կղերին համար, և սուսուց աւանդումը կը համարի լոկ «ի մեծագոյն բացայայտութիւն արդեանց խորհրդոյն, կամ այլ գովելի վախճանաւ» (21): Եթէ կրօնագիտականք, զոր օրինակ Գերպ. Կօլի<sup>3</sup>, հանրածանօթ գաղիական վարժարանաց մէջ, որ ձեռնադրութեան ու ձեին համար կ'ըսէ՝ թէ «այսօրիկ իսկ համարեալ են էական նիւթ և ձե քահանայութեան» (396): Չեմ կարող, և աւելորդ է յիշել այս մասին բոլոր զրոյնները:

Լատին Մաշտոցի կարգն ինքնին, շատ նման այժմեան հայկականին, նոյն դաւանութիւնը կը հաստատէ, երբ կու տայ նախ ձեռնադրութիւնը, յետոյ հանդերձից զգեցումն ու օծումը, և հուսկ սպասները: Չէր կարող նուիրեալն ոչ քահանայական

1. C. Manzoni, *Compendium Theologiae Dogmaticae*, 1912.

2. F. Lapini, *Istituzioni Liturgiche*, Firenze, 1895.

3. Cauly, *Cours d'Instruction Religieuse*, Paris, 1913.



ձեն զգենուլ և ոչ օծումն ընդունիլ, ևթէ ձեռնադրութեամբ արդէն քահանայացած չէր, այս ինքն յառաջ և անկախ սպասուլ աւանդմանէն: Ապա թէ ոչ՝ կարելի պիտի լինէր զգեցումն և օծումը ձեռաց դրութենէն յառաջ ևս, ինչ որ անտեղի է մտածելն իսկ:

Ծ. — Նոյնը կը թելադրէ մարդկային մտաց բնական դատողութիւնն ալ: Յիսուս իւր հաստատած խորհրդոց հետ կարգեց նաև անոնց յարմար նիւթերն ու ձևեր, զոնէ ծանօթները, և ոչ ումեք իրաւունք տուաւ փոխելու զանոնք: Ոչ որ պիտի կարենայ գեանախնձորով ու ջրով սպատարագել տալ մեզ օր մը, և կամ գինւով մկրտել: Բենեդիկտոս ԺԴ մեկնելով տիեզերական ժողովի մը վճիռն իսկ, կ'ըսէ. «Տրիդենտեանն յայտ առնէ թողեալ եկեղեցւոյ ի Քրիստոսէ իշխանութիւն փոխելոյ զայնոսիկ՝ ոյք հային ի մատակարարութիւն խորհրդոց, բաց յեռքենե անտի նոցան. իսկ արդ փոփոխուրիւն նիւրոյ և ձեւոյ ոչ ի ձէսն և մատակարարութիւն, այլ յեռքիւն անդր հայի» (Յղգ. զա. ժող.): Հետևարար կարգի տուչութեան առաքելական յայտնի նիւթը, որ է ձեռնադրու-

թիւնը, բացարձակապէս չէր կրնար փոխուիլ. այդ պիտի լինէր թերի համարիլ ու սրբագրել Յիսուսի գործը: Պիտի կարենային միայն դարեր վերջ ազօր վրայ օր մը յաւելնալ արարողական զարդեր, որոց մասին Ս. Թովմասի հետ կը խորհրդածենք. «Այն ամենայն որ գոն ի խորհուրդս ի հաստատութենէ մարդկան, ոչ են հարկաւորք խորհրդոյն, այլ վասն հանդիսաւորութեան ևեթ մուծեալ ի խորհուրդս... իսկ որ հարկաւորքն են խորհրդոյն, կարգեալ են ի նմին իսկ Քրիստոսէ՝ որ է Աստուած և մարդ» (Գ, ԿԻ, 2): Իսկ ժամանակի մ'աստուածաբանք իրենց խորհելու յատուկ եղանակաւ պիտի կարենային չափազանց կարևորութիւն մը տալ նորամուտ զարդերուն, մոռնալով կամ մոռնալ կարծուելով նոյն իսկ քրիստոսատուր էականին նշանակութիւնն ու գոյութիւնն անգամ. և այդ աստուածաբանից մէջ պիտի կարենար գտնուիլ նաև մին՝ որ միանգամայն քահանայապետ լինէր: Բայց առաքելական ձեռնադրութիւնն ազով չէր կրնար ոչընչանալ, կամ կորուսանել իւր կարողութիւնն ընդհանուր Եկեղեցւոյ առջև՝ տալու զկարգն ամբողջապէս՝ առանց օժան-

դակութեան նորամուտ յաւելուածոց: Եւ «ոչ որ հեշտեաւ հաւատասցէ՛ եթէ այնք (ձեռնադր. ու ձև) որ երբեմն շատըն էին, չքաւիցեն այժմիկ յիով առ ի կատարումն խորհրդոյ կարգին» (Բենեդ. ԺԿ):

Այդ աստուածաբանից մէջ, կը կրկնեմ, քահանայապետի մ'ալ գոյութիւնը զմեզ չի շփոթեր, և առանց վարանելու կը պատասխանենք Ս. Լիկուորեայ հեղինակաւոր ձայնով. «Համարի՛ թէ Եւզինէոս ճառելով զխորհրդոյ կարգին, ոչ զքնան վարդապետարար հաստատիցէ» (Աստու. քար.): Եւ կը. Գալանոսի հետ, որ Հայոց զիւրաւ ներող մը չէր, թէ Եւզինեան կոնդակն «ոչ հրամայեաց Հայոց և ոչ այլ ումեք արեւելեան եկեղեցւոյ զնիւթ և զձև զանդէն կարգեալն ի քահանայական ձեռնադրութեան, կամ թէ արգել ինչ յայտնապէս Հայոց զսովորութիւն իւրեանց արարողութեան. չարար զայդ, որպէս և ոչ Յունաց արգել զիւրեանց արարողութիւն: Այլ կամեցաւ յանդիման առնել նոցա զնիւթս և զձևս կարգին ըստ ծիսին՝ որ առաւել ծանօթն էր Լատինաց» (հտ. Բ, 694): Այս աստուածաբանը մեզ կու տան ոչ միայն իրենց անձնական, այլ և ժամանակի հասարակաց համոզումը:

Աւելի յառաջ կ'երթանք վա՛ն Ռոսսում մասնագէտ և հմուտ ծիրանաւորին հետ, իւրացնելով անոր փաստերով հաստատած և Ս. Աթոռի գրաբնութենէն վաւերացուած տեսութիւնը, թէ Եւզինեան վճագրին մէջ խորհրդոց վերաբերեալ մասնաստուածարանական կարծիք մ'է միայն: Իմաստուն ծիրանաւորը կը հաստատէ նախ՝ թէ բոլոր Ս. Հարբ, Քահանայապետք ու ժողովք նախ քան զԵւզինէոս՝ ձեռաց ղրութիւնը դաւանած են կարգի նիւթ. և անոնց վկայութիւնքն յառաջ կը բերէ կարգաւ (61-96): Կը թուէ նաև աստուածարանից կարծիքները: Յետոյ կը ցուցնէ սուր դատողութեամբ՝ թէ Եւզինէոս Գ խորհրդոց էութեան վրայ կը խօսէր, և բոլոր խորհրդոց էական մասունքը միայն նշանակած է, նիւրև ու ձեր, առանց միւս մասանց. հետևաբար կարգին ալ նիւթ ու ձև նշանակելով անօթոց տուչութիւնն յարակից բանիւք, զանոնք կը դաւանի իսկական՝ և ոչ ձեռնաղրութիւնը: Ապա կը հաստատէ՝ թէ Եւզինէոսի այս կարծիքն յաթոռոյ շէր ու փոփոխելի է, ձեռնարկելով այն ազատութենէն զոր Եկեղեցին թողած է աստուածարանից՝ կարենալու

Եւզինեան կարծեաց հակառակ խորհիլ՝ վիճել և ուսուցանել. Եւզինէոսի յաջորդաց արևելեան ծիսից ցոյց տուած պաշտպանութենէն՝ առանց բնաւ պահանջելու անօթոց աւանդումը. կղեմէս Ըի իտալայոյն քահանայից տուած ազատութենէն՝ հիւանդաց իւր օրհնելու՝ հակառակ եւզինեան հրահանգին. Բենեդիկտոս ԺԳի՝ կարգին նիւթ վարդապետելէ լոկ ձեռաց դրութիւնը. Լեոն ԺԳին՝ անգղիական ձեռնադրութեան անվաւերականութիւնը ձեռաց դրութեան թերութեանը մէջ նկատելէն. Տրիդենտեան ժողովոյն՝ կարգի նիւթ զձեռնադրութիւնն ուսուցանելէ, և այլն: Եւ կ'եզրակացնէ՝ որ եթէ Եւզինէոսի ուսուցումն յաթոոյ վինէր, Եկեղեցին և իւր Գլուխը անոր հակառակ չպիտի վարդապետէին (157-167 ևն):

Եւզինեան կոնդակին առ Հայս ուղղուած վինելու պարագայն ալ՝ Հայոցս համար յատուկ ստիպում մը չէ կարող կազմել, երբ խորհինք՝ որ Եւզինէոս անով մեր ազգին կ'ուսուցանէ «զճշմարտութիւն կաթողիկեայ հաւատոց՝ զոր խոստովանի եկեղեցին Հսովմայ», որով կը գծէ ու կը սահմանէ արևմտեան եկեղեցւոյ դաւանու-

Թիւնն իսկ, զոր չուզեց բնաւ Հայոց ալ ստիպողական ընել, ինչպէս լիովին ցոյց տուի նախորդ գլխոյս մէջ: Եւ եթէ այսու հանդերձ արեւմտեայք զայն յաթոոյ և ստիպիչ չեն նկատեր իրենց, մեր առաւելապէս ազատ ենք անոր անսովոր կարծիքներէն: Եւ Սիւնհոզոսին բացատրութիւնը կոնդակին նկատմամբ՝ «վճիօք Փյոբենտեան ժողովոյն», որ տարբեր ոյժ ունի, բնականապէս ճիշդ թարգմանը չէ ոչ միայն նոյն կոնդակին ընդհանրապէս տրուած նշանակութեան, այլ և ոչ նոյն ինքն Եւզինէոսի տեղեկութեան, որ կ'ըսէ թէ Փլորենտեան ժողովն իրեն իսկ թողեր է գրել զայն, ոչ թէ ժողովին՝ այլ իւր կողմանէ. զի ժողովոյն սեպհական վճիօք ժողովոյն անուամբ ալ հրատարակուեցան. և մեծ է տարբերութիւնն ասոնց ու կոնդակին մէջ՝ Եկեղեցւոյ առջև, զոր լաւագոյն է միշտ ի նկատի ունենալ:

6. — Իմ այս խորհրդածութիւնը նուազ հարկաւոր պիտի լինէին, եթէ ղիտէինք՝ որ ձեռնադրութեան զանցառութիւնը Սիւնհոզոսի գործոց մէջ՝ արդիւնք համարելի է ուշադրութենէ վրիպման անոր կողմանէ, ինչպէս հաւաստեց ինձ սիւնհոզական

Հայրերէն մին, հաստատելով իւր ալ համոզումը ձեռնադրութեան քացարձակ գերազանցութեան մասին: Արդէն դժուարին էր՝ որ 1890ի Սիւնհոդոսէն մինչև 1911 մեր Եկեղեցւոյ վարդապետութիւնն այդպէս յանկարծ փոխուէր հիմնովին: Բայց դիւրին չէ նոյնպէս անուշադրութեամբ մեկնել նաև խմբագրող աստուածաբանին կողմանէ, երբ նկատենք՝ որ նոյն յօդուածն հիմնուած է Եւզինեան կոնդակին նիւթական հետևողութեան վրայ, որ չէր կարող առանց ուշադրութեան կատարուիլ. և թէ բոլորովին մեռած լինելու չէ տակաւին այն կարծիքն՝ որ էական ու միակ նիւթ՝ սպասուց աւանդումը կը համարէր, թէև միւս կողմանէ կարենանք Քիհրի հետ ըսել. «Սակայն ընդդէմ այդր կարծեաց յառնեն այնչափ հզօր և լուսաւոր հաւաստիք, զի մարթի հնացեալ համարիլ այն և չունել այսօր հետևող ինքեան և ոչ գոր»<sup>1</sup>: Արով բնական է հետևցնել՝ թէ զայն մեր Սիւնհոդոսի գործոց մէջ ներմուծող աստուածաբանին կարծիքը, հակառակ՝ ինչպէս տեսանք՝ նոյն ինքն ա-

1. Nikol. Gühr, *Die heiligen Sacramente*. Freiburg, 1899, հ. Բ, 419.

րևմտեան Եկեղեցւոյ հասարակաց համոզման, և արևելեայցս դատողութեան ու ծիսական գրոց, Հայոցս համար կը մնայ անհատական տեսութիւն մը, որով հարկաւ և սրբագրելի առաջին առթիւ Սիւնհոգոսին վճռոց մէջ:

Բ. — Հիւանդաց օծուրեան ձեր: — Քիչ քան ունիմ ըսելու խորհրդոյս մասին: Իւր երբեմն առ մեզ գոյութեան նկատմամբ արդէն բաւական վկայութիւններ յառաջ կը բերէ Սիւնհոգոսը (հ. 494), ինչպէս կանխաւ ըրած էր Հիւրմիւզեան Աստուածարանութիւնն ալ (հտ. Բ, 435):

Դիտողութեան արժանի է նախ կոչումը, վերջին օծումն, զոր կու տայ Սիւնհոգոսը՝ հետևելով արդի սովորութեան: Մեր Հարց և միանգամայն հին Մաշտոցին սահմանը, զոր վենետկեան տպագիրն ալ պահած է, է Օծուրիւն հիւանդաց, համաձայն աւետարանական բացատրութեան ու վախճանին՝ թէ Առաքեալը «օժանկիս իւղով զբազում հիւանդս և թշկեկիս զնոսա» (Մարկ. 2, 13), հաստատուած նաև Յակոբոսէ՝ թէ այս օծումը «փրկեսցէ զաշխատեալն և յարուցէ զնա Տէր», հանդերձ թողութեամբ մեզաց (Ե, 15): Իրենց օժման նպատակն



էր՝ վերջինը չլինել. ի կեանս կոչել, ոչ թէ մահուան դռները բանալ: Այժմեան փորձն ալ նոյնը կը ցուցնէ շատ յաճախ: Վերջին կոչումը միանգամայն խորշելի է մարդկային բնութեանս՝ որ ապրիլ կ'ուզէ: Ինչո՞ւ առաքելական հաւատով և անուամբ չառաջարկենք այս խորհուրդը հիւանդաց, որպէս զի աներկիւղ համարձակութեամբ ընդունին: Արևմտեայց վերջին կոչելը բաւական պատճառ մը չէ՝ որպէս զի մեր հարազատն ու զեղեցիկն անով փոխանակէինք:

Բայց հոս մեզ աւելի կարևորն է ձեռ՝ զոր Սիւնհոդոսը կը նշանակէ նոր թարգմանութեամբ լատինականէն (հ. 498): Ո՛ւր է հայկական հին ձևը՝ որով Ս. Սահակ, իւր նախորդը ու յաջորդը օծուեցան, ոչ որ զիտէ: Խորհրդոյս դարաւոր ստգտանելի ընդհատումն անյայտացուց նիւթին հետ ձևն ալ, ու չկան նախակիրիկեան մաշտոցաց մէջ: Այնպէս որ երբ մեր կիրիկեցի հայրապետը ձեռնարկեցին վերանորոգել զայն, հարկադրեցան բանաձևն արևմուտքէն առնուլ: Առաքել ժամանակն ալ կը ճշդէ. «Թուին ԶԺԵ (1266) կոստանդին կաթողիկոսն բերաւ ի Ֆրանկաց

զհիւանդ օծելոյ կարգի օրինակն» (ՄԵ): Արդէն հայրապետս էր՝ որ թելադրութեամբ Առաք. Աթոռոյն նախ հրամայեց օծմանս գործածութիւնը (Կիրակ. ԽԱ):

Հաւանօրէն այդ ժամանակի թարգմանութիւնն իսկ է՝ զոր կը գտնենք Սսոյ 1345ի Մաշտոցին մէջ, այս ձևով. «Օծանեմ զաչսդ քո իւղով սրբով, զի զոր ինչ տեսութեամբն մեղար, սորին օծութեամբ իւղոյս փրկեսցիս վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Կոյնպէս կան ձևեր միւս անդամոց համար: Կանոնիս գործածութիւնը սակայն մասնական ու տեղական մնացած էր. այնպէս որ ժեղարուն թովմա վրդ. Մեծոփեցին, որ նշանաւոր մարդ՝ վերջին զարդարողն եղաւ մեր եկեղեցական գրոց, աւելի ողջամիտ քան իւր վարդապետը Գր. Տաթևացին, որ հիւանդաց օծումը դրոշմին, ոտնալուային կամ հանգուցելոց օծմանց մէջ նշմարելով՝ կը հրճուէր (Քրդ. ամբ. 147-8. ձևր. 248), չգոհացաւ այդպիսի երազական մեկնութեամբ: Այլ օծման կանոնին օրինակ մը, կաֆայէն բերուած, առաւ սրբազրեց և աղերսախառն յիշատակարանով մը տուաւ ազգին որ գործածէ. «զի ի վաղուց ժա-

մանակաց, կ'ըսէ, նախատինս կրէաք յազգաց բրիատոնէից. և այսօր ետ զսա Աստուած ի ձեռս մեր» ևն: Իւր յառաջ բերած ձեերը նոյն են Սոոյ օրինակին հետ, և ունին աւելի՛ սրտի և ճակատի օծումն որ կը պակսի միւսին մէջ: Երկուքին մէջ ալ կան Վենետիկոյ տպ. Մաշտոցին ազօթքները, և Մեծօփեցւոյն օրինակին մէջ՝ երկմասնեայ ազօթք մ'ալ աւելի: Ոմանք յունական երկար և եօթնմասնեայ կանոնք թարգմաներ ու զետեղեր են մաշտոցաց մէջ, սկսեալ ԺԵ դարէն, յայտնի է թէ զօրծածած ալ, բայց իրաւամբ դուրս թողուած իրր ծանրաբեռն ու տաղտկալի:

Արդեօք լաւագոյն և Ս. Աթոռոյն ու Սիւնհողոսին հոգւոյն համաձայն չպիտի լինէր՝ նորոգել խորհրդոյս արեւմտեան ձեւերն հին թարգմանութեամբ, որ «Հարցն սրբոց կիրարկութեամբ ազնուագոյն զօրծեալ են», ինչպէս էին զայն թարգմանող ու զօրծածող կիլիկեցի հայրապետք ու ժողովք, ախոյեանքը կաթողիկէ հաւատոց, որոց յիշատակն ալ արդարեւ կը պահանջէ այսպիսի մեծարանք մը:

## Ը

ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՔԻՐ  
ԱՍՏԻՃԱՆՔ

Ս. Կարգի խորհրդէն դեռ չհեռացած՝ կ'ուզեմ ակնարկ մը պարզել ընդհանուր փոքր աստիճանաց վրայ, և ի մասնաւորի կիսասարկաւագութեան, արդեօք աւագ թէ փոքր աստիճանաց դասուն կը պատկանի հայ ծիսին մէջ: Մին է սա այն խնդիրներէն՝ զորս կը ստեղծէ մեր արդի ծէսը, որ չլինելով ոչ արեւմտեան և ոչ զուտ արեւելեան, առիթ կու տայ ոմանց նկատելու կիսասարկաւագութիւնը Յունաց հետ իբրև փոքր աստիճան, և կաթողիկեայցս՝ աւագ կամ սուրբ, և ըսել կու տայ Սիւնհոգոսին՝ թէ «Չէ պարտ ունկն դնել սուտ վարդապետացն, որը և առ մեզ զհետ երթեալ զՅունաց, զկիսասարկաւագութիւն ի փոքր աստիճանսն դասեն» (հ. 510):

Տեսնենք նախ խնդրոյն պատմականը, որ կարևոր է անոր լուծման համար:

1. — Առ հասարակ փոքր աստիճանք մինչև ցկիսասարկաւազ՝ անձանօթ են նոր կտակարանի մէջ, և չկային ալ: Պէտքն էր որ Առաքելոց օրով ստեղծեց սարկաւազութիւնը (Գործք Առ. 2), և զայն բաւական համարեցաւ: Նոյն պէտքն էր որ ապա հնարեց միւս խոնարհագոյն աստիճաններն ալ. որով եկեղեցեաց ընդարձակութեան ու կարօտութեան համեմատ՝ ի սկզբան օմանք ունէին անոցմէ բոլորը, և օմանք զօմանս միայն: Առաքելական Հարբ տակաւին չեն ճանաչեր զանոնք. Ս. Իգնատիոս, նահատակեալ Բ դարու սկիզբները, կը գրէր առ Մագնիսիացիս. «կալջիբ զեպիսկոպոսն ի ժողովս առ ետեղակալ Աստուծոյ. զերիցունս՝ առ մեծափառ ծերակոյտ Առաքելոց, և զսարկաւազունս՝ զոր յոյժ սիրեմ՝ առ պաշտօնեայս Քրիստոսի» (Գլ. 2): Ուրիշ աստիճանաւորք չկան դեռ անոր ժամանակ:

Առաջին անգամ Գ դարուն կը հանդիպինք ասոնց յիշատակութեան յարեմուտս: Այդ դարու կիսուն՝ Ս. Կիպրիանոս և յետոյ կարթագինեայ ժողովը կը հաստատեն կի-

սասարկաւագաց գոյութիւնն Ափրիկէի եկեղեցւոյն մէջ<sup>1</sup>։ Դարձեալ յամի 250՝ ըստ կոանելեայ քահանայապետի առ Փարիանոս թղթոյն, որմէ հատուածներ կը քաղէ Եւսեբիոս (Պատմ. Եկ. 2, ԽԳ), Հոովմայ եկեղեցւոյն մէջ կային՝ բաց յերիցանց և ի սարկաւագաց՝ «կիսասարկաւագունք՝ եօթն, չափնկալք՝ քառասուն և երկու, երդմնեցուցիչք՝ ընթերցողք և դոնապանք յիսուն և երկու»։

Արևելեան եկեղեցւոյ մէջ կիսասարկաւագը կը յիշատակուի նախ Ս. Աթանասի մէկ թղթոյն մէջ, գրուած 330ին, և Լաւողիկեայ ժողովոյն ԻԱ կանոնին մէջ (Goschler, ԻԲ, 315)։ Դ գարու վերջերն Առաքելական սահմանադրութիւնք ունին՝ ձեռնադրութեամբ հանդերձ՝ երկու աստիճաններ միայն սարկաւագէն վար. կիսասարկաւագ և ընթերցող (ԻԱ, ԻԲ)։ Կան նաև փաստք կամ երգիչք (ԻԸ, ԻԳ) և երդմնեցուցիչք (ԻԶ), որոց համար յայտնապէս իսկ կ'ըսուի հոն՝ թէ ձեռնադրութիւն չունին. լոկ պաշտօնեայք էին, ոչ աստիճանաւորք։ — Կիսասարկաւագութիւնն՝ ինչպէս ըսինք՝ Յունաց քով մինչև ցարդ

1. Goschler, *Diction. encyc. de la Théol. cath.* ԻԲ, 315, և այլք։

փոքր աստիճան կը համարուի: Նոյնպէս էր նաև Արևմտեան եկեղեցւոյ մէջ ցժԳ դար, ուր նախ Իննովկենտ Գ մեծ աստիճան հռչակեց զայն, թէև ամուրի վիճակն անոր համար ստիպողական բրած էր արդէն մեծն Գրիգոր՝ Զ դարէն (Goschler, ԻԲ, 317). որով քաջայայտ է այդ երկու հանգամանաց իրարմէ անկախութիւնը գէթ պատմական հնագոյն շրջանի մէջ: Մոռնալու շենք նաև՝ որ արևմտեան աստուածաբանից միաձայն կարծիքը՝ մինչև ցարդ խորհուրդ կը համարի լոկ աւագ աստիճանները՝ սարկաւագութենէն սկսեալ:

2. — Դառնանք մեր ազգին: Ե դարու մատենագրութեան բազմախուռն վկայութիւններէն զիտենք՝ որ այն ժամանակ կիսասարկաւագն և ուրիշ փոքր աստիճանաւորք չկային՝ բաց ի միոյն: Ազաթանգեղոս Լուսաւորչէն հաստատուած կ'աւանդէ «եպիսկոպոսս, . . . զկարգս երիցանց և կամ սարկաւագաց կամ անագանոսաց, և որ այլ ևս ի պաշտօն Տեառն կացին» (ձԻԳ): Շեղագրեալքը են բուն աստիճանաւորք. իսկ «որ այլ ևս»՝ անաստիճան պաշտօնեայր էին, անոր համար ալ առանց որոշիչ անուանց, ինչպէս վերոյիշեալ Ա-

սար. սահմանադրութեանց մէջ: — Յաճախ սպաստումը նոյնպէս չորս աստիճան գիտէ ի Հայս. «Եպիսկոպոսաց և քահանայից և սարկաւազաց և դպրաց՝ որք կուսութեամբ նահատակին» (94): — Նոյները կը յիշուին և Զ դարուն՝ Ներսէս Աշտարակեցւոյն ժողովէն (կան. ԺԳ): — Աղոցմէ չորրորդը՝ դպիրք կամ յն. անագանոսք, որ կը նշանակէր ընթերցող, կրկին պաշտօն ունէին ըստ Մանդակունւոյն. կարդալ և երգել. «զպատգամսն Աստուծոյ պատմեսցեն, և զօրհնութիւնս նորա երգեսցեն» (25): — Է դարունն կոմիտաս կթղ. առ Մոզեստոս թղթին մէջ ողջոյն կը յղէ «յամենայն ուղղափառ Եպիսկոպոսացս և յերիցանցս, ի սարկաւազացս և ի դպրացս» (Սեր. Գ, ԻԵ): Որով յայտնի է՝ թէ դեռ նոր աստիճան չէր հնարուած<sup>1</sup>: Վերջապէս սարկաւազի ձեռնադրութեան հին բանաձևը, մինչև ցարդ դեռ

1. Հեակարար նորահնար՝ և արդէն ըստ բազում զբւիտց անտեղի և ինքն իրեն հակասական էր Ժ. դարու այն աւանդութիւնը՝ թէ Հայք մեծին Ներսեսի և կամ Աբրահամու (Կոմիտասայ նախորդին) օրով Յունաց հետ մրցելու նպատակաւ՝ կարգած լինին ինն աստիճանաւոր. Պատրիարք, Արքեպիսկոպոս, Մետրապօլիտ, Եպիսկոպոս, Քաշանայ, Սարկաւազ, Կիսասարկաւազ, Ընթերցող և Սողմոսերզու (ՅՏ. Կթղ. ԺԲ. — Յաւել. Կաղանկ. Բ. Խը. — Ուխտանէս, Բ, 44, 47):



անփոփոխ պահուած, նուիրեալը կը կոչէ «ի դպրութեան ի սարկաւազութիւն», ըստ որում շինուած է՝ երբ դեռ կիսասարկաւազութիւն չկար մեր մէջ: Այս բանաձևը պատճառ եղաւ ստորին դարերու մատենագրաց ոմանց՝ դպրութիւնը համանիշ կարծելու կիսասարկաւազութեան հետ:

Բաց ի դպրէն՝ նախորդ երեք աստիճանք միայն աւագ կը համարուէին նոյն դարերուն: Ասոր համար՝ նախ՝ երբ աշխարհական մ'արագապէս բարձր աստիճանի պիտի հանէին, զանց կ'ընէին դպրութեան օրհնութիւնը, որ հաւանօրէն կար սկիզբէն ալ՝ ինչպէս և Յունաց քով ըստ վերնոյն, և կը սկսէին սարկաւագի ձեռնադրութեամբ, ինչպէս եղաւ Մեծին Ներսեսի՝ որ ի հայրապետական աթոռ պիտի բարձրանար (Փաւստ. Գ, Գ): Երկրորդ՝ այս օրինակիս մէջ կը տեսնենք նաև սարկաւագի աստիճանին տուչութեան հարկն ամէն պարագայի մէջ, որ նշան մ'է անոր աւագութեան: Երրորդ՝ Ներսեսի հերաց խուզումն կը կատարուի սարկաւագութեան սկիզբը (անդ), որ դպրութեան զանցառութեամբ չէ կցուած անոր, այլ կանոնական սովորութեամբ, ինչպէս պիտի տես-

նենք ի ստորև, և որ դարձեալ ապացոյց մ'է անոր առաջին աւագ աստիճան լինելուն:

Ը դարուն Յովհ. Խմաստասիրի ժողովէն յիշուած կը գտնենք տակաւին՝ «կայսկոպոս կամ քահանայ կամ սարկաւազ, կամ ով և իցէ յուխտէ եկեղեցւոյն» (24), ուր կիսասարկաւազը դեռ աներևոյթ է: Բայց ժ դարու կիսուն արդէն կայ այն և կը յիշուի Խոսրով Անձևացիէն (Պտր. 43), Անանիա Մոկացիէն (յԱրարատ, 1897, էջ 287) և յայլոց. հետևարար քան զպատմիչսդ կանուխ սկսած էր, անուելով Յոյներէն: Եւ Ս. Ղազարու հնագոյն Մաշտոցը, ժԱ դարուն, անոր օրհնութիւնն ալ ունի, որոյ ծագումն հարկաւ կը միանայ նոյն աստիճանի սկզբնաւորութեան հետ, և տեղի չի թողուր Սիւնհոդոսի ենթադրութեան՝ թէ Գրիգոր Է Պապէն (1073-1085) աւանդուած լինի մեզ այն (հ. 510): Այժմու լատինակերպ կարգը հազիւ ժԳ դարու կիլիկեան մաշտոցաց մէջ կը սկսի երևիլ, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ գլխոյն մէջ:

Գալով փոքրագոյն աստիճանաց, բաց ի դպրէն որ հին է, միւսներն անձանօթ էին

տակաւին Լամբրոնացւոյն՝ երբ 1177ին աստիճանաց նկարագիրը կը յօրինէր (Պտր. 84-5). Ս. Ղազարու 1216ի Մաշտոցին մէջ, որ միայն Անագանոսի կարգն ունի. 1248ի Չեոնադրութեան տետրակին, և Նիկաւլայոսի գրչագրին մէջ՝ ժԳ դարու վերջը գրուած (աստ, 57), և Ստ. Ուրբելեանին՝ որ 1299ին աստիճանաց վրայ կը գրէր (ԻԶ): Ուստի դեռ չկային ոչ ի բարձր Հայս և ոչ ի կիլիկիա: Անոնց գոյութիւնը մեր քով առաջին անգամ կը յիշուի՝ ըստ ինձ ծանօթ աղբերաց՝ նախ Մխիթարայ ժողովէն 1342ին, և կ'երևին Ստոյ 1345ի Մաշտոցին մէջ, փոխառութեամբ լատին ծիսէն:

3. — Նախկին դարերուն արդեօք մե՞ծ աստիճան կը համարուէր կիսասարկաւագութիւնը մեր մէջ, թէ փոքր: Փաստերը վերջնոյս նպաստաւոր են: Առաջին՝ բոլոր հին մաշտոցը, որ և է խմբագրութեան ալ պատկանին, եպիսկոպոսի՝ քահանայի և սարկաւագի ձեոնադրութեան համար ունին ծանօթ բանաձևը, «Աստուածային և երկնաւոր շնորհ ... կոչէ» են: Իսկ կիսասարկաւագին համար՝ նման միւս փոքր աստիճանաւորաց՝ ունին լոկ օրհնութիւն

մը, ինչպէս է մինչև ցայսօր: Ըստ վերո-  
 յիշեալ հնագոյն օրինակի ԺԱ դարու, «ե-  
 պիսկոպոսն ղնէ զաջն» և կը պաշտէ  
 աղօթք մը, յորում աստիճանի որ և է  
 ակնարկութիւն չկայ՝ բաց ի բառերէս.  
 «արա արժանի առանց ամօթոյ կատարել  
 զպաշտօն իւր»: Երկրորդ՝ նոյն մաշտոցը  
 և 1248ի Չեոնադրութեանց տետրակը, որ  
 վանացս հաւաքածոյին մէջ հնագոյն են  
 իրր բովանդակող զանազան ձեոնադրու-  
 թեանց, հերակտրութիւնը կապած են տա-  
 կալին սարկաւազութեան հետ, թէպէտև  
 ունին կիսասարկաւագի կարգն ալ: Եր-  
 րորդ՝ Լամբրոնացին լոկ երեք բարձր աս-  
 տիճանաց տուչութիւնը մինչև ցարկաւա-  
 գութիւն՝ կը նկարագրէ հանդիսական և  
 պատարագի մէջ (Պտր. 205), ինչպէս ունի  
 ղեռ 1345ի Սոոյ մաշտոցն ալ. ապա կի-  
 սասարկաւազութիւնը փոքր էր նման զը-  
 պրութեան, և անոր պէս անշքութեամբ  
 կը տրուէր: Եւ զարմանալի չէ, երբ նոյն-  
 պէս էր Յունաց քով, և արեւմտեայց մէջ  
 անգամ մինչև ԺԳ դար, ինչպէս ըսի վերև:

Սոոյ 1342ի կամ Մխիթար կաթողի-  
 կոսի ժողովը կը խօսի աստիճանաց տու-  
 չութեան վրայ, առանց սակայն ղեռ խըն-

ղիր յուզելու մեծութեան կամ փոքրկու-  
թեան (Mansi, Իե, 1360-62): Բայց  
կ'ըսէ՝ թէ հայ վիճակաւորաց ներելի չէ  
ամուսնանալ յետ կիսասարկաւագութեան  
(անդ, 1261)<sup>1</sup>. և յորում չգիտեմ՝ հարկ  
է նշմարել աստիճանիս աւագութեան գա-  
ղափարին սկզբնաւորութիւնը (աստ, 79,  
80): Իսկ մեր խնդրած զանազանութեան՝  
աւելի յայտնի և շօշափելի կերպով ա-  
ռաջին անգամ կը պատահինք նոյն դարու  
վերջը (1397ին), յորում Գր. Տաթևացին՝  
ի պատասխանի հարցմանս, «Վասն էր  
մինչ ի չորրորդ կարգն փոքրիկ ջահըն-  
կալութեան կարեն ամուսնանալ, և յայնմ  
հետէ ոչ», կու տայ վարկպարագի մեկ-  
նութիւններ ու կը յարէ. «Վասն այն  
մինչ յայս ամուսնանալ կարեն, և ի հինգն  
ելեալ վերագոյն դասուց՝ ոչ ամուսնանան»  
(Հարցմ. Թ, 17): Նոյնը կը կրկնէ ուրիշ  
տեղ մ'ալ (Քրգ. ամբ. 171): Որով կը  
տեսնենք՝ թէ ԺԴ դարու վերջերն արդէն  
ընտանի եղած էր արևելեան Հայոց ան-

1. Մաշտոցին այժմու հրահանգը՝ թէ «մինչև ցայս  
վայր կարէ ամուսնանալ, և աստի յառաջ ոչ կարէ»,  
դեռ չկայ Սոսյ 1345ի օրինակին մէջ, և կը սկսի 1459ի  
օրինակէն (Ի Ս. Ղազար):

գամ՝ մեծ աստիճանի զաղափարը կիսասարկաւագութեան մասին:

Եզրակացնելով, այժմ մեր ազգի մէջ նոյն աստիճանին ի սուրբս կամ աւագո զասաւորութիւնը՝ չէ ըստ առաքելական ծագման, կամ բարձր հնութեան, կամ ձեռնադրութեան ձևոյն, կամ մեր Եկեղեցւոյ նախկին համոզման, կամ որ և է ժողովոյ սահմանին. այլ սոսկ ըստ վարկաներոյ՝ որ կը սկսի ԺԳ դարու վերջերը, հաւանօրէն արեւմտեայց լոին ազդեցութեան ներքե:

## Թ

### ՉԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ԿԱՐԳԵՐԸ

Կը կրկնեմ. Սիւնհոդոսը կ'ուզէ՝ որ ասոնց մէջ «ամենայն ինչ ի հնագոյն ձև ածիցի» (հ. 636): Է գլխոյն մէջ արդէն խօսեցանք ձեռնադրութեան նիւթոց ու ձևոց մասին. հիմայ կը մնայ ակնարկ մը տալ ընդհանուր կարգաց ու բնագրաց:

1. - Գիտենք նախ՝ թէ պատմական չէ Սիւնհոգոսի ենթադրութիւնը, թէ Գրիգոր է պապէն (1073-1085) ընդունած ենք մեր «գիտութեան հերաց, գշորս աստիճանս փոքունս և գմեժ կարգս ըստ օրինի Լատինաց», հաստատուելով Գրիգոր կեսարացւոյ (ժէ դար) անորոշ վկայութեան վրայ (հ. 510): Իրականն է հետեւեալը: Ինձ ծանօթ հնագոյն մաշտոցը ժ.Ս. դարու, զոր յիշեցինք յաճախ, ունի չորս կարգեր. Անագանոսի, Կիսասարկաւազի, Սարկաւազի և Քահանայի, որոնք կը գտնուին տակաւին իրենց նախնական պարզութեան և համառօտութեան մէջ: Քիչ յետոյ՝ Պահլաւունի կաթողիկոսաց օրով և հաւանօրէն անոնց ձեռք իսկ՝ հին կարգերը կը տեսնենք չափաւորապէս ընդարձակուած, և իրենց զարգացման ու կատարեալ գեղեցկութեան սահմանին հասած, պահելով իրենց տոհմային նկարագիրը, ինչպէս նշմարելի է Լամբրոնացւոյն յառաջ բերած ծրագրին մէջ՝ երեք բարձրագոյն աստիճանաց յատուկ (Պտր. 205-6, 213-4): Բարեբախտ պատահմամբ այդ ծրագիրը մարմնացած՝ կը պահէ տակաւին վանացս Չեոնադրութեան տետրակը 1248

Թուականէն, Կիսասարկաւագի, Սարկաւագի ու Քահանայի կարգերով միայն, մինչդեռ Անագանոսի նախկին կարգն անփոփոխ մնացած է 1216ի քահանայական Մաշտոցին մէջ, ուր միայնակ կը գտնուի, զի քահանայը կու տային այդ աստիճանը:

ԺԳ դարու վերջերը կը սկսի արդէն երևիլ ի Կիլիկիա ծիսական օտարսիրութիւնը, որ իրեն օժանդակ ունի գեղեցիկ ախորժակաց պակասն ու հայերենի անհրմտութիւնը, և կը հակի նախ դէպ ի Յոյնս: Նիկաււայոսի յանախ յիշուած հաւաքածոյն, գրուած նոյն իսկ այդ ժամանակ, ունի ձեռնագրութեանց չորս կարգեր: Ասոցմէ Անագանոսինն ու Կիսասարկաւագինն հոռոմացած են՝ յունարենէ նոր թարգմանութեամբ: Իսկ Սարկաւագինն ու Քահանայինն առ զգուշութեան կը պահեն տակաւին՝ դոյզն աղաւաղմամբ՝ պահլաւունի ձևերը, իրենց կից ունենալով նաև յունականները թարգմանութեամբ, որպէս զի ընտանի դառնային ու տակաւ սկսէին գործածուիլ:

ԺԳ դարուն սակայն լատին ձէսը, որ ժԲ դարէն կը սկսի արդէն հետաքրքրել զԿիլիկեցիս, կը զօրանայ յունականին վը-



րայ, և մեզ կու տայ, Է Գրիգորէ շատ  
ուշ և Փլորենտեան ժողովէն կանուխ, ա-  
րևմտեան փոքր աստիճանաց հետ անոնց  
աւանդման լատինական կարգերն ալ՝ ա-  
զատ թարգմանութեամբ և յօրինուածով,  
և կամ գէթ քան այժմուս տարբեր բնագրէ  
մը: Լատինականը կը փոխանակէ նոյն իսկ  
ընթերցողութեան բնիկ կարգն ալ: Նոյնը  
կը թափանցէ նաև Կիսասարկաւագի, Սար-  
կաւագի և Քահանայի կարգերուն մէջ,  
տեղափոխելով ու մասամբ թօթափելով  
տոհմային պաշտամանց կտորները: Այս  
նոր յեղաշրջութեան ինձ յայտնի երիցա-  
գոյն ներկայացուցիչն է Սսոյ ծանօթ Մաշ-  
տոցն 1345ին (աստ, 83):

2. — Ինչպէս աստիճանաւ, աղաւաղու-  
թեամբ ալ մեծագոյն է եպիսկոպոսական  
կարգը, որ շինուեր է լատինականին և  
յունականին ամբողջական ու հայկականին  
մասնական բաղադրութեամբ: Անոր այժ-  
մեան ձևին օրինակը շունենալով, ստի-  
պուած եմ տեսութիւնս կեդրոնացնել հին  
գրչագրաց պահածին վրայ, 1345, 1365  
և այլ տարիներէ: — Հոն՝ յատիկ ընդար-  
ձակ արարողութեան մէջ թաղուեր է հա-  
մառօտ յունականը, որ կը սկսի յետ սկըզ-

բնաւորութեան պատարագի, այն խրատէն՝  
 թէ «քահանայապետ մի ընթեռնու զնա-  
 խագրեալ թուղթ ընտրութեանն՝ որ է այս-  
 պէս. Հարցաքննութիւն և հրաւէր եղեալ»  
 ևն. և կ'երթայ կ'աւարտի հոն՝ ուր այ-  
 կականը կը սկսի՝ այսպէս. «Եւ յետ զամէնն  
 ասելոյ՝ գոչէ ամենայն եկեղեցին երիցս.  
 Աստուածային և երկնաւոր շնորհ» ևն,  
 նախ ժողովրդեան՝ ասպա Հայրապետին կող-  
 մանէ, որ է ձեռնադրութեան ծանօթ բա-  
 նաձեր. որուն կը յաջորդեն, ընթերցուած-  
 ներէն և նորահնար Տէր Աստուած արցն  
 մերոց եղանակաւոր քարոզէն զատ, «Գո-  
 հանամբ զբէն միածին որդի Աստուծոյ» և  
 «Գոհանամբ զբէն տէր Աստուած մեր»՝  
 կրկին աղօթքները. և ասոնց երկրորդին  
 խաղաղութեան վերջ՝ դարձեալ կը շարու-  
 նակէ յատիկականը, որով և կ'աւարտի  
 ձեռնադրութիւնը:

Շատ զարգացած ճաշակի պէտք չկայ՝  
 բնորոշելու համար այս խառնրդին անա-  
 խորժութիւնը, որ կը ստեղծէ նախ ան-  
 վերջանալի արարողութիւն մը — Երկրորդ՝  
 կը կրճատէ գեղեցիկ հայ բնիկ կարգը, և  
 անոր կը փոխանակէ անսպառութիւն մը  
 նորամուտ աղօթքներու և աղօթիկներու,

պէսպէս մանր շարժմանց ու ձևերու, որոնք խոտոր կը համեմատին հայ արարողութեան վսեմ ծանրութեանը հետ: — Երբորդ՝ կը խեղդէ մեր եկեղեցական ոսկեղինիկ բարբառը բարեւոնեան շարագրութեան մը մէջ, ուր հայ ռամիկը կը պաշտէ մեզ իւր հրամայեցեքը (յառաջ մատերուք), նուիրած, ձենեադրած և կարգաւորել անցեալները: Յոյնը՝ իւր սյօրախ ե տեսպօտայն, տեսքիման, տեսդեսուքը, արշիտիակօնը, պօսպիտը, խարտոֆիրակն ու շնիձը, ուղղագրութեամբ ալ աղաւաղը: Լատինը՝ իւր գերփորայն, տեղհարը (talaris), բրուաֆատիոն (praefatio): Գաղիացին՝ իւր օֆրանքը, բրուցուսիօնը (procession), պացիներ (bassin), պուռձիակիկ (bourgeoisie): Եւ թարգմանչին անհմտութիւնը՝ իւր «Հրամայեա, տեր, օրհնութեամբ տակ» (Jube, domine, benedicere, Օրհնեա, տէր), առանց իջնելու ուրիշ մանրամասնութեանց մէջ: Իսկ նախայիշեալ երկու բնիկ ազօթքները, Մանդակունւոյն վեհ ներշնչման նշխարներ, կը նմանին զոյգ մ'աղամանդներու՝ նետուած կաւի մէջ: — Չորբորդ՝ Հայոց կաթողիկոսին երեք անգամ ձենեադրել կու տայ իւր եպիսկոպոսը, երբեակ

արարողութեանց բանաձևերով՝ որ համախորհրուած են հոն, ինչ որ բաց է ի բաց կ'ընդհարի ողջմտութեան դէմ. թէև ի դիտարութեան ձեռնադրչին՝ միակն ու ձեւերու ձևն եղած է միշտ՝ բնիկն «Աստուածային և երկնաւոր շնորհ», ինչպէս կարգին ազաւաղութենէն յառաջ էր՝ ըստ ակնարկութեան Անանիա Մոկացւոյ (աստ, 94) և Լամբրոնացւոյն (Պտր. 205-6). և որ նոյնպէս մնաց վերջն ալ, որոյ համար խնամով յառաջ բերուած է նոյն կարգին մէջ, մինչ հին հայ կարգին ուրիշ մասունք թօթափուած են:

Այս կարգը, որոյ ինձ ծանօթ հնագոյն օրինակը 1345էն է, յօրինուած կը թուի՝ ընծայելոյն ընտրութեան վկայագրին մէջ իբր օրինակ նշանակուած տարւոյն, որ հետեւեալն է. «Ի թուականիս Հայոց յԶԿ (1311)... հրամանաւ սրբասնեալ և երջանիկ կաթողիկոսին Հայոց մեծաց՝ տեառն կոստանդեայ» ևն: Ով ալ լինի յօրինիչը, մեք սակայն չենք մեղադրեր ոչ զինքը և ոչ իւր գործն ընդունողները, որոնք ժամանակի ախորժակաց թելադրութեամբ վարուեցան, և համարեցան լաւագոյն բան մ'ընել: Ընդ հակառակն պատմութեան

առջև անմեղադիր չպիտի մնայինք մեք՝ որ ուրիշ դատողութիւն ունինք այսօր, եթէ չսրբագրէինք անոնց անգիտակից սխալումը. մեք որ հաւասար իրաւունք ունինք վերաշինելու ինչ որ անոնք խանգարեցին: Որով շատ ողջամիտ է Սիւնհոդոսին պահանջը՝ թէ «ամենայն ինչ ի հնագոյն ձև ամփոփ»:

3. — Եթէ ինձ ներուէր «հնագոյն ձևին» ծրագիր մ'առաջարկել, պիտի մըղուէի՝ Դոնապանի, Երզմնեցուցչի և Զահրնկալի համար պահել կիլիկեան կարգերը, որոց հիները չենք ունեցած: Ընթերցողի, Կիսասարկաւագի, Սարկաւագի ու Քահանայի կարգաց՝ հիմն առնուլ Պահլաւունեաց գեղեցիկ կարգադրութիւնը: Իսկ եպիսկոպոսին: Ըսինք թէ հայ կարգը՝ խառնուած կիլիկեան բաղադրութեան մէջ՝ թերի է: Եթէ հնար լինէր որ և է մատենադարանի մէջ բնիկ կարգն ամբողջութեամբ գտնել, անտարակոյս լաւագոյն էր. հակառակ պարագային՝ կարելի է Լամբրոնացւոյն ծրագրին վրայ վերակազմել հին ձևը բաւական ճշդութեամբ:

4. — Սիւնհոդոսը կը յիշատակէ նաև կաթողիկոսական ձեռնադրութեան կարգը

(հ. 181), որ նոյնպէս կը պակասի ինձ այժմու գործածական ձևին մէջ: Համառօտիւ պէտք է ըսեմ՝ թէ հակառակ են թաղրութեանց ու սնասպարծութեան ոմանց, որ արդիւնք է մեր հին մատենագրաց սխալ հասկացողութեան, կաթողիկոսական ձեռնադրութեան որ և է յիշատակ և հաւանականութիւն չկայ թ՛ դարէն յառաջ: Համոզուած եմ՝ թէ այդ ժամանակներն հնարուած է այն, և ըստ յայտնի վկայութեան Անանիայ Մոկացւոյ, ժ՛ դարու կիսուն, կը կայանար եպիսկոպոսական կարգին կրկնութեան մէջ, միակ զանազանութեամբ ձեռնադրութեան ձևին՝ թէ «զայն ոք կոչեն յեպիսկոպոստօրեկե յարոս ՚հայրապետօրեան» (յԱրտ. 1897, 276, 278): Ասոր կը յաջորդէ ապա ձեռնադրութեան յատուկ կարգ մը: Գ. Կոստանդնի յիշատակարանէն՝ որ կայ կաթողիկոսական գրչագիր Մաշտոցին ծայրը, թէ «Նուաստս Կոստանդին կթղ. գտայ (զկարգ) Հայրապետացն Հայոց՝ գրեալ ձեռամբ սր. հօրն մերոյ Ներսիսի արքեպ. Տարսնի, և ետու գրել, որ է այս», հաւանական կ'երևի՝ որ նոյն ինքն ծիսից զարգարիչ Լամբրոնացւոյն շարադրածն էր այդ: Հետե-

ւարար հին գրչագրաց մէջ (1345ի, 1365ի, կոստանդնիսի ևն) արդէն իւր նախնական ձևը կը կրէ, և անկարօտ բարեփոխութեան: Իսկ արդի գործածականը կ'արժէ վերաքննել ըստ հնոյն:

Սակայն հոչակաւոր օժումն չկայ ազոնց մէջ, և ոչ ի հին պատմութեան՝ հակառակ անճիշդ ենթադրութեանց, որ արդիւնք են հնոց օժանկ բառին բարոյական իմաստը նիւթականին հետ շփոթելուն: Այլ նախ հնարուած կ'երևի յայտնապէս ժէ դարուն, զի կայ թովմա Մեծօփեցւոյ նկարագրին մէջ. սակայն դեռ ժէ դարուն ընդդիմութեանց կը բաղխէր, որով Անտոնեան Հարց 1619ի Մաշտոցին մէջ անանուն ոմն հարկադրեր է պաշտպանել զայն, նշան՝ թէ որքան ուշ և դժուարութեամբ ընդունուեր է:

Մինչդեռ քահանայից և եպիսկոպոսաց օժումն աւելի հին է, առնուած լատինականէն, զի միւս արեւելեայք չունէին ու չունին ցարդ, և կ'երևի նախ ժՊ դարու մաշտոցաց ու սովորութեան մէջ, յիշուած Սոոյ 1342ի ժողովէն ալ (Mansi, ԻԵ, 1241-2):

5. - Եկեղեցական արարողութեանց ու կարգաց մասն են նաև վանահարց, կրօ-

նաւորաց և կուսանաց օրհնութեանց կարգերը, որոնք կը գտնուին հին գրչագրաց մէջ, սկսեալ ժԱ դարու օրինակէն, և աննման են արդի կարգերուն՝ որքան ծանօթ են ինձ: Պատշաճ չէ՞ որ Սիւնհոգոսին վերանորոգիչ վրձինը սահի նաև ասոնց վրայ, որպէս զի արդարև «ամենայն ինչ ի հնագոյն ձև ամիցի»:



## ԵԿԵՂԵՅԻ ԵՒ ՍՊԱՍՔ

1. — Սրբավայրին ճարտարապետական նկարագրին վրայ՝ զոր յաջողութեամբ կը կատարէ Սիւնհոգոսն ըստ էական մասին, ինչպէս աւագ սեղանն յարևելս և անջատ, զուտն յարևմուտս, բարձր բեմը՝ կողմնական սանդղներով, դասը, մկրտարանն ի հիւսիս, աւանդատունն ի հարաւ, և գաւիթը դրան առջև (հ. 656), բոլորն համաձայն մեր հին ծիսին, բիչ բան կայ յաւելլի: Կարելի էր՝ զոր օրինակ՝ իբր հայ ծիսի



մասն՝ յանձնարարել նաև զմբերք, հայկական յատուկ ձևով, զոր ունէին գրեթէ բոլոր հին եկեղեցիք, սկսեալ Ազաթանգեղոսի նկարագրէն՝ Լուսաւորչի տեսլեան մէջ (ձԲ), և Տեկորոյ Ս. Սարգսէն, Եղարու գործ, որ դեռ մինչև մօտերս կանգուն էր. և որ մեծ գեղեցկութիւն է տաճարին ու խորհրդաւոր (Պձնեցի, 144):

2. — Կարելի էր յանձնարարել նաև հին քաղաքորմը կամ շրջապատ պարիսպը, ծանօթ Ազաթանգեղոսի (ձԸ) և Փաւստոսի (Գ, Գ) ժամանակներէն մինչև ցայսօր, և պատուիրեալ հին եկեղեցական կանոններէ (Սոփերք, Բ, 81), ինչպէս սովորութիւն էր Յունաց քով ալ (Եւսեբ. Պատմ. Եկեղ. Ժ, Գ): Եւ որ արդի ճաշակով շինուելով ցած ու վանդակաւոր, պիտի լինէր զարդ, և միանգամայն պատասպարան եկեղեցւոյն շատ անպատեհութեանց (ամբոխի, աղմկի, ևն) և աղտեղութեանց դէմ՝ որոց կ'ենթարկուին սրբավայրն և իւր օծեալ որմերը:

3. — Անցնելով տաճարէն ներս, «ըստ ազգային սովորութեան, կ'ըսէ Սիւնհոզոսը, կանգնին սեղանք միայն ի ճակատն յարևելս կոյս. այլ քանզի ըստ գովելի

սովորութեան՝ որ ընկալաւ առ մեզ, ամենայն քահանայք հանապազօր մատուցանեն զթիւ պատարագ, մարթ է ընդ հիւսիս և ընդ հարաւ պատշաճապէս կանգնել և այլ սեղանս՝ վանդակօք շուրջ պատեալ» (հ. 656):

Ստոյգն այն է՝ որ առաջին դարերուն եկեղեցիք մի միայն սեղան ունէին արևելակողմը խորանին մէջ (Ագաթ. ձժե. փաւստոս, Գ, ժԳ. Օձնեցի, 26), ինչպէս էին և Տեկորոյ տաճարը, Աստուածածին Հին Թալնոյ՝ զորժ Լ. դարու, և այլք ումանք: Բայց ննջեցելոց համար մինչև քառասնական հանապազօրդ պատարագներ սեպհականելու սովորութիւնը, որ յառաջագոյն անձանօթ, Ը դարուն արդէն կ'երևի ի Հայս (Ժողով Պարտաւայ, կան. ժԸ), ծնունդ տուաւ միանգամայն թիւ պատարագին<sup>1</sup>, և ստիպեց սեղաններն ալ բազմացնել եկեղեցոյն չորս անկեանց մէջ ուրոյն խորանիկներով, յաճախ զոյգ զոյգ

1. Ար մատչէր, ըստ աւանդութեան որ հասած էր մինչև ցԱմբրոնացին, «առանց սպասաւորութեան սարկաւազի, առանց հպատակութեան զպրի, առանց անուշաճօտութեան ինկի, առանց լուցման ջահի» (Մեկ. պոր. 179): Իւր ծագման մասին տեսնել իմ աշխատութիւնս Ս. Պար. Օրերն են, 59 և յաջորդք:

իրարու վրայ նստած: Այսպէս՝ Տաթևոյ նախկին կաթողիկէն, հիմնեալ 895ին, ունէր «չորս խորանս բաց յաւագ խորանէն» (Ստ. Որբել. ԽԱ): Սանահնի Ամենափրկիչը, 967էն, ինն սեղան ունէր՝ զորս և կը պահէ ցարդ (Ազգոր. Հանդես, 1901, 383-4): Լամբրոնացին կ'ըսէ՝ թէ «բազմացուցին ի մի տեղ տասն աւելի կամ պակաս ծակոտեալ մատրուսս խորանօր և սեղանովք, ըստ նմին և քահանայք՝ (պատարագի) թուոցն լցուցիչք» (Պատր. 178): Իննական խորան ունէին Նորավանից եկեղեցին՝ 1216էն (Որբել. ԿԵ), Յովհաննավանիցը՝ 1217էն (Զարարիա յԱյրարատ, 167), Գանձասարին՝ 1238էն (Մ. Եպ. Բարխուտարեանց, Արցախ, 173):

Տարսոնի ազատախոհ առաջնորդը չբնականորժեց պատարագի մեծ խորհրդոյն այդ անշքացման, և տէրունական հասարակաց սեղանին առանձնականի վերածման (Պատր. 438-40). մանաւանդ զայն դրամով սեպհականելուն, որ եկեղեցւոյն «կրպականոցի» ու շնորհքը «վաճառելու» երեւոյթը կու տար իրեն (անդ, 107 ևն): Եւ իւր թելադրութեամբ (անդ, 201, 202, 223, 227 ևն) և օրինակաւ (առ Լևոն,

228) Հաստատուեցաւ Կիլիկիոյ մէջ համախումբ և համահաղորդ պատարագը, — թէև ազգին մէջ մնաց նախկին ոճն ալ, — որոյ ղէմ մրմոացին ժամանակի արևելեան պահպանողականը իբր օտարոտի գործ (Որբել. ԿԹ). չյիշելով թէ Եկեղեցւոյ հրնագոյն ձևն էր այդ, նոյն ինքն Հայոց ալ սեպհական՝ նախկին դարերուն (Փաւստոս, Գ, Գ), և պատարագին մէջ անգամ վկայուած, «Յիշեա Տէր... զպատարագիս մատուցողքս», ինչպէս սրամտութեամբ կ'անդրադարձնէ Լամբրոնացին (Պտր. 424): Մեր զուցէ պատեհութիւն պիտի չունենանք հետևելու այդ մեր Հարց և այժմու կաթողիկեայ Յունաց իսկ օրինակին: Բայց զոնէ մոռնալու չենք՝ որ միջնադարեան հայ ծէսը և եկեղեցւոյ ճարտարապետական վայելչութիւնն ալ կը պահանջեն՝ որ սեղանը գտնուին միշտ խորանիկներու մէջ, ինչպէս է յաճախ յարեմուտս անգամ:

Ուշադրութեան արժանի է նաև սեղանին հին ձևը, որ էր այսպէս: Չորեքկուսի տափարակ, ինչպէս կը նկարագրուի Իհնուց (Ազաթ. ևն): Յառաջագոյն փայտեղէն ևս (Խորեն. մատեն. 302), յետոյ լոկքարեղէն (Ռձն. 26): Հաստատուած էր խա-

ըրսխաւոր սեակ մը վրայ, բոլորշի, չորեքկուտի կամ բազմանկիւն ձևով, ինչպէս կ'երևի 1248ի Չեռնադր. տետրակի պատկերին և Հայաստանի հին եկեղեցեաց մէջ, և զոր Յոյնք կը պահեն ցարդ: Այս սեան ներքև կը հանգուցանէին սրբոց նշխարները (Ագաթ. ճՁ. կաղանկ. Բ, ԻԹ): Ազնիւ պսակ կամ կամար մը, շատ անգամ ոսկեղէն և ականակապ, սեղանին շուրջ կը զսպէր անոր պատուական ծածկոյրը զոր պիտի տեսնենք (Օձն. 140. Յովհ. պատմ. 1, 2): Գմբեթարդ խաչածայր հովանոց մը, Սահակայ տեսլեան մէջ տետրակեղ կոչուած և ոսկեղէն, կը բարձրանար սեղանին վերև չորս սիւներով, որ կը նստէին անոր անկեանց վրայ (Փարպ. 81. նկար 1248ի ևն). և որ գուցէ միակ ու հնագոյն ոճը լինելու չէ. յոյն և լատին հին եկեղեցեաց մէջ սիւները վար կ'իջնեն. և Թեսաղոնիկէի Ս. Գէորգայ խճանկար մը՝ Գ. դարէն՝ սիւները կը հասցնէ սեղանի պատուանդանին երրորդ կամ վերջին աստիճանը<sup>1</sup>:

4. - Սիւնհողոսը զատելով բարձր բնմը

1. Texier et Pullan, *Architecture byzantine*, տ. 33.

դասէն՝ որ անոր ստորոտը լինելու է, վերջնոյս մէջ կը բանայ մկրտարանի դուռը, և կ'ուզէ՝ որ «առընթեր դրանն մկրտարանի կանգնեացի աթոռ թեմական Եպիսկոպոսի» (հ. 656), ինչպէս է այժմ: Սակայն դիտելի է՝ որ եպիսկոպոսական աթոռը միշտ բեմին վրայ կը դնէ պատմութիւնը (Փարպ. Փէ. Օձն. 141. Լամբր. Պար. 525), ինչպէս էր բոլոր քրիստոնէից աղօթատեղեաց մէջ<sup>1</sup>: Հին եկեղեցեաց բեմը խոր ու լայն, և կողմնական սանդղոց լայնութեան չափով խորանէն դուրս կարկառած, յարմար էր և պիտի կարենայ լինել նաև այժմ՝ իւր վրայ ընդունելու աթոռը, ինչպէս է արդէն ինչ ինչ հայ ու եւրոպական եկեղեցեաց մէջ: Իսկ ժամերգութեանց պահուն Եպիսկոպոսը նստելու է աջակողմեան դասուն գլուխը, սեպհական աթոռի մը վրայ, ինչպէս ազգիս մէջ կը լինի սովորաբար:

5. — Կը սահմանուի նաև՝ որ «ի պառշած վայրի զիցի ամպիոնն ի բարձու՝ առ ի քարոզութիւն» (հ. 656): Ամբոնը, — ինչպէս սովորաբար կը գրեն նախնիք

1. Cabrol, *Diction. d'Archéol. Chrét.* Բ, 25...

յունարենի համաձայն, — որ հարկաւոր համարուեր է յոյն և արևմտեան ընդարձակ եկեղեցեաց համար, գոյութիւն չունէր Հայոց հին տաճարաց մէջ՝ որոնք իրնէ անձուկ եղած են հասարակօրէն: Եւ հետեոզութեամբ Յունաց՝ կիլիկեցւոց ժամանակ կը յիշուի անգամ մը միայն, լինելով աւետարանի ընթերցման տեղի, «առ դուրս խորանին կամ յամպոնն» (Լամբր. Պտր. 205), թէև աստի խստիւ չհետևի իրական գոյութիւնը Հայոց բով՝, որոց քարոզութեան սովորական վայրը բեմն եղած է միշտ, որով և քարոզութիւնը կոչուած է քիմքասացութիւն (Խորեն. Գ, կե. խորսով, Պտր. 8. Մաշտոց ժԱ դարու): և վանացս 1287ի տօնացոյցը կը նշանակէ աւագ Հինգշաբաթու «քարոզ պատուիրանին», զոր քահանայից գլխաւորը «քարոզէ ի վերայ քեմիկն»: կը հետևի՝ որ այժմ ալ փոքր եկեղեցիք կրնան ազատ լինել ամբօնի աւելորդ ծանրութենէն, որ աղօթավայրի ճարտարապետական վայել-

1. Որոնք Լամբրոնացիէն շատ կանուխ սկսեալ՝ բուրոզին թողած էին հանդիսաւոր պատարագը, ուստի նաև աւետարանի հրապարակային ընթերցումը, ինչպէս գտաւ նոյն ինքն Լամբրոնացին (Պտր. 440):

չութեան հետ ալ անմիաբան է, և զոր  
չունին արդէն ուսահայ կաթողիկեայք:

6. — Աւագ սեղանին քով կը նշանա-  
կուի «ի հիւսիսակողմն կոյս՝ ընծայարան  
վասն հանդիսաւոր պատարագի» (հ. 656):  
Այդպէս կոչուած զոյգ խորշերը, կամ ըստ  
հնոց պատուհանք (Որբել. Ը), կ'երևին հին  
եկեղեցեաց մէջ ևս, և էին պահարանք Ս.  
Հաղորդութեան և Սրբոց նշխարաց, ըստ  
այլ և այլ ակնարկութեանց նախնեաց  
(Որբել. անդ. Նարեկ. 386): Ասոցմէ զատ՝  
բոլոր հին եկեղեցիք, որոց աւերակները  
վկայ կան ցարդ, ունէին երկու սենեակ-  
ներ յաջմէ և յահեկէ աւագ խորանին,  
այժմեան կրկնակ խորանիկներուն տեղ,  
ցած քան զբեմն, և իրենց մուտքը դէպ  
արեւմուտք. հարաւայինը կը կոչուէր ա-  
ւանդատուն կամ սարկաւազատուն, ուր կը  
զգենուին և կը պատրաստուէին պատա-  
րագի (Լամբր. Պտր. 193, 237), և հիւ-  
սիսայինը՝ խորհրդանոց (Պճնեցի, 140), և  
անոր մէջ ընծայարան և ընծայանոց սեղանը՝  
որոյ վրայ կը պատրաստէին նուէրները,  
և ապա կը «վերաբերէին», վարէն վեր  
կը բերէին «որպէս ի ժողովրդենէն»  
(Լամբր. 329, 330), ինչպէս կ'ընեն ցարդ



ուրիշ արևելեայր ևս: Գեղեցկագոյն չէ՞ր  
և արժանի նորոգութեան՝ աւանդատանց  
նախկին ղիրքը և վերաբերութեան այդ  
հին ձևը:

7. — Եկեղեցւոյն շինութենէն վերջ  
պիտի նուիրագործուի այն. և այս՝ կրկին  
ձևով ըստ Սիւնհոդոսին. « օծանել կամ  
օրհնել » (հ. 652, 661, 662): Օծանել  
ըստ Հայոց և Լատինաց է, օրհնել լոկ՝  
Լատինաց: Ուշագրաւ է՝ որ երկու տար-  
բեր ծիսեր միանգամայն թոյլ կը տրուի  
հոս: Եւ ո՛րքան մեծ է զանազանութիւնը  
զանցառութեան կամ գործածութեան մե-  
տոնին, որոյ օծումն յետ հաւատացելոց՝  
մեծագոյն սրբութեանց յատուկ է ի հնուց  
մեր տոհմային արարողութեան մէջ. խա-  
չի, պատկերաց, սեղանոյ, սկւոյ և մաղրզ-  
մայի, աւագանի, զանգակի, և նոյն ինքն  
Աստուծոյ տան (Օձնեցի, 26, 43. Ստ.  
Սիւնեցի, յԱրրտ. 1917, 204), որոյ սըր-  
բացած որմը կը համբուրէին նախ հաւա-  
տացեալը և ապա ներս կը մտնէին (Յոհ.  
Մամիկ. 10), որուն կ'ապաւինէին իրենց  
նեղութեանց մէջ, ինչպէս Բարիկ սիւնի՝  
հոնին հետ մենամարտի պահուն գոչեց.  
« Օգնեցէ՛ք ինձ, Սիւնեաց եկեղեցիք » (Մով.

կադանկ. Բ, Ա). և զոր իրենց երդմանց վկայ կը կոչէին՝ նման խաչին և աւետարանին<sup>1</sup>։ Ընդ հակառակն պարզ օրհնութիւնը կը տրուէր զգեստուց, ջրոյ, արմրտեաց, աղի, որոց աստիճանին կրնայ չիջնել Սրբավայրը։ Եւ արդէն Սիւնհոգոսն ինքնին ցոյց կու տայ օծման գերազանցութիւնը, ի խորհրդականս հաշուելով «աղօթք մատուցեալք առ Աստուած յօծեալ Եկեղեցւոյ» (հ. 587), և «օծմունք Եկեղեցւոյ և անձանց» (հ. 591)։ Եթէ օրհնութիւնը գեղեցիկ է և բաւական արեւմտեայց, ոչ մէկ հարկ կը ստիպէ զմեզ գեղեցկագոյնը գեղեցկով փոխանակել. մանաւանդ որ «պարտ է զգոյշ լինել յայսպիսի խառնակութենէ կամ շփոթութենէ ծիսից... յանօթ առեալ ինչ յայլմէ ծիսէ» (Սիւնհ. հ. 619)։

Տ. — Պատարագի սեղանը «լիցի ծածկեալ երեքկիև կտաւովք... վերինն քան զայլսն ազնուագոյն և մեծագին» (հ. 437)։ — Նախնիք կը կոչէին զգեստք կամ հանդերձք սեղանոյն. և անոնց նախկին թիւը տարրեր էր այժմու արեւմտեայց երեքէն։

1. Հմտ. իմ աշխատութիւնս՝ Երրորմե ճիւղ Հայոց մէջ, 47.

ԺԱ դարու Մաշտոցն և յաջորդը՝ Եկեղեցւոյ օրհնութեան կանոնին մէջ կը գրեն՝ թէ «զգեցուցանեն զսեղանն և յրև հանդերձիւք»: Բայց ի սովորական գործածութեան այս թիւն անորոշ թողուած կը թուի, ինչպէս է ցարդ Յունաց քով ալ. որով Տաթևացին, որոյ մանրագնին աչքէն որոշ թիւ մը՝ եթէ լինէր գէթ իւր դարուն՝ չպիտի վրիպէր, կ'ըսէ՝ «զանազան ծածկոյթ սեղանին» (Քրգ. ամբ. 710): Ասոնց վերինը նոյնպէս ազնուագոյն էր, «վայելչական և զարդարուն» (Օձնեցի, 129). կամ «զգեստ կերպասուց» (Լամբ. Պտր. 130): Նարեկացին կը նկարագրէ Ապարանից Եկեղեցւոյն ունեցածն՝ «ի զանազան թելոց գունեւոց երկնակերպ կապուտակատիպ յիւլամացի կղզեաց ծովայնոց ծիրանածուէն կերպասուք» (383): Այս զգեստը կ'իջնէր գրեթէ սեղանին ստորոտը, ինչպէս կ'երևի 1248ի նկարին մէջ, որ նոյնպէս ճոխ է, և կը զսպուէր պսակէն (աստ, 101):

9. — Ի սրբազան սպասս կը հաշուի կափարիչը (հ. 641), որ արևմուտքէն է, և անձանօթ արևելեայց: Ըստ հայ արդի սովորութեան՝ և ակնարկութեան խորհրդատեսարի հրահանգաց, ընծայը փակ պիտի

մնան ծածկոցով մինչև ի «Սրբութիւն սրբոց», բացուելով սրբագործութեան և Հոգւոյն կոչման պահուն. որով մաղզմայն ալ պիտի մնայ միշտ սկւռոյն վրայ, և յետ ի սուրբ ի սուրբին՝ Մարմինը պիտի բռնուի բաժակին վրայ: Եթէ մաղզմային այժմու ծանծաղութիւնը մեր բով՝ չի ներեր փակուամբ ծածկոցով յետ սրբագործութեան, բայց մաղզմայն կրնայ մնալ միշտ սկւռոյն վրայ, ինչպէս արդէն կ'ընեն մեզմէ շատեր. և այս պարագային կափարիչն աւելորդ կը դառնայ բոլորովին:

10. — Ընդ հակառակն սրբազան սպասուց մէջ (Տ. 641, 645) աներևոյթ է, անշուշտ անուշադրութեամբ, աւետարանի դաստատակը, հայ ծիսին յատուկ, որ ակներև է հին նկարուց մէջ, սկսեալ Մլըէի աւետարանէն՝ 902ին գրուած, և արդի սովորութենէն դեռ պահուած: Աւետարանի մեծարանաց այս աւանդական նշանը, զեղեցիկ արդարև, կարելի էր աւելի հաստատուն պահել թէ ձայնաւոր ու թիւ պատարագաց և թէ ժամերգութեանց մէջ, ինչպէս արդէն հաւատարմութեամբ կը գործադրուի ուրեք ուրեք:

11. — Խորանին համար կը նշանակուին

«Վարագոյրը երկու՝ որոց մին ստուար և գունաւոր, միւսն՝ նուրբ և սպիտակ» (հ. 645)։ Այդպէս ըստ այժմու սովորութեան հայ կաթողիկեայցս թուրքիոյ, ուր ուսաստայր մեծը միայն ունին։ Տոհմային հին եկեղեցեաց մէջ ալ մի միայն էր վարագոյրը, որ պատարագի որոշ վայրկեաններուն զխորանը կը ծածկէր պաշտօնէիւք հանդերձ, և որուն կ'ակնարկէ Խմաստասէրն երբ կ'ըսէ. «պարածածկին վարագուրաւ դասը քահանայից» (133)։ Հետեւաբար թանձր էր այն, նարեկացւոյն ըսել տալու համար՝ «պատրուակ անըոյթ տեսութեան» (382), և յաճախ ճոխաբար ասղնեգործ։ Ահա՛ զոր օրինակ՝ Ապարանից եկեղեցւոյնը ժ դարուն. «զվարագուրացն անջրպետարան... ի պատուական նիւթ պայծառ պաստառաց եզիպտացի դիպակակիտուած բազմատեսիլ ոսկեփառ և հրակերպ» (անդ)։ Եւ ժԳ դարուն՝ ազնուական տիկին մը, Արզու խաթուն, իւր դստերաց հետ կը նիւթէր և Գետկոյ Աստուածածնին կը նուիրէր վարագոյր մը՝ «զարմանալի տեսողաց, ի մազոյ այծիցն կակղագունից, ներկեալ՝ պէսպէս և զանազան գործ գնդակերպ, և նկարեալ

պատկերօք ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն»։ Նման գործեր նուրեց ուրիշ եկեղեցեաց ալ (Կիրակ. ԺԲ), ի խրատ մեզ՝ թէ աւելի խնամ տանելու ենք մեր վարագուրաց։

Այն եկեղեցիք՝ որ աւագ սեղանին վրայ տետրասկեղ ունէին (աստ, 101), անոր չորս երեսները պատարագէն դուրս ծածկած կը պահէին ուրիշ կտաւով մը, բաժանուած չորս փեղկերու, ինչպէս կ'երևի երուսաղեմեան աւետարանի մը նկարին մէջ (Բագմվ. 1908, 103), համաձայն ուրիշ եկեղեցեաց սովորութեան հետ<sup>1</sup>։ Այսպիսի էր վաղարշապատու կաթողիկէին մէջ ևս, «տետրասկեղ... ծածկեալ յոյժ քարակ կտաւով սպիտակափայլ զունով»։ և թեթև հովը փչելուն՝ «բացաւ փեղկ մի ծածկութի կտաւոյն» և սեղանը տեսնուեցաւ (Փարսպ. 81-2). նշան՝ թէ կտաւդ անթափանց էր, թէև նուրբ։ Այդ պահուն ժամերգութիւն կը կատարուէր, և ահա սեղանը փակ էր. և պատարագին սկիզբը միայն կը լինէր «սեղանոյն բա-

1. Martigny, *Diction. des Antiq. chrét.* Paris, 1889, էջ 491.

ցումն» (Օձն. 141): Ասոր յաջորդեց փոքր վարագոյրը, որ ըստ Ենովբայ ակլայեցւոյ (1764ին՝) տակաւին կը գործածուէր՝ լոկ սեղանը փակ պահելու արտաքոյ պատարագին: Սիւնհոգոսը կը հաստատէ հին կտաւին նրբութիւնն ու սպիտակութիւնը. իցի՛ւ թէ ձեն ու պաշտօնն ալ. զի աննը պատակ և անտեղի է կրկին վարագուրաց գործածութիւնը պատարագի պահուն:

12. — Բուրուառի մասին կը կարդանք. «Մի կցեսցին շղթայիցն զանգակք փոքրրկունք, քանզի գոհհիկ իմն է այս և օտար ի պաշտամանէն բուրուառի» (հ. 645): — Թողլով ճաշակի խնդիրը՝ որ անվիճելի է ըստ առածին, պատմական տեսակիտով միայն ղիտել պիտի տամ՝ թէ այդ զանգակիկներն արդէն ի գործածութեան կը յիշուին ԺԳ դարուն Մխիթար Գոշէ՛ ի վիրս թղթին մէջ: «Եւ ոչ զանգակ ունել (Հայոց) ի բուրուառսն և կամ չունեն (վրաց՝) հերձուած է, այլ որպէս ի քչոցն է, ազդ առնել միայն խորհրդական աղօթիցն, և ահաւոր առնել զժամ պատարագին ի լսելիս» (Մարտատ, 1901, 61): Համեմատութիւնը ճիշդ է. քչոցին պաշտօնն ալ ճանճերը վանել էր, և սակայն

մեր քով զանգակներով զարդարուեր է, ինչպէս բուրուաոր: 1397ին զանոնք կը յիշէ դեռ Գր. Տաթևացին՝ բուրուաոր նըկարագրին մէջ (Հարցմ. Թ, Ծ): Յոյնք մինչև ցարդ կը պահեն զաղոնք Հայոց պէս, խառնելով շղթայից հետ, ինչպէս տեսայ նման եթովպական բուրուաո մ'ալ Հոովմայ Ազգագրական թանգարանին մէջ: Եւ վենետկոյ Ս. Մարկոսի սեղաններէն մին, Ժ: Գարու գործ, ճակատին վրայ քանդակուած ունի երկու խնկարկու հրեշտակներ, զանգակաւոր բուրուաոներով, որ անտարակոյս արդիւնք է տեղւոյն նախկին համանման սովորութեան:

13. — Կարելի էր ջնջել պաշտօնէից օտարաձև պատմութեաններն անչառ ուսանոցով, որոնք կ'երևին դեռ շատ տեղեր՝ հակառակ հին նկարուց և այժմեան ծիսի ազգիս: Արդէն Ս. Ժ. Տ. Հ. 1833ին կը գրէր առ Նախագահն՝ թէ «վասն շապկացն դպրաց՝ ըստ ձերում սովորութեան արասջիք» (Սիւնհ. էջ 679):

14. — Սիւնհոդոսը զանազանութիւն կը դնէ շապկաց գոյներու. ընթերցողաց՝ յալընրագոյն, երգմեցուցչաց՝ կապոյտ, ջահընկալաց՝ կարմիր, որոց մէջ կը տեսնէ



«խորհրդաւոր նշանակութիւնը», և կը հրամայէ՝ որ «որչափ ինչ հնար իցէ՝ երկիւղածութեամբ պահեսցին» (հ. 643): — Գունոց այս խտրութիւնը սակայն, արդիւնք արեւմտեան ծիսի, ինչպէս նաև եպիսկոպոսական ձեռնադրութեան կարգին մէջ՝ զանազանուած մի և նոյն պաշտօնէից համար միայն, ծիրանի՝ կապուտակ ու կարմիր, և նշանակութիւնըն անձանօթ մեր մէջ, տեսական է միայն, և գործնակաւնապէս գոյութիւն չունի, ինչպէս որ յիշեալ աստիճանաւորք ալ ի գործածութեան չեն այսօր, և իրենց ծագումն իսկ եկամուտ է մեր քով, ինչպէս տեսանք (աստ, 82-3):

Իսկ նախնեաց օրով գունոց միակ խտրելին ու պատուականագոյնն հայ և ընդհանուր Եկեղեցւոյ մէջ՝ սպիտակն էր, օրինակ մաքրութեան և լուսաւորութեան հոգւոյ: — Հաւատացեալք՝ զատկի տօնին սպիտակ կը զգենուին, որուն կ'ակնարկէ Լիզիշէ՝ ըսելով Վարդանանց համար, թէ հաղորդուելով Արտազու մէջ, «եղեն յուսոզգևստք որպէս ի տէրունեան մեծի սուրբ զատկին» (յեղ. Ե), համաձայն միւս եկեղեցեաց (Cabrol, Գ, 3000): — Երախայք

յետ մկրտութեան նոյնպէս կը հագնէին (Ագաթ. ձժԲ. Լամբր. Պար. 45. Մաշտոցք), ինչպէս կ'ընէին ուրիշ ծիսեր ալ (Cabrol, Ա, 3130): – Մեռելոց նոյնպէս սպիտակ կը զգեցնէին Հայք. Նոյ ճգնաւորը հանգուցեալ Ստեփանոս Սիւնեցին կը տեսնէր «սպիտակ նափորտամբն» (Որբել. Լ): Վարդան պատմչին եղբօր՝ Ներսէս եպիսկոպոսի մարմինը գտնուեցաւ «սպիտակ պատարագի զգեստովն պատնած», ինչպէս կը պատմէ Գաւիթ վիրապեցին (Կոնդակ): Եւ բոլոր հին Մաշտոցք սպիտակ հագուստը կը պատուիրեն ննջեցեալ քահանայից: Լեոն վերջին՝ ըստ իւր բաղձանաց յուզարկուեցաւ Պարիսի մէջ սպիտակ հագուստով՝ թէ ինք և թէ յուզարկաւորը, «ըստ թաղման Հայոց թագաւորաց», կ'ըսէ Զ Կարոլոսի պատմութիւնը (Զ, 9): – Ներսէս եպիսկոպոսի օրինակէն տեսնուեցաւ՝ որ պատարագչին սովորական զգեստն ալ սպիտակ էր: Նոյնը և Գր. Տաթևացին կ'աւանդէ, թէ «ի ժամ պատարագին պատշաճի քահանայիցն սպիտակ հանդերձ» (Քրդ. ամբ. 182), ինչպէս էր Յունաց մէջ ալ (Cabrol, Ք, 3001): Եւ 1337ի նկարի մը մէջ՝ Սիւնեաց երկու

մետրապոլիտը սպիտակ նափորտ հագած են (Սխական, 20):

Ընդ հակառակն այս խտրութիւնը չկար ուրիշ պաշտօնէից նկատմամբ, բաց ի սենն՝ որ սգաւորաց ու կրօնաւորաց յատուկ էր: Սպիտանէս կը յիշէ հայրապետանոցին Էդարու սպասուց մէջ «գայլ և այլ պայծառ պատմուճանս պէսպէս զարդուց, դիպակաց և կերպասուց և ծիրանեաց՝ գունակ գունակ երփն երփն և երանգ երանգ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս» (Բ, 1, Ը): Չկար խտրութիւն նաև ուրիշ պաշտամանց մէջ, բաց ի սրողէ եպիսկոպոսին կամ կնգղէն<sup>1</sup>, որ Եկեղեցօրհնէից հին կարգին մէջ սպիտակազարդ կը նշանակուի (Մաշտոց ԺԱ, դարու ևն). և ուր հանդերձին միւս մասունքն ազատ կը թողուին: 1248ի Չեոնադրութեան տետրակը նկար մ'ունի, ուր ձեոնադրիչ եպիսկոպոսը կը կրէ նոյնպէս սպիտակ կնգուզ՝ դեղին խաչով, սպիտակ եմփփորոն, կարմիր նափորտ, դեղին ուրար և կապոյտ

1. Արևմտեան խոյրը, ԺԲ գարէն նուէր ընդունուած ի Հայո, սեպհական էր միայն պատարագի, ինչպէս կը զգացնէ Վարդան (2Թ). Իսկ Հանդիսից մէջ բնիկ սրողը կը գործածուէր. զանազանութիւն մը՝ որ իսկապէս գեղեցիկ էր և հետեւի:

պատմուճան. իսկ առընթերակաց երեք ուրարակիր սարկաւազունք, որոց մին քահանայ կը ձեռնադրուի, կը կրեն պատմուճաններ՝ կապոյտ, կանաչ և կարմիր գոյներով:

15. — «Ոչ սարկաւազունք, կ'ըսէ Սիւնհոզոսը, և ոչ քահանայք՝ որ զպաշտօն սարկաւագի կատարիցեն, մի արկանիցեն զսաղաւարտ ի կիր» (հ. 644): — Արդարև սաղաւարտի գործածութիւնը պատարագչին կողմանէ իսկ՝ համեմատաբար շատ նոր է, դատելով զըջագրաց նկարներէն. և չգիտեմ՝ որքան նորագոյն սարկաւագաց համար: Սակայն ասոնցն ալ ունի քահանայականին չափով արդարանալու հնութիւն մը. 1761ին գրուած գրապանակ մ'արդէն կը նկարէ զՍ. Ստեփանոս նախասարկաւագ իւր պաշտաման մէջ, սաղաւարտ ի զլուխ, և բուրուառ ի ձեռին, որով յայտնի է՝ թէ սովորութիւնը նկարէդ կանուխ էր. և նոյն ձևը կայ նաև Կիլիկիոյ Միքայէլ կաթողիկոսի կոնդակին մէջ՝ 1837 թուականին. երկուքն ալ ի Ս. Ղազար:

16. — Ինձ անծանօթ է պատճառն այն տարբերութեան՝ որ եպիսկոպոսաց կոն-

քեան «ի ձախակ կողմանէ» կախել կու տայ, և կաթողիկոսին՝ «գալմէ կողմանէ» (հ. 643): — Հին նկարներու մէջ չկայ այդ խտրութիւնը, և երկու կարգաւորքն ալ աջակողմն ունին. այսպէս է Լուսաւորիչ՝ Էջմիածնի դրօշին վրայ, հին գործ՝ ծանօթ ժէզ դարէն, որ է հայրապետական ձևը. և 1641ի խորհրդատետարի մը մէջ, ուր երկիցս նկարուած է եպիսկոպոս մը նոյն ձևով. յայտնի Լամբրոնացւոյն օրերէն՝ ուր «քահանայապետը», ինչպէս կը կոչէ նա եպիսկոպոսները, զայն հաւասարապէս ունէին «յաշակողմ կախեալ» (Պատր. 147): Եւ զրչի վրիպակ կը թուի ինձ կաթողիկոսօրհնէից բացատրութիւնը՝ որ «ի ձախու կողմանն» կախել կու տայ զայն նորընտիր հայրապետին:

17. — Արքեպիսկոպոսաց՝ բաց ի հովուականէն կը տրուի նաև «գաւազան խաչածև երկկարգեան», նոյնպէս և Պատրիարքին՝ գնդածևէն զատ՝ «գաւազան քառաթև» (հ. 643): — Ինձ ծանօթ է՝ որ Հայոց քով ի հնումն գաւազանը միակ ձև մ'ունէր և խաչագլուխ էր: Ստ. Սիւնեցի Ը գարուն կը նկարագրէ եպիսկոպոսն ի մուտս պատարագի, «մաքրութեան ցուպն

ի ձեռինն՝ ամփրոն... զաստուածեան եշանե  
 յաղթութեան»։ Կամ աւելի յայտնի, «ի  
 ձեռին ունի հայրապետն ամփրոն զխաչն»  
 (Վս. Եսիւերգ. աղ.)։ ԺԲ զարուն Լամ-  
 բրոնացին նոյնպէս կը պատմէ՝ թէ եպիս-  
 կոպոսաց առջևէն կը տանէին «զգաւա-  
 զանան իսաչագրութիսն» (Պատր. 201)։ Նոյն  
 զարու սկիզբը Բարսեղ կթղ. Սեաւ լերան  
 վրայ ունկնդրելով Ստեփանոս վարդա-  
 պետի քարոզութեան, այնքան հաճեցաւ՝  
 որ իսկոյն «եղ զզարդարեալ գաւազանն  
 (իւր) յոսկոյ և յարծաթոյ ի ձեռն նորա»,  
 և եպիսկոպոս ձեռնադրեց (Հյպտմ. 378).  
 ուսկից կը հետևի որ զանազանութիւն  
 չկար հայրապետական և եպիսկոպոսական  
 գաւազանաց ձեերու մէջ։ Եւ արդարև  
 կոստանդին կթղ. իւր կնքոյն վրայ քան-  
 դակուած է գաւազան ի ձեռին՝ որոյ գլուխը  
 պարզ իսաչաձև է (Սիսուան, 527)։ — Այս  
 ձևն յարեմուտս ալ ծանօթ էր. խեցեղէն  
 շատ հին կանթեղի մը վրայ քանդակուած  
 է Յիսուս նոյն գաւազանով (Martigny,  
 735). և նոյնը կար երբեմն Հոովմայ  
 քահանայապետաց ձեռքն ալ (անդ, 307)։  
 Սակայն հնախօսք կ'անգիտանան կրկնա-  
 կարգ իսաչով գաւազանը, թէև նոյն ձևն

ուրիշ խաչերու վրայ կը տեսնենք երբեմն միջին դարուն<sup>1</sup>, հակառակ եւրոպացի մասնագիտաց մէջ տիրող սովորական կարծեաց՝ թէ այդ ձևն իրապէս գոյութիւն ունեցած չէ, այլ նկարչաց զիւտ է: Եւ եթէ նոյնն այժմ արեւմտեան արքեպիսկոպոսացու պատրիարքաց նշանաց մէջ կը նկարուի, բայց իրապէս միակարգը կը գործածուի իբր գաւազան:

Հովուական գալարունը, շատ հին յարեմուտս, Հայոց մէջ կ'երևի նախ ժիզարուն, երբ Եւզինէոս Գ նուէր յղեց զայն Գրիգորի փոքր վկայասիրին, ինչպէս կը պատմէ Լամբրոնացին (Գովեստ ի Շնորհային), և զոր հարկաւ կաթողիկոսն սկսաւ գործածել: Յետոյ իննովկենտ Գ 1203ին նոյնը յղեց՝ խուրով հանդերձ՝ նաև կիլիկիոյ չորեքտասան եպիսկոպոսաց, ըստ աւանդելոյ Սիկարդոսի (Սիսուան, 69): Քիչ յետոյ սակայն մեր հայրապետաց աւելի ախորժելի կը դառնայ Եւրոպիոյ կամ կիլիկիոյ թագաւորաց գնդածեր, որ Յունաց ալ ծանօթ էր (Martigny, 736), և որուն ժիզարուն սկիզբը կը պատահինք արդէն՝

1. Schlumberger, *Un Empereur byzantin*, 421, 477. - Migne, *Encycl. Théol.* t. 27, էջ 1482-3.

Գր. Տաթևացւոյ վկայութեան մէջ. «կաթողիկոսի (գաւազանն) յոր, որ նշանակէ զիշխանութիւն ի բոլոր յազգս իւր». մինչդեռ «Եպիսկոպոսի՝ կես և միակուսի, որ իշխէ միայն ի վիճակս իւր». (Քրդ. Թմբ. 168): Իսկ վարդապետացը կը նկարագրէ՝ «գլուխն խաչաձև» (անդ). մնացորդ այն շրջանէն՝ ուր գաւազանը մի միայն ձև ունէր բոլոր աստիճանաւորաց համար, և յորում Շնորհալին կրնար մի և նոյն գաւազանին կրկին խորհուրդ ընծայել. «նախ հովուական և ապա վարդապետական» (Մեկն. Բարձրացուցեքի):

Ժ. դարուն կը պատահինք վարդապետական նորագոյն ձևերու: 1652ին ի կոստանդնուպոլիս գրուած շարականի մը մէջ՝ Լուսաւորիչն իբր վարդապետ Եկեղեցւոյ՝ բազկացը մէջ կը կրէ գաւազան մը՝ որ T տառին կը նմանի, վերին մասը՝ միայն թեթևակի աղեղնածև: Իբր վարդապետ ըսի Լուսաւորչին, զի նոյն նմանութիւնն է նաև Սվաննէս անուն վարդապետի մը կնքոյն վրայ՝ 1719 թուականին. միայն գլուխն ուղիղ և անոր երկու ծայրերը փոքր մի գնդացած: Այս երկուքն ուլ հետևողութիւն էր ուրիշ արևելիայց (Martigny,



307), և իրենն հիմն ունէր խաչի հին ձեւերէն մին (Cabrol, Գ, 3053, 3057): Երուսաղեմացի Յովհաննէս վարդապետի մը կնքոյն վրայ, 1655ին, կրկին թևերը կ'աւարտին ծաղկով, (գուցէ Ահարոնի զաւազանին խորհրդով), ու դէպ ի վեր զաւարած՝ նման այժմու վարդապետականին օձերուն: Վերջապէս քան զամէնը նոր է օձազուխը մեր մէջ, թէև առ Լատինս հին դարերուն միայն ծանօթ (Martigny, 736). և տեսած եմ Շնորհալոյ թղթոց Պետրբուրգեան տպագրութեան մէջ՝ 1788ին, Ս. Մեսրոբայ պատկերին քով, օձի զոյգ գլուխներն ի վեր զաւարած, և մէջտեղ խաչիկ մը (էջ 79): Նմանապէս նոյն դարու ուրիշ ձևերու մէջ:

## ԺԱ

### Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԷՋ

Քանի մը կիտեր՝ որոնք խորհրդատետրի սրբագրութեան և հրահանգաց խմբագրու-

թեան մէջ իրենց տեղը պիտի ունենան, կ'արժեն առանձին ուշադրութեան:

1. — Կերայք և Հեղու: Սրբագործութեան «յաւանդութենէ նախնեաց» եկած ձևին մէջ՝ Սիւնհոդոսը կը պատուիրէ ամէն հայ քահանայից միապէս ըսել կերէ՛ք, և ոչ բնաւ կերայք (հ. 409): — Այս հրամանին շարժիչ չեմ կարծեր միակերպութեան պահանջը, որ թոյլ կու տայ ընթերցուածոց անհաւասարութիւնը Պատարագի մէջ (հ. 638), գլխարկի վրայ շղարշի գործածութիւնը կամ ոչ (հ. 725), օծումն կամ օրհնութիւն եկեղեցւոյ (աստ 105), որքան հաւանօրէն կերէ՛ք ձևին «յաւանդութենէ նախնեաց» կարծուիլը: Որուն համար պէտք է ըսեմ պարզապէս՝ թէ արդի աամկօրէնն է, ինչպէս և հեղանի՝ աղաւաղ նոր ձև՝ փոխան հեղու հարազատին: Աւետարանը՝<sup>1</sup> ուսկից անուած են սրբագործութեան խօսքերը, և պատարագամատուցի բոլոր գրչագրաց մէջ, Ոսկերեւրանի, Խոսրովու, Լամբրոնացւոյն և այլ մեկնչաց բով, և առ հասարակ հին հայերենին ծանօթ միակ ձևերն են կերայք և հեղու: Եթէ

1. Չնկատելով ոսկանեան խանգարումները, և անոնց հետևողութեամբ կատարուած ապագրութիւնքը:

այս կէտը քննելու դիւրութիւն ունենար Սիւնհոգոսը, որ «զվաղեմի մեր լեզու ճոխ և մեծատուն և գեղեցկագոյն՝» իմաստնարար կը հրամայէ «ի գործ ածել յամենայն մասունս սրբոց արարողութեանց» (հ. 629), չեմ տարակուսիր՝ որ պիտի յաւելուր մեծագոյն նախանձով մը. ևս առաւել Պատարագի նուիրականագոյն կիտին մէջ, ի բաց վտարելով նորամուտ ռամիկն ու աղաւաղը, և Յիսուսի ոսկի խօսքերն արտաբերելով ոսկի բառերովս՝ կերայք, հեղու։ Այս սրբագրութիւնն ուրեմն ծիսական ժողովին կը մնայ կատարել ըստ սկզբանց Սիւնհոգոսին (աստ, 18)։

2. - Ծերադարձիւն։ — Սիւնհոգոսը հաստատուած Գրիգոր ԺԶ քահանայապետի առ Մարուշեան 3 փերր. 1832 նամակին վրայ, կ'ըսէ. «Առ հայ կաթողիկեայս ծնրադրութիւն ի հանդիսաւոր պատարագի բանութեամբ հալածանաց արգելաւ, և ի վազուց հետէ սկսեալ է արդէն ի գործ ածել» . և նոյնը կը հրամայէ քահանայից թիւ ու ձայնաւոր պատարագաց մէջ (հ. 638)։

Գիտել պիտի տամ նախ՝ որ քահանայապետական նամակին այս կէտը հապ-

ճեպով կարդացուած է խմբագրողին կողմանէ : Նամակին խօսքերն են. «Սակահալածմանց՝ հանդիսական ձայնաւոր պատարագը արգելեալ գուրով առ կաթողիկեայ Հայս, գովելի ինչ սովորութիւնք արդէն իսկ մուծեալ են, որպիսիք են՝ սովորութիւն հայ կաթողիկեայ քահանայից նշանաւ խաչի սկիզբն առնելոյ պատարագի. ևս և զկնի սրբագործութեան բանից՝ ծունր դնելով երկիր պագանելոյ» (Սիւնհ. էջ 682) : Կը հետեի՝ որ «բռնութեամբ հալածանաց» արգիլուածը ծնրագրութիւնը չէր, այլ ձայնաւոր պատարագը. և թէ ասոր խափանուելովն է մտեր թիւ պատարագի մէջ ծնրագրութիւնը, որ ուրեմն հալածանքէն յառաջ չկար մեր բով :

Երկրորդ՝ Գրիգոր ԺԶ կը յաւելու. «Բնաւ ամենեկին անպատեհ համարիմք բառնալ ի միջոյ զայս ամենայն. քանզի որ որ ջանայցէ առնել զայդ, առաւել պատճառ գայրակողուրեան քան շինութեան ընծայեսցէ», և կը յարէ՝ թէ «առանց խորհրդակից լինելոյ ընդ Առաք. Աթոռոյ» պէտք չէ նորաձևութիւններ ընել պատարագի արարողութեանց մէջ՝ «նաև անուամբ նորոգեալ կարգելոյ. զարարողութիւնս»

(էջ 682-3): կը հետևի՝ որ Սրբազանին ընդդիմութեան միակ պատճառը «գայթակղութիւն» չտալն էր, որով և պայմանական. այս ինքն՝ կարելի էր նաև սրբազրել ապագային եկամուտ սովորոյթները, երբ Ս. Աթոռին հետ խորհրդակցութեամբ տեսնուէր՝ թէ այլ ևս գայթակղութեան տեղի չէ մնացած:

Երրորդ՝ զեռ աւելին կայ: Գրիգոր ԺԶ կը յաւելու. «Քանզի ի հնամի բարեկարգութեան նուիրական պաշտամանցն Հայոց՝ հանդիսական ձայնաւոր պատարագ ևեթ կատարէր, (ինչպէս Սրբազանին հասկացուցեր էին սխալմամբ), և յայն սակս իսկ արարողութիւնքն միայն այնր պատարագի սահմանեալ գտանին ի ծիսական գիրս իւրեանց» (էջ 683): Ուր յայտնի է՝ թէ տարբերութիւն մը կը դնէ ձայնաւորի ձևին մէջ, որ իւր արարողական հին սահմանն ունի՝ միշտ հաստատուն պահելի, ուստի առանց ծնրադրութեան, — այս է իւր միտքը, — և թիւ պատարագին մէջ՝ որ ըստ իւր ենթադրութեան ի Լատինաց էր, ուստի և անոնց ձևով՝ այս ինքն ծնրադրութեամբ ալ պահելի՝ ցորչափ հակառակը կրնար գայթակղեցնել: Այս ի-

մաստը յայտնի կ'ընեն Ս. Ժողովոյն Պատասխանիքն ալ՝ նկատմամբ «սպայրարաց ինչ այդը (ի Պոլիս) յուզելոց», զոր նոյն Քահանայապետը 17 Յուլիս 1833 թղթին կը յարէր. և յորում կ'ըսուի. «Ապաքէն յայտ իսկ է, զի մարթի գոյգ հաւասար երկիր պագանել խորհրդոյն Գոհութեան՝ և խոնարհեցուցանելով զթիկունս և զգլուխ, և ծունր կրկնելով: Նմին իրի չիք ինչ արգել՝ զի ի հանդիսական ձայնաւոր պատարագի գառաչին սովորութիւնն ի վար արկանիչիք. նոյնպէս զնշան խաչի ի նմին իսկ պատարագի ըստ սովորութեան ձերում ի գործ ամջիք» (էջ 678): Պարզ է՝ թէ այդ ժամանակ Ս. Աթոռը, պատրաստ միշտ յօժարելու մեր ծիսի վերանորոգութեան համար մատուցուած առաջարկութեանց, անպայման կերպով թոյլ տուաւ արևելեան երկրպագութիւնը ձայնաւորին մէջ, և թէ իրեն համար «գոյգ հաւասար» էր այն լատին ծնրադրութեան, այս ինքն անոր պէս պատուական յաչս Ս. Քահուն:

Զորբորդ՝ կը մնար սակայն վերապահութիւնը թիւ պատարագին նկատմամբ: Տարիները յառաջ գնացին. Ս. Աթոռը շղաղրեցաւ ամէն առթիւ յեղյեղելէ իւր

բաղձանքն՝ արևելեան ծիսերն անարատ պահուած տեսնելու, և արևմտեան դաստիարակութիւնը բացաւ մեր մտքերը՝ հետզհետէ լաւագոյնս ըմբռնելու Ս. Աթոռոյն բաղձանաց գեղեցկութիւնն ու կարևորութիւնը Եկեղեցւոյ համար: Եւ արդէն գայթակղութեան ստուերն անգամ չէր մնացած, երբ Լևոն ՃԳԻ նշանաւոր կոնդակն եկաւ անգամ մ'ալ հաստատելու արևելեան արարողութեանց « անվթար պահպանութեան » իրաւունքն ու հարկը (էջ 795): Աւելի բնական բան չէր կրնար լինել՝ քան այդ առթիւ ծնրաղրութիւնը փոխել յերկրրպագութիւն խոնարհմամբ, ինչպէս ըրաւ այն ժամանակ Լևոնեան վարժարանն ի Հոովմ՝ թէ պատարագի և թէ ժամերգութեան մէջ: Ս. Ղազարու մենաստանն 1844էն ի վեր արդէն կատարած էր նոյն բարեփոխութիւնը կրկին պատարագաց մէջ ևս, ինչպէս և ուրիշներ, զօրութեամբ Բենեդիկտոս ՃԳԻ յատուկ հրամանագրին որ յիշուեցաւ (աստ, 21), և անոնց սովորութիւնը վայելեց ու կը վայելէ մեր ժողովրդեան համակրութիւնը: Եւ եթէ նկատուի թիւ պատարագին ալ հին ու հայ ծագումն (աստ, 98), պատճառ մ'աւելի

պիտի լինի՝ որ անոր միջէն ալ վերնայ  
 ծնրադրութիւնն՝ ինչպէս ձայնաւորէն, ըստ  
 պատճառարանութեան Գրիգոր ԺԶի, որ  
 վերջնոյս հնուքեան պատճառաւ կ'ուզէր  
 որ հին երկրպագութիւնը պահուի:

Հուսկ՝ եթէ կատարուի համեմատու-  
 թիւն մ'ընդ մէջ երկրպագութեան և ծնրա-  
 դրութեան մեր մէջ, — ոչ արեւմտեայց  
 նկատմամբ՝ որոց ծէսն իրենց քով մեր  
 մեծարանաց միայն արժանի է, — հարկ  
 պիտի շտեանենք փոխանակելու մեր բնիկն  
 եկամտով: Երկրպագութիւնն՝ ըստ բառին և  
 էութեան կը նշանակէ համբուրել գետինը,  
 որ կը լինէր խոնարհմամբ երկու ծնգաց և  
 գլխոյն մինչև ի հող: Մերադրոօրին՝ կը  
 նշանակէր դնել երկու ծնգներն ի գետին,  
 և այնպէս կեցած ազօթել: Մեր այժմու  
 ծնրադրութեամբ երկրպագութիւնը սակայն  
 ոչ մին է, ոչ միւսը. այլ առաջնոյն վե-  
 րածուած մէկ ձևը, որ զուրկ կը մնայ  
 հնութեան յարգէն: Ընդ հակառակն արեւե-  
 լեան երկրպագութիւնը միջով չափ և համ-  
 բուրմամբ սեղանի երեսին, որ Ս. Խոր-  
 հրրդոյն պատուանդանը կամ գետինն է,  
 նմանապէս հնաւանդ (Ամբր. Պտր. 479-  
 80) ու կատարեալ ձև մ'է, և անշուշտ



աւելի վայելուչ՝ մեր երկար ու ճոխ զգեստուց հետ: Եւ հին աւանդութեամբ, որ Հայոց և արևելեայց մէջ դեռ մնացած ալ է, աւարտելու է տեառնագրութեամբ անձին. «կանգնեալ՝ զխաչն յերեսս նկարեմք», կ'ըսէ Տաթևացին (Քրգ. ձմր. 430):

Եզրակացնելով, պտուղն արդէն հասած էր: Եւ կարծես թէ 1911ի Սիւնհոդոսին կը մնար քաղել զայն, կրկնելով 1890ի ժողովոյն հետ. «Սիւնհոդոսս ոչ ինչ անհրաժեշտ համարի զծնրադրութիւն» լատինական (Գործք, էջ 175): Ժխտական արդիւնքը, ճշմարիտ անակնկալ մը մեզ, թերևս դարձեալ ժամանակի սղութեան վերագրելի է, որով կարելի չեղաւ խորագոյնս ուսումնասիրել խնդիրը:

1833ի պատասխանիքը թոյլ կու տան նաև բառնալ ձայնաւորէն անձին տեառնագրութիւնը պատարագին սկիզբը: Իմանալի է ոչ թէ ձեռին շարժումը, որ մասն է խոնարհմամբ երկրպագութեան՝ որ կը կատարուի սեղանին առջև հասնելուն, ուստի և հայկական է, այլ կցորդը՝ «Յանուն Հօր» ևն: Մի և նոյն պատճառաբանութեամբ՝ զոր ըրինք ծնրադրութեան մասին, սա ևս աւելորդ կը լինի թիւ պա-

տարագի մէջ, ինչպէս նկատուած է՝ Ս.  
Աթոռէն ձայնաւորին մէջ:

3. — Օրհնութեան ձև: — Ես կը հա-  
նեմ այս խնդիրը, որով գուցէ մեր ազգէն  
ոչ ոք զբաղած է. և որ սակայն եւրո-  
պացի հնախօսից ու ծիսագիտաց առաւե-  
լագոյն ուշադրութեան արժանի խնդիրներէ  
մին է: Անոնք հնութեան մէջ երկու զըլ-  
խաւոր ձևեր կը նկատեն օրհնութեան.  
մին՝ ամփոփմամբ ճկութիւն ու մատանե-  
մատին և կարկառմամբ միւս երեքին, զոր  
կը կոչեն յատկեական. և միւսն՝ ամփոփ-  
մամբ բութիւն ու մատանեմատին, և կար-  
կառմամբ միւսներուն, զոր կ'անուանեն  
յուսական. և անոնց հին ձևերը կու տան  
մեզ՝ հանդերձ խորհրդաւոր մեկնութեամբք  
Երրորդութեան ևն (Cabrol, Բ, 749-55.  
Martigny, 99): Յունականը մեզ ալ  
սեպհական էր, և օրինակները բազմաթիւ  
են վանացս զրչագրաց նկարներու մէջ:  
Այս ձևով կ'օրհնէ Յիսուս 1193ի աւե-  
տարանի մը կրկին կենդանագրոց մէջ,  
որոց մին տես և ի Սիսուան, 85: Նոյնպէս  
կ'աւետէ Գարրիէլ Մարիամու՝ Բ. կոս-  
տանդնի պահարանին վրայ (անդ, 107),  
նոյնպէս 1319ի աստուածաշնչին, 1331ի՝

1428ի՝ 1499ի աւետարանաց, և 1640ի ժամագրոց զանազան պատկերաց մէջ. ինչպէս է և Սանահնի նշխարակիր բազկին ձեւը 1685էն, և այլն: Եւ որ ուշագրաւն է, նոյնը մնացած է ցարդ բոլոր արևելեայց և Հայոց ընդարձակագոյն բաժնին բով ալ, որպէս զի համոզուինք՝ թէ յիշեալ հին ձևերն արուեստագիտաց ազատութեան արդիւնք չէին, ինչ որ պիտի կարենանք առանց վարանելու ըսել լատինականին համար՝ որ երբեմն կ'երևի մեր մէջ յունական ձևին կից, անշուշտ ազդեցութեամբ արտաքին բնագրաց՝ ուստի օրինակուեր են:

Կաթողիկեայցս արդի ձևը՝ կարկառամամբ բոլոր մատանց, որ նմանութիւն է այժմու արևմտեայց, չունի ոչ աւանդութեան յարգը, և ոչ որ և է խորհուրդ. հետևաբար ոչ մէկ կարևորութիւն ծիսագիտաց համար, ոչ ալ մեզմէ քան զհինը նախամեծար համարելի:

4. — Նշխարի պատկերն ու յեկումն: — Գր. Տաթևացոյ մանրակրկիտ գրչին կը պարտինք պատկերին հին նկարագիրը: Եւ էր խաչ մը, առանց խաչելոյն, և չորս թևոց միջոցին մէջ գրուած փրկչական

մենագրերս, ՏՐ, ԱԾ, ՅՍ, ՔՍ. իսկ շուրջանակի բուրբակ ծիր մը (Քրդ. ձմր. 158): Աւելի գեղեցիկ բան չկայ քան նորոգել ու պահել այս ձևը, որ յատուկ է մեր ծիսին, և տարրեր յունականէն ու լատինականէն: Չի ծիսից յօրինողք ու սահմանը՝ իրենց առանձնայատկութիւնքն են:

Եւրոպացի հնախօսից քով՝ երկու մեծ ծիսից կարևոր տարրերութեանց մին կը կազմէ՝ նաև սուրբ նշխարին բեկումն յերիս մասունս ըստ Լատինաց, կամ ի չորս ըստ Յունաց, երկուքն ալ ի հին աւանդութենէ (Martigny, 195): Մերն այստեղ ալ յունականին նման էր: Տօնապատճառ կոչուած հին մատեանն Աւագ հինգշաբաթու քարոզին մէջ կը համարի՝ թէ Յիսուս ի վերնատան կտրեց հացն՝ « ի չորս մասունս արարեալ, որպէս և այժմ պաշտե կկեղեցի »: Լիոնեան խորհրդատետրը 1315ին, և ուրիշ ոմանք կը գրեն՝ թէ քահանայն « բեկանէ զհացն սուրբ ի մողզմայն և արասցէ չորս մասն », ինչպէս կ'աւանդէ Տաթևացին ալ (Քրդ. ձմր. 159), և կը լինի ցարդ ըստ ազգային սովորութեան: Գեղեցիկ է իմաստը, որ է խաչածե բեկանել խաչի Չոհին խորհուրդը: Եւ չէ կարելի ժխտել՝

մեր հին ու բնիկ ծիսին հետևելու պատշաճութիւնը նաև այս կիտին մէջ:

Ծ. — Խնկարկուրիւնք: — Չափազանցօրէն բազմացած է այժմ պատարագի մէջ բուրուառի գործածութիւնը, և Պոլսոյ մէջ տեսայ՝ հանդիսական օրերուն՝ փոխանակ մէկի կրկին բուրուառներ: Ու խընկարկուր՝ մշտաշարժ մերենայը՝ կը դառնան ու կը խնկեն ամէն վայրկեան, ամպով լեցնելով սրբավայրը, աղօթականաց շնչափողերը, և մրով պատելով եկեղեցին ու զարդերը: Ճիշդ հակառակն արևմտեան չափաւորութեան, որ աւետարանէն զատ մէկ խնկարկութիւն ունի՝ առ ժողովուրդն, և երկուք առ խորանն: Յայսմ մասին հետևելու էինք անոնց քան այլ արարողութեանց մէջ: Բայց կրնանք նաև մեր Հարցմէ ուսանիլ վայելուչը: Ահաւասիկ անոնց խնկարկութիւնք: — 1, Պատարագին սկիզբները աւանդատնէն կ'ելնէին, յորում «լուցանեն զպիրքն մոմեղէնս, և սարկաւազն բուրուառով» ըստ Ծնորհալուոյն (Խրտ. ժմտղ.): — 2, Ի վերաբերութեան աւետարանին. «Աստանօր փարումն Հոգւոյն սրբոյ օրինակաւ խնկոցն» (Օճնեցի, 105): — 3, Աւետարանի պահուն «մերձ կալ

խնկօք բուրելօք» (Տաթև. Հարցմ. Թ, 10):  
 - 4, Ի վերաբերութեան ընծայից, որ կը  
 լինէր նոյնպէս «բուրմամբ խնկոց» (Լամբ.  
 Պտր. 330): Ասոցմէ առաջինը բուն պա-  
 տարագին մէջ չէր. միւս երեքը՝ սրբու-  
 թեանց կը մատուցուէին: Ասոցմէ զատ Գր.  
 Տաթևացին կը նշանակէ դեռ երեք խնկար-  
 կութիւն. «Ի ճաշոյն պատարագն Գ ան-  
 գամ. մին քահանայն և Բ սարկաւազն»  
 (Հարց. Թ, ԽԱ), զորս Լամբրոնացւոյն հե-  
 տեղութեամբ կրնանք ճշդել. և են. - 5,  
 Յետ պատրաստութեան ընծայից, ուր պա-  
 տարագիչը կը խնկէ նախ ասոնց, յետոյ  
 սեղանին շուրջ, և իջնելով եկեղեցւոյն  
 մէջ՝ բոլոր ժողովրդեան. ապա դառնալով  
 խորանը՝ դարձեալ կը խնկէ սեղանին, և  
 սարկաւազը՝ պատարագչին (Պտր. 197-8,  
 264-5): - 6, Ընդհանուր ամենայն հաւա-  
 տացերոց քարոզին՝ սարկաւազը «խունկ  
 արկանէ շուրջ զսեղանովն» (անդ, 219):  
 - 7, Լցար ի բարուրեանց երգի պահուն՝  
 սարկաւազը դարձեալ «խունկ արկանէ շուրջ  
 զսեղանովն» (անդ, 224): Ասոնք միայն  
 են նախնեաց խնկարկութիւնը, ժուժկալ  
 և հաճոյական, որ մեզ ալ կրնան սահման  
 ու կանոն լինել:

6. — Աւետարանի Քառասնորդաց : —  
 Առաջաւոր պահոց և աղուհացից մէջ հին  
 ժամանակ պատարագ չլինելով, աւետա-  
 րանք ալ չեն սահմանուած: Հասունեան  
 ճաշոցը կարգած է աւետարաններ ընտրա-  
 նաւ. ուր Ս. Ղազար զՄարկոս կը կար-  
 դայ կարգաւ: Աւետարանաց ընթերցման  
 կարգը տօնացուցին համեմատ՝ այսպէս է:  
 Յինանց մէջ կը կարդացուին չորս Աւետա-  
 րանք ամբողջովին: Յետ հոգեգալստեան՝  
 տօնի օրեր ընտրութեամբ կը կարդացուին.  
 իսկ պահոց ու յարութեան օրերուն՝ դար-  
 ձեալ կարգաւ բաժնուած են չորսն ալ  
 բոլոր տարւոյն վրայ, բայց ոստմամբ:  
 Արդ՝ կրնան այս զեղչուած մասերը կար-  
 դացուիլ առաջաւորաց ու մեծ պահոց մէջ,  
 որոց շատ լաւ կը յարմարին բովանդա-  
 կութեամբ ալ, և որով յարգած ու լրա-  
 ցուցած կը լինինք նախնեաց կարգադրու-  
 թիւնը, և կը խափանուի ընթերցուածոց  
 կրկնութիւնը, որ անախորժ է, մանաւանդ  
 ամբողջովին կարդալով զՄարկոս և յետոյ  
 իսկոյն կրկնելով նոյնը յինանց մէջ: Իմ  
 առաջարկած կարգաւորութիւնն արդէն տը-  
 պագրուած է Վենետկոյ վերջին համառօտ  
 տօնացուցակին մէջ:

Այս գլխաւոր կետերէն զատ՝ զըշագրաց համեմատութիւնը պիտի հայթհայթէ առատ նիւթեր՝ պատարագամատուցի բնագրին ու հրահանգաց խմբագրութեան համար, և որոցմէ զոմանս տեսանք կանխաւ (էջ 25-29, 37)։

## ԺԲ

### ԽՈՐՀՐԴԱԿԱՆՔ

1. — Խաչ։ — Սիւնհոդոսը կը զրէ. «Յանձն առնեմք զզարդ սրբոց պատկերաց ի տունս կաթողիկէից, մանաւանդ խաչի» (Տ. 826)։ Ճատ բարի է այս յանձնարարութիւնս յիշեալ սրբութեանց, որոնք՝ — եթէ չեմ խարուիր՝ — Յունաց և արեւմտեան հաւատացելոց մէջ գուցէ աւելի կը մեծարուին քան Հայոցս. մանաւանդ խաչը կորուսած կը թուի՝ գէթ ի սովորութեան՝ իւր նախկին պատիւը կամ կարևորութիւնը, զոր կ'ընծայէր անոր ամբողջ քրիստոնէութիւնը, և կեդրոնացուցած տէ-



րունական խաչին նշխարաց վրայ միայն (Հմմտ. հ. 608). և ինք՝ տէրունականին նմանութիւնը՝ դարձած, թէ տանց և թէ եկեղեցւոյ մէջ, աւելի նիւթական քան բարոյական զարդ, քան հաւատացելոց համբուրի և երկրպագութեան գործի<sup>1</sup>, ինչպէս եղած է ի սկզբանէ: Յիշենք՝ իբր օրինակ՝ որ Գ. դարուն, այս ինքն փրկչական խաչի գիւտէն յառաջ, հեթանոս հոովմայեցի մը՝ կեկիլիոս՝ կը տեսնէր ու կը մեղադրէր զբրիատոնեայս, թէ «կ'երկրպագեն խաչի մը տխուր փայտին», ինչպէս կ'աւանդէ Մենուտիոս փելիբս: Եւ Տերտուլիանոս նոյն դարու սկիզբը կը հաստատէ սոյն պաշտօնս՝ ըսելով. «Անոնք որ կը խորհին թէ կը պաշտենք մեք խաչը, մեզ հետ նոյն պաշտօնը չունին՝ երբ կը ջանան հաշտեցընել իրենց հետ փայտի կտոր մը», այս ինքն փայտեղէն կուռքը (Martigny, 109): Մեծարանաց այս ձևը կար ու մնաց միշտ առ նմանութիւն խաչին<sup>2</sup>: Եւ ղիտելի է՝ առանց խաչելոյն սպտկերին անոր վրայ.

1. Ինձ պատահած է վիճել նոյն իսկ մեր կղերին յարգելի անդամներէն միոյն հետ, որ կը տատամսէր երկրպագելի ընդունիլ սոսկ խաչը.

2. Vacant, *Diction. de Théol. Cath.* Գ, 2346-63.

զի խաչելութիւնը քրիստոնէութենէն եօթն  
 դար վերջ սկսած է (Cabrol, Գ, 3083).  
 և յարեմուտս ի սկզբան զայթակողոյնը  
 անգամ եղան այդ նորութեան վրայ՝ որ  
 զյարուցեալն Քրիստոս կրկին ի խաչ կը  
 հանէր (անդ, 3081): Իսկ Հայոց մէջ ժԲ  
 դարէն յառաջ չենք հանդիպիր անոր: Նա-  
 րեկացին կ'ըսէ առ խաչն, թէ «Տէր Քրիս-  
 տոս ի պատկեր տեսակի մերում քե նշա-  
 նակի. որ երբեմն նոյն ինքն ի քեզ և յայտնի  
 հանգուցեալ, որպէս և դու ընդ նմա ես միշտ  
 միացեալ» (400). և ուր կը թուի խաչե-  
 լութեան ակնարկել, «երբեմն» բառով  
 իմացնելով՝ թէ մեր մէջ սովորական չէր  
 այն, այլ Յունաց բով կը տեսնէր. զի իւր  
 ուրիշ և յաջորդ դարուց Հարց վկայու-  
 թիւնը՝ զոր բիշ յետոյ կը տեսնենք, սոսկ  
 խաչին կը վերաբերին: Ինձ ծանօթներէն  
 նախ Լամբրոնացւոյն աւետարանին մէջ՝  
 1193էն՝ կ'երևի խաչելութիւնը նկարուած,  
 և յետոյ Հաղբատայ խաչարձանի մը վրայ  
 քանդակուած՝ 1273ին. բայց այդ շրջանին  
 դեռ այնքան ցանցառ, որ Գուլ. Բիւրբիւ-  
 կացի ուղևորը, որ 1253ին Հայաստանէն  
 ալ անցաւ, կրնար զրել՝ թէ «Հայր և  
 Նեստորականը (Ասորիք) անարգ կը համա-

րին՝ որ Տեառն մերոյ կերպարանքը անոր  
(խաչին) վրայ կախուած գամուած և յարած  
լինի» (Գլ. 1, 5): Քրիստոնէութիւնը խաչին  
օրինակն իսկ մեծարեր է վասն խաչելոյն,  
ոչ եթէ խաչելոյն պատկերն ի խաչին,  
որոյ պատիւը գիտէր զատել, ըսելով Հարց  
բերանով. «Մեր զմիայնոյ միածնի որդւոյն  
Աստուծոյ պաշտեմք զպատկեր և զնշան  
յադրութեան» անջատարար իրարմէ (Օձ-  
նեցի, 35):

Խնդիր մը կար մեծարելի խաչին նկատ-  
մամբ: Յունաց և Լատինաց հին ու «յար-  
գելի սովորութիւն» էր՝ զայն օծել նախ  
բազասամոնով և ապա զնել յերկրպագու-  
թիւն հաւատացելոց (Martigny, 220):  
Միջին դարուն Յոյնք և Ասորիք մոռացած  
էին հինը, և կը բամբասէին զՀայս՝ որ  
զայն անխախտ պահած էին: Ադոնց ան-  
տեղի հակառակութեան ի պատասխանի,  
Ը դարուն Իմաստասիրի ժողովն ի Դուին  
կ'ամբապնդէր զայն, կանոնելով. «Եթէ  
որ խաչ արասցէ փայտեայ և կամ յինչ  
և իցէ նիւթոյ և ոչ տացէ քահանային  
օրհնել և օծանել զնա միւռոնովն սրբով,  
ոչ է պարտ զնա ի պատիւ ընդունել և  
երկրպագութիւն մատուցանել. զի դատարկ

և ունայն է յաստուածային զօրութենէն, և արտաբոյ աւանդութեան առաքելական եկեղեցւոյ» (կան. ԻԷ): ԺԱ դարուն Գէորգ Գ կթղ. առ Յովհաննէս պարբ. Ասորոց (Գիրք բղրոց, 345), և ապա Շնորհալին առ Մանուէլ կայսր և առ միջագետարնակ Հայս թղթերուն մէջ (Րեղհեր. յԵղմ. 139, 270) կը պաշտպանէին պատկառելի աւանդութիւնը, միանգամայն առարկելով հանճարեղ կերպով՝ թէ խաչին ձևերն յանհունս սփռուած են երկիրնքն ու երկրիս վրայ, անասնոց՝ թռչնոց ու ձկանց վրայ, ոստայնանկութեան ու նկարչութեան մէջ. և եթէ օծումն աւելորդ էր, պէտք էր այդ բոլորը պաշտել: Կրնային սոյն օրինակաց վրայ յաւելուլ չարագործաց սպանման խաչերն ալ, որոնք Կոստանդիանոսի արգելքէն յառաջ ու վերջն ալ դեռ ի գործածութեան էին, նոյն իսկ ի Հայս անգամ (Փաւստոս, Ե, ԺԵ):

Այս աւանդով՝ որ կը վերաբերի քրիստոնէութեան Նշանին, կրնայ պարծիլ մեր Եկեղեցին, ոչ անձնասէր զգացմամբ, այլ գիտակցութեամբ անոր հնութեան ու զեղեցկութեան: Արդարև որո՞ւն աւելի պատշաճ էր օրհնութեան մեծագոյն ձևը, օծումն

ս. իւզոյ, զոր կու տանք սրբութեանց (աստ, 105), քան ասոնց մեծագունին, Նշանին Որդոյ մարտոյ, և Պաւղոսի Պարծանաց: «Այս իւղ, — կ'ըսէ Լամբրոնացւոյն հրեշտակն ի մարմնի՝ Գրիգոր Նարեկացին, — զղրօշեալն քառակուսեան յանուն քո, Յիսուս, նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ» (262): Եւ չէր կարելի չբաղձալ՝ որ ստիպողական մնար միշտ օծումն ամէն մեծարելի խաչերու համար. ինչ որ պիտի կարենայ լինել, երբ ըստ որոշման Սիւնհողոսին՝ Հասունեան մաշտոցը միաբանելով հին գրչագրաց հետ (աստ, 17), խաչերն օծելու և կամ ըստ արեւմտեայց սարգապէս օրհնելու ազատութիւնը՝ զոր կու տայ՝ վերնայ:

Առիթն է յուզելու խնդիր մը նկատմամբ խաչի ձևին: Քրիստոնէական հնութեանց մէջ՝ ինչպէս յայտնի է՝ զանազան են ասոր ձևերը, որոցմէ աւելի գործածականքն են յունականը՝ չորս հաւասար թևերով, և յատինականը՝ որոյ վերին թևը փոփոխական և ստորինը քան զերեքն երկար է: Բոլոր ձևերն ալ միանգամայն գործածուած են յարեմուտս և յարեելս՝ ըստ յառաջբերութեանց Լիլերկի (Cabrol, Գ,

3045-3131) և այլոց: Յունականն ու Լատինականը հայ հնութեանց վրայ ևս կ'երևին, և երկրորդը շատ աւելի յաճախ, մանաւանդ միջին դարուն: Սակայն կայ ձև մ'ալ, որոյ վերին ու ստորին թևերն հաւասար, և քան զխոտորնակներն երկար են: Յուլիոս Միրզայեան՝ Հունգարիոյ մեր ազգայիններէն, տարիներ յառաջ նշմարելով զայս Միսիթարեանց տպագրութեան մը մէջ, հարցուց ինձ և առիթ տուաւ խուզարկելու և տեսնելու՝ թէ սա ևս բաւական յաճախեալ է հայ հնութեանց մէջ. ինչպէս Տեկորոյ Ս. Սարգսի ճակատին վերև, հիմնարկութիւն է դարու (Թօրամանեան, Հայ ձրտրպ. 21). Տաթևոյ Եկեղեցւոյն ճակատին՝ թ դարէն (Սիսական, 225). 1284ի Չեռնաղբ. տետրակին մէջ երկու անգամ, և այլ տեղեր. նոյնպէս է ներքին յօրինուածը Ս. Հոսիսիմէի ի վաղարշապատ՝ է դարէն, և Անուոյ Ս. Առաքելոց՝ ԺԱ դարէն կանուխ (Թօրամ. Էջմ. տաճարը, 16, 13): Ընդ հակառակն բոլորովին սակաւագիւտ է այն ուրիշ ազգաց բով. Լիլիբրիի բազմաթիւ օրինակաց մէջ մի անգամ միայն կ'երևի զգալի կերպով (3095). մի անգամ՝ Ժ-ԺԱ դարէն՝ Շլիւմ-

բերգերի հրատարակած անհամար բիւզանդական կնքոց վրայ (Sigillographie, 254). և չհանդիպեցայ անոր արևմտեան և արևելեան եկեղեցեաց զանազան յատակաձևոց վրայ՝ զորս քննեցի եւրոպական հրատարակութեանց մէջ: Դժուարին է՝ թէ մեր քով անոր յաճախութիւնը լոկ դիպուածի արդիւնք լինի. և մեզ իրաւունք կու տայ առաւելապէս հայկական ձև մը համարելու և հաստատուն բռնելու զայն՝ ի պատիւ մեր ծիսին:

2. - Պատկերք: — Նման էր խաչին՝ սուրբ պատկերաց մատուցուած յարգանքն ալ բոլոր Եկեղեցւոյ մէջ: Է դարու սկիզբը վրթանէս Քերթոզ՝ յիշելով այն ժամանակի պատկերներն որ կը զարդարէին զեկեղեցիս, կ'ըսէ հակառակ պատկերամարտից. «Ահա յայտ է՝ զի չէ արտաքոյ սուրբ գրոց պաշտել զպատկերս». և թէ «պատկերացն երկրպագանելն ոչ վասն դեղոցն է, այլ վասն Քրիստոսի յորոյ անուն նկարեցան» (Յղգ. Պտկրմբոց.): Յաջորդ դարուն Յովհաննէս Խմաստասէր ևս կը հաստատէ մեծարանաց նմանութիւնը խաչի և պատկերի մէջ, ըսելով. Յիսուսի մարդեղութիւնն «զմարմնացելոյ Բանին Աստու-

ծոյ վարդապետեաց մեզ պաշտել զկենդա-  
 նագրեալ մարդկային ձևով զպատկեր, և  
 զպատուականն զայն յաղթութեան նշան,  
 որոց երկրպագեալ, ոչ յերկուանամ նմին  
 ինքեան բազմեցելոյն ի նոսա Քրիստոսի  
 զերկրպագութիւնն մատուցանել» (42): Ա-  
 լելի ուշ՝ Շնորհալին առ Մանուէլ կայսր  
 զբաժին մէջ կը խօսէր յատկապէս սրբոց  
 պատկերաց մասին, ըսելով՝ թէ «փրկչա-  
 կան պատկերին ոչ նիւթոյն և զեղոցն,  
 այլ Քրիստոսի... երկիր պագանեմք նովաւ:  
 իսկ զսրբոցն զպատկերս պատուեմք և փա-  
 ռաւորեմք՝ միջնորդ և բարեխօս առ Աս-  
 տուած ունելով. սակայն զերկրպագութիւնն՝  
 Աստուծոյ ի ձեռն ևոցա (այս ինքն անոնց  
 երկրպագելով) մատուցանեմք. զի երկր-  
 պագելի՝ միայն արարչին է պատկեր և ոչ  
 արարածոյ» (Ընդհր. 140): Ուրեմն տար-  
 բերութիւնը դիտաւորութեան մէջ էր և ոչ  
 ձևի, և որ յար և նման է Նիկիոյ Բ տիե-  
 ղերական ժողովի սահմանին, որ կ'ըսէ  
 թէ սրբոց պատկերաց նայելով, հոգին կը  
 վառի նախատպին սիրով, և «յորդորի  
 յայտ առնել նոցուն զմեծարանս իւր, եր-  
 կիր պագանելով ևոցին (ի պատկերսն) և  
 համբուրելով զնոսին վստահութեամբ. այլ



չընծայէ նոցա զայն պաշտօն՝ որ աստուածեղէն բնութեանն է անկ» (Goschler, ժԱ, 284):

Բայց պատկերաց համար ալ անհրաժեշտ էր մեր բով օժման պայմանն, ինչպէս կ'ըսէ Խմաստասէրը. «նկատեմք օժեպ իւրովն զփրկութեանն գործարանս, զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս, և հաւատամք ընդ նմին ի ներքս զալ աստուածային զօրութեանն. և այսուիկ որոշեալ լինին նորա ի հոմատեսակ յիւրաքանչիւրոցն նիւթոց» (43): ԺԱ զարուհնագոյն մաշտոցն — յետոյ և այլք — ունի «կանոն զնկարեալ եկեղեցի օրհնել», յորում կ'ըսէ՝ թէ «տեառնագրեն զբոլոր եկեղեցին միոռնով». և ապա կատարել կուտայ աղօթք մը, յորում կը կարդանք. «Սրբեա զպատկերքս վկայից զայսոսիկ, զոր այժմ մեր կենդանագրութեամբ արարաք ի յիշատակ նոցուն» ևն: — Այս վրկայութիւնքը կոչեցի ի յանդիմանութիւն արդի պատկերամարտից, որոց մին՝ Մուշեղ վ. Սերովբեան՝ ձրի ենթադրութեամբ մ'եկամուտ համարեցաւ Խմաստասիրին թուած օժանելի սրբութեանց մէջ «զպատկերս» բառը, և նկարեալ եկեղեցւոյ կանոնը՝ ԺԳ

դարու գործ (Պատկերները, 118, 120)։  
Ուրիշ մը՝ Արխատ. Եպ. Սեդրակեան՝ առաջնոյն պէս անձանօթ մեր հին մաշտոցին, նկարեալ եկեղեցւոյ կանոնը նոյնպէս ԺԳ դարու գիւտ ուզեց ցուցնել (Հայ Եկ. պատկերայարգութիւնը, 92)։ Ճիգեր՝ որոնք ճըգնողաց հիւանդութիւնը կը մատնէին։

Դիւրին է ըմբռնել՝ որքան կարևոր է հսկել՝ որ եկեղեցւոյ մէջ առանց օժման պատկեր չմտնէ, այս ինքն ճշդութեամբ յարգութի մեր այժմու իսկ մաշտոցաց դեռ պահած հին սահմանը, և բարձուի՝ օժուժը լոկ օրհնութեամբ (ըստ արեւմտեայց) փոխանակելու ազատութիւնը՝ զոր կու տայ Հասունեան մաշտոցը։ Հոս ալ կրնանք կրկնել, թէ վայելուչ է՝ որ հաւատացելոց երկրպագութեան և համբուրի նիւթերն՝ օրհնութեան կատարելագոյն դրոշմը կրեն։

Յ. — Օրհնած չուր։ — Սիւնհոդոսը յիշելով Աղեքսանդր բահանայապետի գովեստն օրհնած ջրոյ աղիւ, և թէ ինչպէս Ս. Բարսեղ ալ կը յանձնարարէ զայն՝ Զատկի և Պենտեկոստէի ջրօրհնէից սովորութեան մեկնութեանը մէջ, կը յարէ. «Նոյն սովորութիւնն է և առ մեզ յաւուր Մկրտութեան Տեառն, յորում ոչ միայն

հանդիսիւ օրհնի ջուրն, այլ և յօրհնելն զտունս հաւատացելոց՝ ջուր դնի առաջի առ օրհնել» (հ. 588)։ Կը հասկացուի բացատրութենէս՝ թէ Արևմտեան, Յոյն և Հայ եկեղեցիք միանգամայն ունին օրհնած ջուրը, բայց իւրաքանչիւրն ըստ իւր արարողութեան կատարելով անոր օրհնութիւնն ու գործածութիւնը, և թէ «ե և առ մեզ» մեր ձեռով, ինչ որ պատշաճ է որ լինի, արարողութիւնըը չխառնակելու համար։ Կրնար յաւելուլ՝ թէ ունինք նաև ըստ տոհմային ծիսի, և բոլոր հին զրչագրաց ու կաթողիկեայցս հրատարակած մաշտոցաց մէջ ալ դեռ պահուած, «կանոն խաչարուայ ստեկոյ, ի բժշկութիւն... ամենայն ցեղ ցաւոց և վտանգաւոր նեղութեանց», որ առատօրէն կը զոհացնէ զմեզ, և տեղի չի թողուր փոխ առնելոյ ուրիշ ծիսէ ջրօրհնեաց նոր կանոն, ոչ ալ ամիսներով հինցած ջուր պահելու և գործածելու յօրհնութիւնս (հ. 641), և այն հոն անգամ՝ ուր մեր ձէսը՝ նուիրագործելու պաշտօնն յանձնած է ազնուագոյն և սրբագոյն նիւթին, մեռոնին. և որոյ հետ օրհնեալ ջրոյ գործակցութիւնը, ինչպէս յօրհնութիւնս սկւոյ և մաղզմայի, խաչի,

պատկերաց, ժամահարի, նոր դրան եկեղեցւոյ ևն ըստ Հասունեան մաշտոցին, դժուարաւ կրնայ ըսել տալ մեզ՝ թէ «էութեան հայ ծիսին ոչ ինչ ստնանէ»։ ապա թէ ոչ՝ Լատինը ալ մեռոնի գործածութիւնը մեզմէ փոխ պիտի առնուին առաւելագոյն իրաւամբ։

4. — Օծումն Ստեփանոսայի։ — Ս. Ղազարու հին մաշտոցաց մէջ ժՍ. դարու և 1387ի օրինակները չունին լուացեալ ոտից օծումն իւղով, մինչդեռ 1301ի (ի վատիկան), 1386ի, 1455ի և այլ կրտսերագոյն օրինակաց մէջ կայ, և իրաւունք կու տայ կարծելու՝ թէ մեծ հնութիւն մը չունենայ։ ժԵ դարու սկիզբն արդէն ընդհանրացած էր, և ըստ Տաթևացւոյն՝ «իւղն և ձէթ ի միասին խառնեալ» կ'օրհնէին և ապա կ'օծէին (Քրգ. ձմր. 577)։ Օծումնս կ'երևի նաև ասորական գրչագիր մաշտոցաց մէջ, յայտնի չէ ո՞վ ուստի առնլով։ Նկատելով որ հերձուածոյնբէ ոմանք զայս՝ հիւանդաց օծութեան կամ վերջին օմման տեղ կը համարին, «իմաստուն խորհրդով, կ'ըսէ Սիւնհոզոսը, խափանեալ է առ մեզ այսպիսի կասկածելի սովորութիւն, և ոչ բնաւ թոյլ տամք զի ուրեք

երբէք նորոգեսցի» (Տ. 507): Թէ այս էր խափանմանս պատճառ, և ոչ արտաքին ազդեցութիւնը՝ որ աղբիւր եղաւ ուրիշ յապաւմանց և յաւելմանց, խնդրական կը մնայ, և Սիւնհոդոսի խօսքն աւելի մեկնութիւն կը թուի քան պատմութիւն: Մի և նոյն պայմանաց ներքե կը գտնուի նաև յաջորդն ալ:

5. — Օծումն Ննչեցեոց: — Մանօթ Յունաց, Հոովմայեցւոց ու Հրէից, ինչպէս յայտնի է Տեառն մերոյ խնկովք պատելէն ալ, անցաւ նաև քրիստոնէից, և կը գործադրուէր անուշահոտ իւղերով բոլոր հաւատացելոց վրայ, ինչպէս կ'աւանդէ Տերտուղիանոս (Ջատագ. ԽԲ): Եւ նպատակն էր՝ ըստ կարի արգելուլ դիակին քայքայումը, և միանգամայն յարգանք մ'ընծայել անոր: Նոյն սովորութիւնն էր որուն հետևեր են Հայք ալ ի սկզբանէ: Լուսաւորչի օրով՝ Ս. Հովիտիմեանց մարմինները պատելու համար «բերէին իւղս անուշաւնս» (Ագաթ. ճ'Կ): Ս. Սահակայ մարմինը կազմեցին «հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք» (Կորիւն, 25): Անոր թոռան՝ Ս. Շուշանկան մարմինն օծեցին «խղովք անուշիւք և խնկովք» (Սոփերք, Թ,

46): Ը դարուն Ս. Դաւթի դունեցւոյ մարմինն ամփոփեցին նոյնպէս «խնկօք և խղովք» (անդ, ԺԹ, 95): Եւ այս օժմունք սրբոց համար միայն չէին, այլ անոնց վրայ յիշուած: Անով որ եկեղեցականաց օժուժը կը կատարուէր տաճարի մէջ և հանդիսապէս, հաստատուն մնաց, և անցաւ բոլոր մաշտոցաց մէջ, ինչպէս կ'երևի՝ ԺԱ դարու հնագոյն օրինակէն սկսեալ, ուր հաւատացելոցն ասոցմէ դուրս մնաց, և վերածուեցաւ խնկի՝ ըստ վկայութեան Տաթևացւոյն. «խունկ յոնգունքն» (Հարց. Ժ, Գ):

Զայս ալ, կ'ըսէ Սիւնհոդոսը, հերձուածողը կը շփոթեն հիւանդաց օժման հետ. «ապա յիրաւի և յարժանի օժումնս այս վախճանելոց առ մեզ ամենևին իսկ բարձեալ է» (հ. 506): Այս պատճառն և արդիւնք եթէ արդարեւ պատմական են, պիտի կարենան ինքն իրեն յարգելի լինել: Սակայն եթէ դիտուի՝ որ հերձուածողը ԺԳ դարէն՝ հիւանդաց խափանեալ օժումը կ'ուզէին նկատել նաև զրոշմի օժմանց մէջ՝ ըստ ամբաստանութեանց արեմտեայց առ Միսիթար կթղ. (Mansi, ԽԵ, 1241), և այս մեկնութիւնը դեռ կը մնայ ԺԵ (աստ, 74) և յաջորդ դարերուն՝ ըստ զանազան

աղբերաց, զոր աւելորդ է կոչել հոս, հարկ  
 պիտի լինի նաև դրոշմի օծումներն ալ  
 խափանել՝ ի նպաստ հիւանդաց օծութեան։  
 Կրճատումն ապահովագոյն ճանապարհը չի  
 թուիր միշտ, և փոխանակ զօրացնելու՝  
 կրնայ նաև տկարացնել ճշմարտութիւնը։  
 Զոր օրինակ՝ հակառակորդը պիտի կա-  
 րենան ըսել մեզ. վերջին օծում մը կայ,  
 զոր դուք մեռնելէն յառաջ կու տար, և  
 մեր վերջը, հետևաբար մեզմէ աւելի բան  
 մը չունիր։ Ընդ հակառակն՝ պահելով  
 վախճանելոցը, մեր կրնայինք պատաս-  
 խանել։ Օծումը՝ պատմութեան և մաշտոցին  
 մէջ կրկին է, մին մեռնելէն յառաջ ու  
 խորհրդական, միւսն յետ մահուան և արա-  
 րողական, և ահա մեր երկուքն ալ կը  
 գործադրենք. իսկ դուք առաջինն ու մե-  
 ծագոյնը ջնջած էք, և երկրորդը միայն  
 պահած. ուրեմն հեռի էք ճշմարտութենէ։  
 Եւ այս պատասխանը, — եթէ արդարև  
 հարկաւոր է գործնական օրինակը, — քան  
 զյապաւումն հզօրագոյն, պիտի նուաճէր  
 գանձը։ Արդէն մեռելոց օծումն յաճախ  
 կը գործադրենք, առաւելապէս ջերմ օդե-  
 րուն, անոյշ իւղեր ցանելով անոնց վրայ։  
 Այս սովորութիւնն յարատև, ընդհանուր

և արարողական ընելով, ինձ կը թուի՝  
 թէ բան մը չէինք կորսնցնել, այլ կը շահէինք հին աւանդութիւն մը՝ պատկառելի դարձած Յիսուսի և Սրբոց օրինակով ալ. և զոր ուսաստան կաթողիկեայք ևս դեռ կը պահեն հաւատարմարար քահանայից վրայ, ինչպէս իմացած եմ:

## ԺԳ

### ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՔ

Սիւնհոդոսն առանձնական ժամասացութեան համար կարգ մը սահմանած է, որով պարտաւորիչ կ'ընէ, 1, Գիշերայինը և կամ Առաւօտեանը փոխանակաւ. 2, Ճաշոյ երեք ժամերը. 3, Երեկոյեանը. 4, Հանգըստեանը: Իսկ Արևազալը կը վերապահէ քառասնորդաց՝ դասի մէջ միայն պաշտելի. նոյն շրջանին նաև Խաղաղականը՝ փոխան Հանգստեան (հ. 740, էջ 686-90)<sup>1</sup>: Այլ

1. Սիւնհոդոսի ձրագրին մէջ կան ինչ ինչ նորութիւնք, որ արդիւնք են արդի կամայական սովորութեան,



հասարակաց ժամերգութեան համար, զոր կ'ուզէ որ քաղաքին մէկ կամ միւս եկեղեցւոյն մէջ անպակաս լինի ամէն օր (հ. 825), նաև ըստ հրամանի Ս. Աթոռոյն (էջ 679), կը թուի անփոփոխ պահել հին կարգաւորութիւնը, որուն չի դպչիր, այլ մանաւանդ կը զանազանէ դասու և առանձնական ժամասացութեան մատեանները (հ. 639)։

Անվիճելի էր սոյնպիսի վերածման մը հարկաւորութիւնը։ Բայց ոչ նուազ կարևոր և օգտակար կը թուի նման ձեռնարկ մը նաև հասարակաց ժամերգութեան մասին, որ իւր երկարութեամբ պատճառ կը լինի՝ որ հաւատացեալը չյաճախեն անոր, մանաւանդ լուր օրեր, և շատ եկեղեցիներ ի սպառ զանց ընեն զայն։ Սակայն մեծապէս բաղձալի էր նաև՝ որ այդ կարգադրութիւնը կատարուէր փոխանակ պարզ հաճոյից՝ պատմական հիման մը վրայ. այնպէս լինէր՝ — և կարելի է՝ — որ այդ վերածմամբ փոխանակ հեռանալու նախնեաց արարողութենէն՝ աւելի ևս մօտենա-

և պատմական հիմ չունին. ինչպէս Յիշեցուք, Աստուաբաշտայ և Ալիսարձ ամենայն երգոց զանցառութիւնը քառասնորդաց մէջ։

յինք անոր, որով կրկին շահ կ'ընէինք: Այս գաղափարն է՝ զոր պիտի փորձեմ ծրագրել այս տեղ:

1. — Գիշերային ժամերգութիւնն ի հնուց վերապահուած էր կիրակէից և այն հանդիսական օրերուն, որոց յառաջընթաց երեկոյէն գիշերապաշտօն կամ հսկումն կը լինէր մինչև առաւօտ<sup>1</sup>, և նոյն ժամերգութիւնն այդ հսկման պաշտօնն էր, ընթերցուածներով ու սաղմոսներով ընդարձակուած: Չայս Բ զարուն կը հաստատէ Յհ. Խմաստասէրն՝ ըսելով. «Արժան է գիշերապաշտօն անել յայդ կիրակի» (27), և թէ «Պարտ և արժան է ի գիշերապաշտաման՝ զկանոնացն զհետ բերել զչորս զայս քարոզութիւն. վասն ի վերուստ խաղաղութեան» ևն (30), գիշերային ծանօթ քարոզներն ու աղօթքներ: Ուրեմն լուր օրեր ոչ գիշերապաշտօն կար և ոչ գիշերային կանոնը, այլ ժամերգութիւնն Առաւօտեան պաշտամամբ կը սկսէր: «Օր քստ օրէ, կը յարէ նոյն հայրապետը, յա-

1. «Յայնմ գիշերի (նաւասարդի կամ Ատրապետի ատինն նախընթացը)՝ Գիշերապաշտօն մեծ եղև ի բանակին (Շայոց) առ կաթողիկոսին» (Փառ. Գ, Ժե), — «Զքոչոր նախադասեալն սմա (կիրակէի) պարտ է աղօթիւք յուղարկել զգիշեր» (Օմն. 16):

մենայն աւուր յառաւօտինն հրեշտակային իմն զոգցես թէ ազդամար ի թառամեցուցանող քնոյն ընդոստուցեալը, (իբր առաջին պաշտօն՝) զնոյն զերից մանկանցն ի բերան առեալ նուագեմք զօրհնութիւն... Օրհնեալ ևս տէր Աստուած» (18): Ժ դարուն վերջերը Նարեկացին դեռ նոյնը կը հաստատէ, երբ կրօնաւորաց աղօթելու դիւրին կերպ մը թելադրելով, կ'ըսէ. երբ առաւօտուն ժամահարի ձայնով արթննաս, եթէ գիշերային ժամերգութեան օր չէ, «զՏէր երկ շրքունսն սկսեալ ասելով զնասցես» յեկեղեցի՝ իբրև առանձնական և աւելի ծանօթ կամ ընտանի աղօթք մը. և «յորժամ ի տեղի աղօթիցն հասցես, ... զսկսեալ աղօթսն մի՛ թողցես մինչև տան զՕրհնեա տէր (առաւօտեան ժամուն): Երբ գիշերն կարգ լինի հանդիպեալ (որով ամենօրեայ չէր), յորժամ զարթնուցու՛ կնքեա զքեզ, բայց մի՛ աղօթեսցես» նոյն գիշերայինը, որ այն օր հասարակաց պիտի պաշտուէր (կարգ և կան. աղ.): ԺԲ դարուն վերջը՝ Լամբրոսնացին դեռ նոյն դրութեան շարունակութիւնը կը ցուցնէ՝ երբ կ'ըսէ. «եօրն անգամ յաւուրն զԱստուած օրհնեմք» ժամերգութեամբ (տա Լևոն, 236):

Եւ վարդան արեղայ՝ գրիչ 1365ի Նա-  
րեկին վենետիոյ, նոյնը կը կրկնէ հոն.  
«ժողովեցին վարդապետը եկեղեցւոյ (ըզ-  
ժամս) և կարգեցին հօրն անգամ». և թէ  
«հօրն ժամն հօթն աւուրց շարաթոյ և հօթն  
դարուցն է օրինակ»: Իսկ ադոնց հօթնը  
կը ձևանար՝ գիշերայնի զանցառութեամբ  
լուր օրերուն, որոյ հետ միասին ութ ժա-  
մեր կային տեղեկատուացս ժամանակ,  
ինչպէս պիտի տեսնենք յաջորդաբար: Գի-  
շերայնի օրերը նաև օրհնութեան յատուկ  
շարականներ ունէին ու կը պահեն ցարդ,  
ինչ որ կը պակսին պարզ սրբոց և պա-  
հոց օրերուն, և կը մնան փորձաբար՝ աւագ  
տօները միւսներէն զատելու: Սակայն ժՊ  
դարու վերջը գիշերայինն ալ հանապա-  
զօրեայ եղած կը գտնենք Տաթևացւոյն  
վկայութեանց մէջ (Քրդ. ձմր. 2Գ ևն).  
արդեօք ի Սիւնիս միայն, թէ բոլոր ազգին  
մէջ, յայտնի չէ:

Օրհնութեան շարականը ալ զերծ էին  
այժմու քաղուածներէն: Ժամատեղաց խրատ  
մը 1284ի ժամագրոց կից, կ'ուսուցանէ  
թէ ինչպէս օրհնութեանց տները խառ-  
նուելու էին յարակից մարգարէական օրհ-  
նութեանց հետ, և կը խօսի սոսկ «երկու

շարականաց» վրայ : Իսկ այն օրեր՝ որ  
 հետեակ շարական ունէին, յետ երգելու  
 օրհնութիւնը միաբանութեամբ ատենի մէջ՝  
 դասը կը մտնէին և երկուստեք կը սլաշ-  
 տէին հետեակը, ինչպէս կը կարդանք  
 Շնորհալուոյն ժամատեղաց խրատուց մէջ :  
 Նախ ժէ դարու սկիզբը կը հանդիպինք  
 քաղուածոց յիշատակութեան, Տաթևա-  
 ցւոյն այս բացատրութեան մէջ. «Տասն շա-  
 րական ասի օրհնութիւն ի տօնս տէրու-  
 նականս և ի տօնս մարտիրոսաց. իսկ ի  
 պահքն ոչ է օրհնութիւն» (տպ. ընդ Խոսր.  
 430) : Բայց այս տասն դեռ մասնական  
 է. այնպէս որ Միս. Ապարանեցին նոյն  
 դարուն՝ «գիշերն երկու շարական օրհնու-  
 թիւն» գիտէ դեռ ըստ հնոյն (Խէ, Իէ) :  
 Եւ որովհետև ախորժակն ուտելով կը բա-  
 ցուի, ԺԶ դարու ցուցակի մը մէջ շարա-  
 կանաց թիւը կ'անցնի տասնուհինգը : Պահօց  
 օրերն ալ կը բեռնաւորուին անոցմով. և  
 ժէ դարու ցուցակ մը, գիւտ անձանօթի  
 մը, կ'անցնի ամէն սահման. և առանց  
 որոշ թուի՝ մարտիրոսաց վերջին ձայնին  
 51 քաղուած կու տայ. ասլաշխարութեան  
 վերջնոյն՝ 26. աւագ օրհնութիւնք կը նա-  
 խանձին անոնց, և իրենք ալ կը բարդուին.

առաջին ձայնը ՅԾ նոր քաղուած ունի. և ցուցակիս կանոնն է, «որչափ կամիս՝ զխորհրդաւորքն քաղեա»։ Հայոց երգեցողութեան այս տարապայման եռանդն առիթ կու տար Ապարանեցւոյն ըսելու՝ – քաղուածոց բարդուելէն յառաջ անգամ՝ – թէ «անկարգաբար աղաղակեն որպէս Բաճաղու քահանայքն» (ԽԵ, ԻԷ)։ Յետոյ երրորդ ցուցակ մը, յօրինուած ԺԷ դարուն՝ Մովսէս կաթողիկոսի հրամանաւ, օրհնութեանց շարականները տասնի կը վերածէ, սանձելու համար անչափութիւնը։ Իսկ ես պիտի ուզէի բոլոր քաղուածները թօթափել. զի աւելի անտեղի բան չկայ՝ քան տարւոյն բոլոր յիշատակներն իրարու խառնել՝ խառնակել՝ հին թէ նոր տիրացուներու բմահաճոյքով։

Նոյն կարգէն են և արժանի անոնց վախճանին՝ նաև Հանգստեան քաղուածք։ Թ-Ժ դարերուն՝ Գրիգոր Սուփան, Փիլիպպէ, Չազիկ և Շահանդուխտ Սիւնեցիք՝ իրենց արձանագիր կտակաց մէջ հանգրստեան պաշտօն կը նշանակեն լոկ սաղմոսներ (Որբել. ԼԵ, ԼԹ, ՅԱ, ՅԴ)։ Շնորհալին զարդարեց նոյն պաշտօնը, յաւելլով Աստուած անեղ երգն առանձին ննջեցելոց

համար, ինչպէս յայտնի է եզակի դէմքէն բոլոր տանց մէջ. իսկ հասարակաց ննջեցելոց կը պաշտէին «շարական», որ է մի միայն, և աւետարան մը (Խրտ. ժմտղ.), և քաղուածը չկան հոս: Վենետկոյ 1438ի և 1494ի տօնացոյցք դեռ պարզ ձևն ունին, Պենտեկոստէի առաւօտուն գրելով. «Եւ ասնն շրկ. հանգստեան և կամ գՂազարու» (աստ, 26). շարականն համառօտ ինչպէս Գազարու երգը. ապա «Սղ. կց. Եղիցիին տկանչք. Փ. Ի խորոց կարդ. Աւետ. հանգըստեան»: Քաղուածը հնարուեցան վերոյիշեալ շարականամուլ շրջանին:

Սոյն պաշտօնի ժամանակներն ալ տարբեր էին. կը կատարէին Առաւօտեան ժամերգութեան ծայրը (Շնորհալի, Խրտ. ժմտղ.), փոխան բժշկութեան աւետարանին, և տարւոյն որոշ եղանակի մը մէջ, ելնելով եկեղեցիէն դուրս՝ ուր կային գերեզմաններ: 1255ին՝ Խոսրովու աղօթման կնչին ընդարձակողը Մովսէս՝ կը գրէ. «Քաղումք ի գարնանային ժամանակն յորժամ ի դուրս ելանեն, ընթեռնուն հանգըստեան աւետարան. իսկ յետ թաշվերաց տօնին, զի այլ ի դուրս ոչ ելանեն, բազումք անփոյթ առնեն, և ամենևին այլ

ոչ ընթեռնուն յաւուրս կիրակէիցն առաւօտուն աւետարան հանգստեան»։ Կ'իմացուի՝ որ տարւոյն բոլոր կիրակէները կը կարդային ոմանք։ Եւ սակայն «բազմաց» սովորութիւնն հասարակաց էր ու մնաց, որով երկու դար վերջ նախայիշեալ կրկին տօնացոյցք ալ հանգստեան պաշտօնին ծայրը կը յաւելուն. «յամէն կիրակի կարդա ի Զատիկէ մինչև ի Սուրբ խաչն (այս էր պաշտօնիս կատարման շրջանը), և սաղմոս՝ Էդիցիկն ակակցք ասա. և ի դառնալն զՆորաստեղծեալն»։ Կրնայ ուրեմն մեզ ալ կանոն լինել այս հին ոճը։ Յաւելունք՝ որ տաճարի աւետարանք, և ազուհացից ու խաչի տօներուն Այսօր անձատու շարչարանաց աւետարանք՝ նորահնար բաներ են, և չունին նշմարանք հին գրչագրաց մէջ նախ քան ժի. դար։

Վերջապէս քաղուածասէր դարուն պըտուղ է՝ յարութեան երեկոյնները բոլոր տէրյերկնիցներն իբր համբարձի քաղելու սովորոյթը։ Վենետիկոյ 1284ի խրատ մը զհր. երեքէն մինչև վեց տուն գիտէ՝ ըստ երկարութեան մէկ շարականին։ Եւ Ապարանեցին 1410ին կը գրէր՝ թէ Հայք կարգած են «յերեկոյն մի համբարձի»



(ԽԵ, ԻԷ). Ինչպէս է արդէն ցայսօր սովորական ոճը միւս օրերուն:

2. — Առաւօտեան ժամերգութիւնն հաստատուն էր ամէն օր՝ ըստ բոլոր վկայութեանց:

3. — Արևագալը սակայն, որ նախորդաց չափ հին չէ, բայց Ը դարուն արդէն կը յիշուի և կը մեկնուի Ստ. Սիւնեցիէն (յԱրրտ. 1915, 492) և ժին Խոսրով անձեացիէն, կախումն ունէր Գիշերայնէն: Ուր կար վերջինս, ինք զանց կը լինէր, և անոր հակառակը: Շնորհալուոյն ժամատեղաց խրատքը կիւրակէ օր Առաւօտեանով կ'աւարտեն պաշտօնը, և 1284ի տօնացոյց մ'Աստուածայայտնութեան ճրագալուցին, որ մատենին մէջ բոլոր տօնից սկիզբն է, կը գրէ՝ «Արևագալ ոչ ևս», նոյնն առանց կրկնելու իմանալով յաջորդ տէրունականաց համար ևս: 1438ի, 1480ի և 1494ի տօնացոյցը ալ ունին հրահանգս. «Բայց աւագ շարթուս արևագալի կանոն չկայ»:

Շատ զեղեցիկ էր այս փոխանակութիւնը, և պիտի լինի նաև այժմ ալ՝ վերանորոգուելով. զի հինն է, ամբողջ կը պահէ ժամերգութիւնը, զանազանութիւն կը դնէ

անոնց կատարման մէջ, նշանաւոր օրերուն կու տայ յատուկ դրոշմ մը Գիշերայնով, և չի զբեր զմեզ աստուածային բանաստեղծութեամբ լի Արևազալին վայելքէն, ինչ որ պիտի պատահի ասոր իսպառ զանցառութեամբ, կամ աղուհացից միայն պահելով, և այն՝ լոկ ուր որ հասարակաց ժամերգութիւն կայ:

4. - Գ, Զ և Թ ժամք երեքն ալ հաստատուն էին նման Առաւօտեան, ինչ ինչ մասունք աղուհացից սեպհական լինելով, ինչպէս է տակաւին, նաև Օրնեմք գրեզն ալ՝ ըստ 1284ի ժամագրոյն, նման իւր յաջորդ տանց՝ Խառարեցաւ և Չարչարակցեալ:

5. - Երեկոյեանք ճիշդ ասոնց դիրքն ունէր, հանապազօրեայ ինչպէս այժմ:

6. - Խաղաղականք զուրկ է բարձր հնութենէ մը. բայց Ը դարուն կար ու ծանօթ էր Ստ. Սիւնեցւոյն (յԱրրտ. 1916, 139), և Ժ դարուն խոսրով ալ կը մեկնէ զայն: Տօնական օրերուն՝ ուր Արևազալը զանց կը լինէր, Խաղաղականն ևս կը դադրէր: Ծնորհալւոյն ժամատեղաց խրատքը՝ լուր օրերուն զայս կը յարէ Երեկոյեանին, ըսելով յետ Հայր մերին. «զՏէր Աստուած

փրկուարեանն սկսանի նա՛ որ զՅոյս կենացն  
ասաց» : Իսկ կիւրակամտի պաշտօնը կ'ա-  
ւարտէ Երեկոյեան վերջին աղօթքով : Նը-  
մանապէս 1408ի ժամագիրքը Խնդրեսցոյրը  
կ'անուանէ «քարոզ արձակման կիրակէից,  
յինանց և տէրունական տօնից», որոց  
բոլորին մէջ Խաղաղականը կը զեղչուէր :

7. — Հանգստեանը բոլորովին նորամուտ  
աղօթք մ'է համեմատութեամբ այլոց : Ան-  
ժանօթ է Սիւնեցւոյն, Խոսրովու, Շնոր-  
հալւոյն Խրատոց մէջ, Խոսրովու ընդար-  
ձակողին՝ որ յետ Խաղաղականին ննջել  
կու տայ (366), 1284ի ժամագրին, Ե-  
սայի Նշեցւոյն (տպ. ընդ Խոսր. 425),  
Վարդան արեղայի 1365ին, և այլոց : Յի-  
շեալ 1284ի ժամագրին ծայրը յաւելուած  
են երգեր, յորս նաև Շնորհեա մեզ տեր,  
և ասոր վերև գրուած է՝ «Զկնի Եկես-  
ցոյն», որ եթէ Հանգստեանն է, պէտք է  
հետեցնել՝ թէ արդէն հնարուած էր, բայց  
չմտած ժամագրոց մէջ, ըստ որում առանձ-  
նական աղօթք կը համարուէր, ինչպէս որ  
էր դեռ ժե դարու սկիզբը, որով Տաթե-  
ւացին յիշելով Եկեսցէն՝ կը յարէ. «յո-  
րում աղօթեմք ի վերայ անկողնոց և  
ննջեմք» (Քրդ. ամբ. 340) : Սակայն 1465ի

ժամագրին բացատրութիւնը, «Յադագս արձակման ժողովրդեանն. Փառք քեզ Աստուած որ պարգևեցեր», կը զգացնէ՝ թէ արդէն հասարակաց դարձած էր, զոնէ ադոր զրութեան տեղւոյն մէջ՝ ի Քաջբերունիս վասպուրականի, եթէ ոչ և այլուր:

Յամենայն դէպս՝ այս ժամը կը պահէ իւր նորութիւնը և առանձնականութեան նկարագիրը մեր քով: Եւ իրաւունք կու տայ՝ աւելի զայս զեղչելու հանապազօրեայ առանձին ժամասացութենէն, քան հինաւուրց խաղաղականը: Եւ վերջնոյս առանձնական դառնալովը՝ Երեկոյեան հասարակաց ժամերգութիւնն ալ կը թեթևայ՝ նմանելով տօնական օրերու ոճին:

Այս ծրագրով՝ ժամերգութիւնը թէ ախորժելի կը դառնան, թէ դիւրացուցիչ ու յորդորիչ կը լինին կղերին՝ հասարակաց ժամերգութիւնը կատարելու, և թէ փոխանակ ըստ հաճոյս կարգադրութեան՝ աւելի համաձայն կը լինին այն ձևին՝ որ «Հարցն սրբոց կիրարկութեամբ ազնուագոյն գործեալ է» (Լևոն ԺԳ):

## ԺԴ

## ՏՕՆԱՅՈՅՑԸ

Շատ կարևոր ու ծիսապէս ծանր խնդիր մը կը յարուցուի սրբոց տօնից շուրջ, սահմանելով կրկին փոփոխութիւն. մին՝ անոնց տօնախմբութեան օրերուն, և միւսն՝ անոնց թուոյն: Կ'որոշուի նաև նոր տոմարին ընդհանրացումը:

Ա. — Սիւնհոզոսն «անպատշաճ համարի գրաժանումն եկեղեցական տարւոյ, որ ի յետին ժամանակս առ մեզ մուծեալ է, որով ի մեծի մասին տարւոյ չլինի յիշատակութիւն սրբոց»: Եւ փափաքելով դառնալ «ի վաղեմի և յընդհանուր սովորութիւն», կը յանձնէ Ամեն. Պատրիարքին այս նորոգութիւնը, «որով տօնք սրբոց յորոշեալ աւուրս տարւոյ բաժանեացին, ըստ օրինակի այլոց եկեղեցեաց» (հ. 678): Որովհետև արդի կարգադրութիւնն «յետին ժամանակաց» գործ կը համարուի, և ասոր

վերածման յորդորիչ՝ Սիւնհոգոսին յանախ շեշտուած դէպ ի հնագոյնը դառնալու գեղեցիկ ուղղութիւնն է, նկատենք նախ խնդրոյն պատմական կողմը:

1. — Հնախօսութիւնը կը հաստատէ՝ թէ բրիստոնէութիւնն ի սկզբանէ հետէ, մանաւանդ Եկեղեցւոյ խաղաղութենէն վերջ, մեծ հանդիսով կը տօնախմբէր սրբոց յիշատակը, ի միասին հաւարուելով, և նոյն ինքն անոնց հանգստարանաց շուրջ՝ եթէ մօտ էին, ու կատարելով կրկին ուրախութիւն. հոգևոր՝ տէրունական պատարագով, և մարմնաւոր՝ ագապով կամ մատաղով (Martigny, 741): Մի և նոյնը կը կատարուէր ճշդիւ Հայոց բով ալ. «Սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, կ'ըսէ փաւստոս, հանգերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս (Յաշտիշատու)... ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամի ամի եօթն անգամ»՝ կարապետին, Առաքելոց և Մարտիրոսաց տօները, մատուցանելով «զպատարագն օրհնութեան» ևն (Գ, Գ): Մեծին Ներսիսի համար ալ կը գրէ՝ թէ «յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա

շամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովովք հանապազ պայծառանային» (Ե, 1Ա): Այսպէս կը տօնախմբէին յիշատակը Ս. Գրիգորիսի (անդ, Գ, 2), Սահակայ և Մեսրոբայ (Փարպ. ԺԸ, ԺԹ), և այլոց՝ մինչև վերջ, որոց նկարագիրը շատ կան:

Ադոնց ճիշդ հակառակն էին պահոց օրերը: Սրբոց տօնն ուրախուրիւն էր, պահքը՝ սուգ, ինչպէս կը սահմանէ Մանդակունին Ե դարուն (100), համաձայն աւետարանին<sup>1</sup>: Նոյն ինքն կը նկարագրէ մեզ պահքը՝ հրաժարումն փափուկ կերակրէ, մի անգամ ուտել օրը, լոութիւն պահել, չլուացուիլ ու չօծուիլ, խարազ հագնիլ, քիչ քնանալ (35-6): Հայր Լուսաւորչի օրով կը պահեն նոյնպէս «զգեցեալ քուրձ և նստեալ ի վերայ մոխրոյ» (Ագաթ. ճ): Այս զրկանք առաւելագոյն աստիճանով մը կը գործադրուէին աղուհացից մէջ: Եւ նոյն խստութիւնը կար հաւասարապէս միւս եկեղեցեաց մէջ ալ (Martigny, 393):

Դիւրին է ուրեմն ըմբռնել՝ որ տօնը և պահքը չկարենային իրարու հետ հաշտուիլ: Եւ ոչ արևելք՝ ոչ արևմուտք առաջին

1. Յիսուս ինքնին պահեցողութիւնը կոչեց «սուգ սուհուլ» (Մատթ. Թ, 14):

դարերուն սուրբ չէին տօներ քառասնորդաց մէջ. Լաւոզիկեայ ժողովն 363ին արգիլած է տօնելը, բաց ի շարաթէ և կիւրակէէ, որոց մէջ պահքը կը դադրէր. «Չէ արժան ի քառասնորդան զմարտիրոսաց կատարումն տօնախմբել. այլ զսրբոց վրկայիցն յիշատակ կատարել ի շարաթան և ի կիւրակէս» (կան. ԾԱ): Նոյն հիման վրայ՝ Տոլեաոնի ժողովը 656ին հեռացուց Աւետիբն աղուհացէն (կան. Ժ), մինչդեռ Տրուղեանը 692ին լուծեց նոյն օրուան պահքը (կան. ԾԲ): Արևմտեայք Ը դարուն սկսան տակաւ նոյն պահոց մէջ տօնել սուրբերը, որոց վրայ գայթակղեցան Յոյնք (Cabrol, Բ. 2154), յետոյ անոնց օրինակին հետեւելու համար, ինչպէս կը տեսնենք այսօր. ուր Ամբրոսեան ծէսը հաստատուն պահեց ու կը պահէ ցարդ հին սովորութիւնն առանց տօնի (նոյն Ա, 1399, 1401):

Հայք չէին կարող զարտուղիլ այդ նախնական սովորութենէն, թէպէտ մեր այն ժամանակներէն յայտնի յիշատակութիւն չունենանք: Բոլոր հին ճաշոցք ու տօնացոյցը՝ աւանդաբար աղուհացից շարաթ օրերը միայն սուրբ կը կարգեն: Բայց



Հայր պահոց մէջ շտօնելու կանոնը տրամարանօրէն տարածեցին նաև չորեքշաբաթու և ուրբաթու վրայ, որոնք նոյնպէս սգոյ օրեր էին Հայոց մէջ և առաքելական շատ խիստ պահք, ինչպէս կ'երևի հին կանոններէ: Անոնք աւելի յառաջ գնացին, և տէրունական տօնից հետ ալ չխառնեցին սրբոց յիշատակը: Եւ որովհետև կիւրակէն յարութեան տօն էր միշտ, և ամբողջ յինունը «ամենայն օր կիւրակէ է, և ի նոսա կատարի աստուածային խորհուրդն» (Օձնեցի, 25), ինչպէս էր նաև Ամբրոսեան ծիսին մէջ (Cabrol, II, 1395), ուստի դարձեալ տրամարանական էր՝ որ այդ օրեր մարտիրոսաց յիշատակ չկարգէին մեր Հարբ<sup>1</sup>, տէրունականն անոնց հետ չխառնակելու համար՝ ի վնաս միոյն կամ միւսին: Եթէ օրինաւոր էր սրբոց տօներն յատուկ օրերէն հեռացնել ազուհացից պատճառաւ, ուրեմն նոյնը կրնար օրինաւոր լինել նաև ուրիշ պատշաճ նկատումներով:

1. Կարապետին յիշատակը, Լուսաւորչէն կապուած Հայոց տարեգլխոյն՝ նաւասարգի առաջին օրուան հետ, փոխան Ամնատրի զիցապաշտ տօնին, ստիպուած կը պատահէր երբեմն նաև կիւրակէ օր (Փաւս. Գ, ԺԵ):

2. — Հայոց տօներն ի սկզբան շատ սակաւ էին, և միայն 43 նշանակուած կան 1284ի հին ցուցակի մը մէջ, որ է «Տօնք ըստ Հայոց ամսոց». և զոր վենետկոյ Մշտնջ. Պարգատումարն ալ յառաջ կը բերէ (էջ 5). խմբագրելով հին ճաշոցներէ, և սրբոց 45 տօներով. թէև ցուցակս անկատար է, ինչպէս պիտի ցուցնեմ: Նաև յԱրևմուտս՝ ըստ հին ցուցակաց՝ ամէն քաղաք իւր սակաւաթիւ սուրբերն ունէր (Martigny, 105-6). և Ամբրոսեան ծէսը մինչև ցայսօր 64 տօն միայն կը կատարէ սրբոց, ինչպէս կ'երևի իւր տօնացուցին մէջ (Cabrol, II, 1399): Եւ այն առաւելութեամբ՝ զոր արևելեան ծիսի մէջ շարաթն ունեցած է միշտ միւս լուր օրերուն վրայ, — ինչպէս յայտնի է վերոյիշեալ աղուհացից օրինակէն, — Հայք նոյն օրն անվրէպ սրբոց տօն կը կատարէին զրեթէ ամբողջ տարին: Զայս յիշուած կը զրտնենք իմաստասիրին ընծայուած մէկ ճառէն, որ մեկնութիւն է ժամերգութեանց. և որ խօսելով եօթնեկի օրերուն վրայ՝ անկախարար ի պահոց, շարաթուն համար սա զանազանութիւնը կը դնէ. «յորում և մարտիրոսացն հանդիսից յիշատակն պատ-

մի» (89)։ Յորում և, ու լոութիւնն այլոց մասին՝ կը զգացնեն թէ սուրբերը սովորաբար այդ օրուան յատուկ էին. անոր համար այդ օրուան միայն առաւօտու երգ կը նշանակէ մարտիրոսաց. «Առաքեա տէր զլոյս քո»։ և սակաւը միայն շարաթէ դուրս կը կատարուէին։

Սրբոց տօները բազմացնելու առաջին փորձն ըրաւ ժ դարուն՝ Գագիկ առաջնորդ Ատոմայ ուխտին, Յոյներէն առնլով, և «զյիշատակ մարտիրոսացն միայարեալ ի գիր՝ որ Ատոմադիր անուանեալ ասի» (Ասողիկ, Գ, Գ) և կամ Հոսոմադիր (Մխ. Այրիվ. 57)։ Ո՛ւր կամ ինչպէս զետեղեց այդ տօներն՝ յայտնի չէ, և իւր գործն անձանօթ մնացած։ Բայց անշուշտ նոյն ոճը բռնեց՝ ինչ որ յաջորդ դարուն Գրիգոր վկայասէր, ամբողջացնելով անոր աշխատութիւնը. «Յաւելի, կ'ըսէ, ի նախակարգեալ տօնսն հոռոմի ամսոց՝» իւր յօրինած Տօնամակին մէջ, որ այն ժամանակի ճաշոցն էր՝ ընթերցուածներով ու վկայարանութեամբը հանդերձ։ Ինք կը վախճանի, և իւր գործակիցը կիրակոս կը լրացնէ անոր աշխատութիւնը, «որ լինի կօրանասուն և վեց (տօնք), զորս բոլոր

տարւոյն բաւական համարեցար», կ'ըսէ (Հյպտմ. 351-2): Իսկ արդ ուրիշ կերպով բաւական չէին կարող լինել տարւոյն, բայց եթէ առանց տօնի թողլով առաջաւորքը, քառասունքը, յինունքը, բոլոր դուր. և կիր. օրերը, և շարաթապահքերէն գումանս: Ուրեմն արդի ոճը ժ կամ ժԱ դարէն կը սկսի, իւր մէջ հաստատուն բռնուելով նախընթաց զրութիւնն ալ՝ որ կիւրակէ և պահոց օրեր սուրբ չէր տօներ:

Տօներն ըստ աւուրց ամսոց կատարելու փորձ մ'ըբաւ Լամբրոնացին իւր վիճակին մէջ (Հյպտմ. 422), Յունաց հետ կրօնական միութեան նպատակաւ, բայց ամուլ մնաց նոյն իսկ ի Կիլիկիա: 1284ի պարզատոմար մը՝ գրուած հոն, և 1287ի տօնացոյցն՝ յօրինուած ի Դրազարկ կամ անոր սովորութեամբ, որ նշանաւորագոյն մեծաստանն էր Կիլիկիոյ, երկուքն ալ պահուած ի Ս. Դազար, Վկայասիրին ոճով կազմուած են: Երկրորդին մէջ՝ որ աւելի որոշ է, տօներն ըստ կարի յատուկ օրերուն համեմատ գետեղուած են կամ անոնց կից<sup>1</sup>, նման վերափոխման կամ խաչի. և

1. Այդ եզած է նպատակը՝ տօնից չին ցուցակաց մէջ

կ'ազդարարէ՝ թէ «բայց դու մի՛ զքանիսն խուզեր, այլ որպէս կարգաւորեալդ է՝ այնպէս տօնեա. զի կայ տօն որ ի քանիսն գայ, և է որ ոչ գայ»։ Սակայն գտնուեցաւ յետոյ ուրիշ զքանիսն խուզող մը, Գր. Անաւարզեցին, որոյ փափաքին համեմատ Սսոյ 1307ի և Ատանայի 1316ի ժողովները սահմանեցին ըստ Յայսմաւորաց տօնել։ Առաջնոյն որոշումը մեռեալ տառ մնաց. երկրորդինը՝ որ ուզեց կենդանացնել գայն, նոյնպէս ապարդիւն մնաց. և բոլոր հին տօնացոյցը որ կան յետ դրազարկեան օրինակին, կը հետևին մի և նոյն ճանապարհին, այս ինքն արդի ոճին։

Յ. — Եզրակացնենք։ Լատինը՝ տէրունական տօներէն շատերը, որ լուր օրեր կը հանդիպէին, վերջերս անշքացուցին. իսկ արևմտեան աշխարհներէն ոմանք զանոնք մերձաւոր կիւրակէն փոխադրեցին, հաւատացելոց զիւրութեան համար։ Հայք այս տեղափոխութիւնը կատարեր են դարերէ ի վեր, կիւրակէին հետ կապելով վերափոխումը, իսաչերը, վարդավառը։ Լաւ ըրած էին՝ միւս ազգերէն այսպէս զա-

ամսոց օրերը նշանակուելուն, և ոչ թէ անվրէպ նոյն օրերը կատարել,

տուեւելով: Այ՛ո՛, կ'ըսէ Սիւնհողոսը, և կը հաստատէ նոյն սովորութիւնը (հ. 681): Ի՞նչ տօն կայ մեծ քան աշխարհի փրկութեան յիշատակը, Յիսուսի Չատիկը. և սակայն ամբողջ Եկեղեցին՝ Նիկիոյ ժողովէն սկսեալ՝ կը հեռացնէ զայն ստոյգ օրէն, երբեմն ամսօրեայ ժամանակաւ իսկ, ցուցնելով՝ թէ կարծուածին պէս խորշելի չէ հեռացումը: Որով բնական կու գայ հարցնել, եթէ տէրունական տօնը կրնային ու դեռ կրնան տեղափոխուիլ, ինչո՞ւ չկարենան՝ ինչպէս երբեմն ամբողջ Եկեղեցւոյ մէջ՝ սրբոց տօներն ալ, որ քան զանոնք փոքրագոյն են և աւելի դիւրաւ տեղափոխելի:

Գարձեալ Լատինը նոր կարգադրութեամբ՝ կիւրակէի հանդիսաւորութիւնը տէրունական մեծ յիշատակին անցուցին, և նոյն օրուան մարտիրոսաց տօներն անշքացուցին, վերածելով սոսկ յիշատակութեան մը: Յոյնը՝ ազուհացից մէջ սրբոց տօներ կարգեցին առանց պատարագի և հանդիսի, և նոյնպէս անշքացուցին զանոնք: Իսկ Հայք զատելով սրբոց տօները տէրունականներէ ու պահքերէ, զանոնք պահեցին իրենց վայելչութեան մէջ պատա-

րագաւ ու պաշտամամբբ: Ո՞րն է գեղեցիկը, և որո՞վ աւելի կը փառաւորուին Աստուծոյ սուրբերը. կամ ո՞րն է աւելի հաճելի անոնց՝ թէ տօնախմբութեան վայելչագոյն ձևը: Ապահով եմ՝ թէ Յոյնը և Լատինը մեզ իրաւունք պիտի տան: Օրինակ մը միայն. յիշեցինք (էջ 50) որ մինչդեռ Եւզինէոս Գ ժամանակին զատողութեամբ պատշաճ կը համարէր՝ որ Հայք «զճննդեան Եր. Յովհաննու Մկրտչի ի քսաներորդ չորրորդ աւուր Յունիսի» կատարեն (հ. 679), Ս. Աթոռն 1833ին կը գրէր առ մեր Նախագահն. «Եթէ հաճոյ թուիցի ձեզ, զտօն Յովհաննու կարապետին իսկ և իսկ զկնի Աստուածայայտնութեան տօնեսջիք» (էջ 679): Իսկ մեր 1890ի ծանօթ ժողովը կը սահմանէր. «Յայտ առնէ Սիւնհոդոսս՝ եթէ ծէս հայկական որով վարիմք՝ ոչ տօնելոյ զսուրբս յաւուրս պահոց և կիւրակէից և տօնից բաց յորոշելոցն, է սեփական Եկեղեցւոյս մերում, և պարտ է պահել զայն անփոփոխ և անխախուտ» են (Գործք, 175): Այսքան լաւ ըմբռներ էին այդ Հարբ մեր սովորութեան գեղեցկութիւնը:

4. — Սիւնհոդոսի բացատրութեան մէջ՝

թէ «տօնք սրբոց յորոշեալ աւուրս տարւոյ  
բաժանեացին՝ ըստ օրինակի այլոց եկե-  
ղեցեաց», կրկին նպատակ կ'ենթադրէ.  
մին՝ տօնել զանոնք հաստատապէս իրենց  
հանգստեան բուն օրերուն. միւսն՝ ասով  
հաւասարիլ կամ տօնակցիլ ուրիշ եկեղե-  
ցեաց:

Սակայն իմ համոզմամբ այդ երկուքն  
ալ անկարելի են: Չի նախ՝ ով փոքր ինչ  
տեղեակ է սրբոց վկայարանութեան, գիտէ՝  
թէ անոնց մեծագոյն մասին նահատակու-  
թեան կամ ննջման ճիշդ օրերն անծանօթ  
են: Օրինակ մը միայն. ճ՞ր օրեր վախճա-  
ներ են Յիսուսի 72 աշակերտք, զորս մեք  
միասին կը տօնենք Յունաց պէս. ոչ ոք  
գիտէ:

Երկրորդ՝ մեր տօնած արտաքին սրբոց  
մեծագոյն մասին յիշատակութիւնք՝ յոյն  
և լատին տօնացուցաց մէջ ևս հեռի են  
իրարմէ, մերթ օրերով և մերթ ամիսնե-  
րով: Քանի մ'օրինակ միայն. Ս. Աթանաս  
Յոյներէն կը տօնուի Յունուար 18ին, և  
Լատիններէն Մայիս 2ին. — Ս. Կիւրեղ՝  
Յնր. 18ին և 28ին. — Գր. Աստուածա-  
բան՝ Յնր. 25ին և Մայ. 9ին. — Յովհ.  
Աւետարանիչ՝ Մայ. 8ին և Դեկ. 27ին.



- Հրեշտակը՝ Նոյ. Ցին և Սեպտ. 29ին.  
 – Ս. Իգնատիոս՝ Գեկ. 20ին և Փեբր. 1ին. և այսպէս մի ըստ միոջէ:

Երրորդ՝ լատին ծիսին մէջ անգամ գաւառական յատուկ սուրբեր կը ստիպեն զԱրևմտեայս տեղափոխելու յաճախ՝ օրերով և ամսով՝ հասարակաց տօները, և իրարմէ հեռանալու: Ինչպէս նաև երկու՝ երեք և չորս սուրբեր միասին տօնել կուտան, թէև անոնց նահատակութեան օրերը տարբեր են: Եւ այս երկու պարագային ալ կ'արդարացնեն մեր սովորութիւնը:

Իսկ այդ զանազանութեանց մէջ չկայ «այլոց եկեղեցեաց» միաձև օրինակ մը, որուն կարենանք հետևիլ մեր: Մեր եզականութիւնն է՝ պահոց ու տէրունական տօնից մէջ սրբոց անյիշատակութիւնը միայն: Սակայն ծէս մ'անով է առանձին ծէս՝ որով կը զանազանի ուրիշներէ. ասպաթէ ոչ՝ ինչ բանով Սիւնհոգոսը պիտի կարենար ըսել՝ «հայկական ծէս»: Եւ այդ զանազանութիւնը իսկ կը պահեն զայն խառնուելէ և կորնչելէ, ուսկից այնքան գովելի նախանձով կը զգուշացնէ նոյն Սիւնհոգոսը: Արդի լուրջ և պատկառելի ծիսազէտք Եւրոպիոյ ճշմարիտ հաճոյք մը կը

զգան՝ երբ կ'ըսեն՝ իրենց ծանօթութեան չափով. «Միայն Միլանու եկեղեցին կայ այժմ՝ որ հաւատարմութեամբ կը պահէ հին աւանդութիւնքը, և քառասնորդաց մէջ սրբոց ոչ մի տօն չի կատարեր» (Cabrol, Բ, 2154): Այս պարծանքէն՝ որ մերն ալ է ընդարձակագոյն չափով, ինչո՞ւ հրաժարինք կամովին, որուն պիտի ուզէինք մանաւանդ վերադառնալ՝ եթէ երբեք կորուսած լինէինք:

Բ. — Միւնհոդոսը կը յարէ. «Զայսմանէ ևս հոգ տարցի՛ զի նշանաւորքն ի նոր սրբոց արձանագրեսցին ի մերումս տօնացուցի, և առաջի զիցին ի պաշտօն» (Տ. 678):

Ղ. — Այս կէտը ծիսի հակառակ չի թուիր ինձ՝ նման առաջնոյն: Մեր պատմութենէն և հին տօնացուցաց ու ճաշոցաց համեմատութենէն կը տեսնուի՝ որ մեր տօնած սրբոց թիւը դարուց ի դարս աճեր ու փոփոխուեր է տօնասիրաց ձեռօք, և նոր նահատակներ շարուեր են հնոց քով, որոց հաւասար իրաւունք ունէին փառաւորուելու: Բայց անշուշտ հարկաւոր է ընտրութիւն մը: Եկեղեցին նկատելով՝ որ անկարելի էր մէկ տարւոյ մէջ ամփոփել հաւատոց բիւրաւոր վկայից յիշատակները,

իրենն դրութիւն ըրաւ ի սկզբանէ, և կը պահէ ցարդ, ամէն զաւատի կամ աշխարհի կամ ծիսի պատուել տալ իւր սեպհական սուրբերը, որպէս զի բոլորն ալ կարենային տօնուիլ մէկ կամ միւս կողմ. բաց ի նշանաւորագոյներէն, ինչպէս Առաքեալը, Մարգարէր և եկեղեցւոյ մեծագոյն Հարը՝ որ ամբողջ ըրիստոնէութենէն կը յիշատակուին: Գիտենք՝ որ մեր Լուսաւորիչն անգամ, \*երկար տարիներէ ի վեր մտած լատին եկեղեցեաց մէջ, իրենց տօնացուցին վերջին կարգադրութեան առթիւ դուրս թողուեցաւ: Այս կանոնը մոռցուելու չէ, ինչպէս ըրաւ միջին դարը, վրիպակաւ բիւլ փնդոելով փոխան որակին, և ծանրաբեռնելով հայ տօնացուցակը, որոյ հետ մեր այժմեան ախորժակները շատ չեն հաշտուիր:

2. — Մեր տօնացուցին վրայ յաճախ խորհած եմ ես ինքս, և երկու փոփոխութեան պէտք զգացած. յապաւելու և յաւելլու: Հայոց հնագոյն փոքրաթիւ տօներէն զատ, միջին դարուն յաւելուածոց մէջ խիստ ու զիտակից ընտրութիւնը կը պակսի, ինչպէս ըսի: Իրր օրինակ անունը թագաւորաց տօները: Տրդատ՝ տիկնոջն

ու քրոջը հետ կայ հին ցուցակին մէջ: Հեթանոսութենէ քրիստոնեայ (ոչ անշուշտ ըստ երազակոծ ու խորշելի նկարագրին Ազաթանգեղոսի), պատճառ Հայաստանի դարձին ի լոյս աւետարանին, կրօնաւորութեամբ հրաժարեալ թագէն և աշխարհէ, և այդ պատճառաւ ի մահ մատնեալ անօրէն իշխաններէն, և կինն ու քոյրը գործակից և վիճակակից իրեն, արժանի էին սրբոց պսակին, և Հայաստան պատուեց զանոնք ի սկզբանէ (Փաւս. Գ, ԺԳ): Իսկ կոստանդիանոս, Թէոդոս և Արզար՝ չկան հին ցուցակին մէջ: Ասոնց առաջին երկուքն յայտնի չէ՝ երբ շնորհուեցան հայ տօնացոյցին. Վկայասիրի Տօնամակը չունինք, — բաց յիշատակարանէն, — որպէս զի կարենանք իրեն վերագրել կամ ոչ: Բայց կը յիշուին Լամբրոնացւոյն պատարագամատուցին (219), նորամուտ սրբոց 1284ի ցուցակի մը և յաջորդ տօնացուցաց մէջ: Հոովմայ Եկեղեցին՝ որոյ կայսերքն էին աղոնք, երբեք չխորհեցաւ կարգել զանոնք սրբոց մէջ. յոյն եկեղեցին տօնեց զկոստանդիանոս միայն<sup>1</sup>: Սակայն

1. Որոյ համար սուրբ կոչուած ու նկարագրուած է Ազաթանգեղոսէ (ՃԻԵ), սուրբ՝ Խորենացիէն (Բ, 29.

անոնց կենսագրութեան մէջ դժուարին է գտնել այն՝ որ աւելի քան մ'է քան սոսկ բարեպաշտութիւնը, (չհաշուելով զգալի արատներն անոնց կենաց), և որով միայն սովոր է Եկեղեցին սեղանոց վրայ հանել փրկութեան սահմանուած այն հոգիները, զորս կը գատէ սովորական փրկեալներէն՝ որ Աստուծոյ միայն յայտնի են:

Արգար՝ յիշուած, գրողին քմահաճոյքով, 1284ի խորհրդատետրին մէջ՝ թագաւորաց հետ, անձանօթ է անոր յարակից նախա-յիշեալ նորամուտ սրբոց ցուցակին և յա-ջորդ տօնացուցաց մէջ ցվերջ ժեղարու: Եւ արդի պատմական քննադատութիւնն թ' Արգարէն (ամբ 179-214) յառաջ հա-մանուն քրիստոնեայ իշխան չի ճանաչեր Եղեսիոյ մէջ (Vacant, Ա, 72), և Ե Արգարու թղթակցութիւնն քիսուսի հետ ու դարձն՝ առասպել կը համարի: Հայ եկեղեցին ալ, հաղորդ նոյն գիտակցու-թեան, աւելի քան տասնուհինգ դար այդ Արգարը չկրցաւ իբր սուրբ երևակայել կամ յիշել կամ տօնել, մինչև որ յետին

Գ, 14) և Փարսեցիէն (Գ): Ուր նոյն կամ այլ հիներ թէոզոսի երբեք տուած չեն այդ կոչումը, ոչ ալ Ար-գարու:

գրչակ մ'անգիտակից նախանձով սպրդեցուց զայն տօնացուցէն ներս, և ըստ ամենայն հաւանականութեան մեզ այսօր տօնել կու տայ հեթանոս իշխան մը: Թող որ անոր բրիտոնէութիւնն ինքնին միայնակ չպիտի բաւէր զայն այդ պատուին հանելու:

Բայց քան զԱրգար նուազ մթին չէ Ազդէի անձն ալ, թէև քան զայն կանուխ մտած մեր տօնացուցին մէջ. ըստ որում 1284ի նոր ցուցակն անոր տօն կը նշանակէ ի 23 դեկեմբերի: Ըստ ասորի ազրերաց, ինչպէս Լարուրնիայի (էջ 6) և Բար Սալիբայի<sup>1</sup> Այե մին էր 72 Աշակերտներէն. ըստ Եւսեբեայ (Պտմ. Եկ. Ա, ժԲ) գրուած Թաղեսս, նոյնպէս 72էն էր իսկ ըստ Խորենացւոյն՝ (Բ, ԼԳ) աշակերտ Թաղէոսի՝ քարոզչին Արգարու, և նահատակեալ ասոր որդիէն: Կկատելով անուան զանազանութիւնը և Արգարու վիպին առասպելականութիւնը, որ միակ ազրիւրն է Ազդէի անձին, ասոր գոյութիւնն ալ կասկածելի կը զառնայ: Համարելով իսկ թէ մին էր 72 Աշակերտներէն՝ ըստ ասորի

1. Chabot, *Chron. de Michel le Syrien*, Ա, 148.

սլատմչաց, որ աւելի կարեւորութիւն ունին քան զմեր խորենացին, արդէն կը տօնուի Աշակերտաց հետ, որով առանձին յիշատակութիւն աւելորդ է ու վտանգաւոր: Խիստ քննութիւն մը միւս տօներու ևս՝ սլիտի ընծայէ մեզ ուրիշ յապաւելի նիւթեր ալ, զորս մեր հին վկայասէրը անբաւական էին խտրելու:

Յ. — Կան դարձեալ աւելորդ կրկնութիւնք սրբոց, որ արդիւնք են զբնագրաց անուշադրութեան, և կրնան այժմ իսկ յապաւուիլ: Այսպէս 1284ի հին ցուցակը զԳրիգորիս կը կարգէ Լուսաւորչի որդւոց հետ, և չունի անոր Գիւտ նշխարացը. — Սահակայ տօն կը դնէ ի նաւասարդի և, և Մեսրոբայ՝ ի մեհեկի ժԳ. իսկ ի տրէի ժԷ: Սահակայ և այլոց թարգմանչաց. ու չունի զատ տօն մը Սահակայ և Մեսրոբայ: — 1284ի նոր ցուցակն Եփեսոսի մանկունքը չի յարեր թէոզոսի տօնին. — Աւետարանչաց տօնին երեք անուն կը նշանակէ, Մատթէոս, Մարկոս և Ղուկաս. իսկ զՅովհաննէս՝ միայն Յակոբայ հետ աւագ տօնից մէջ. — Զարարիա մարգարէին տօնն ունի առանձին, բայց Երկօտասան մարգարէիցը ոչ. այս տօնին հաս-

տատութենէն վերջ Չաքարիայի առանձին յիշատակն աւելորդ կը լինի. — մէկ մէկ անգամ կը յիշէ զՂուկիանոս քահ. ի նոյ. 15, զՊիոն ի մարտի 12, և զՍեղրեստորոս ընդ կոստանդիանոսի յ2 յունուարի:

4. — Կան նաև մեր հնութեան մէջ իսկական սուրբեր՝ որ բացակայ են այժմու տօնացոյցէն: Այսպիսիք են Վաչէ զօրավար Մամիկոնեան ու զինակիցք, Վարդանանց պէս ընկած պարսկական մարտի մէջ, գորս Ս. Վրթանէս սրբացոյց (Փաւստ. Գ, ԺԱ), և Ժ դարուն դեռ կը տօնուէին ըստ Մեսրոբայ (Սոփեբք, Զ, 11): — Յովնան Իմաստասէր, խարազնագզեաց սքանչելի վարուք (Յովհ. Պատմ. ԻԲ), և մեծ ջատագով ուղղափառութեան՝ «Ընդդէմ Երեսութականաց» ճառովն ի նպաստ երկուց բնութեանց, ու Մանազկերտի ուղղափառ ժողովով հակառակ Յուլիականաց<sup>1</sup>: Արոյ համար Միքայէլ ասորի կը պատմէ՝ թէ «կաթողիկոսն փառաւորեալ էր յոյժ և յոյժ գովեալ իւրովք գործովք բարեպաշտութեան, վար-

1. Այդ ժողովին գործոց հարազատ բնագիրն յայտնուելով (տես առ Chabot, Բ, 496-500), վերջնականապէս առաջաւեց Հայրապետիս վերագրուած Հարափառ կեղծ գրութիւնը (Գիրք բղբոց, 220), որ շատերը մուրհոցոյ նոյն ժողովոյն և Հօր մասին:



դասպետութեամբն և ողորմածութեամբ,  
 պատուեալ և սիրեցեալ յամենեցունց, և  
 համարէր իբրև զհրեշտակ վասն սրբու-  
 թեան իւրոյ» (Chabot, անդ, 496): Գր.  
 Մագիստրոս (Թղթ. 42), Գր. Վկայասէր  
 (Պձն. Մատեն. 80) և Գր. Տղայ (Թղթ.  
 30) զինքը կը կոչեն «սուրբն» Յովհաննէս  
 կամ վարդապետ, որոյ պատճառն ալ կու-  
 տայ մեզ Շնորհալին, ըսելով առ Թէորիա-  
 նոս՝ թէ «յիշատակ նորա սուրբ պատուի  
 առ մեզ յարգութեամբ» (Պալճ. Պտմ. Կրդ.  
 Վրդ. 234): Եւ 1650ին ի Կ. Պոլիս գրուած  
 տօնացոյց մը կը նորոգէ այդ յիշատակը,  
 Յովհ. Երուսաղեմացուն հետ կարգելով՝  
 «և Յովհաննու Ուձնեցոյն Հայոց կաթո-  
 ղիկոսին»: — Փոքր Ատովմեանց, աւելի  
 քան 150 վկայք, «մեծ հայրապետն Յով-  
 հաննէս (Ե) օր սահմանեալ յիշատակի  
 ամենայն սրբոցս այսոցիկ, տարևորական  
 պատուով տօնէին զսոցա կատարումն» ի  
 մեհեկի ԻԵ (Յովհ. պտմ. ԻԵ): — Վարդան  
 կը պատմէ փառաւորեալ նահատակին  
 Սմբատայ համար՝ թէ Յովհաննէս կթղ. կը  
 կարգէ «և տօն սուրբ թագաւորին Սմբա-  
 տայ» (87), որ ըստ նոյն հայրապետին  
 հրաշքներ ալ կը գործէ (ԻԹ), Արգարէն՝

կոստանդիանոսէն ու Թէոդոսէն շատ աւելի յարմարաբար գետեղելով զայն Ս. Տրդատայ քով. և Յայսմաուրքը սրբոց մէջ կը յիշէ զինքը (16 ապրիլի): — Նոյն կաթողիկոսը Յուսիայ ձեռքով ի Գուին միւս նահատակելոց համար, որոց մէջ յանուանէ կը յիշուին հարազատքն Գաւթի և Գուրգէն Գնունիք, և Միքայէլ գուգարացի, կ'ըսէ՝ թէ « տարևորական տօնախմբութեամբ պատուին միշտ յեկեղեցիս սրբոց » ի Իէ մարերի (ԾԱ), և զոր կը կրկնէ Ստ. Ասողիկ ևս, նշանակելով յիշատակն « ի 20 նոյեմբերի » (Գ, Ե): — Մխիթար Գոշալ կը պատմէ իւր ժամանակակից Խոսրով վկային համար՝ թէ « քնդ հինսն մեծարեմք տօնիւ » (ՂԱրտ. 1897, 38): Ասոնք՝ տօնուածները, շնաշուելով ուրիշ հայ մարտիրոսներ՝ որոց մահը յիշուած է, բայց ոչ և տօնախմբութիւնը:

Ինչո՞ւ ասոնք և այսպիսիք չեն մտած տօնացուցին մէջ ու մոռցուեր են: Ահա պատճառը: Վկայասիրի Տօնամակին ու տօնացուցին կազմութենէն յառաջ՝ սրբոց տօներուն որ և է զբաւոր քնդհանուր առաջնորդ և հաստատուն կռուան կը պակասէր. ամենայն ինչ աւանդութեան վրայ

հաստատուած էր: Տօնամակն անձանօթ է մեզ, և անկարելի իմանալ՝ թէ որքան խնամով ու ճշդութեամբ հաւարուած էին հայ տօներն անոր մէջ՝ հայրապետական աթոռին այն պառակտեալ ու թափառական շրջանին: Յաջորդ գրաւոր յիշատակարանը, հայ բնիկ տօնից վերոյիշեալ ցուցակը, անկատար գործ մ'է, և ոչ շատ հին, անմիաբան հին ճաշոցաց (աստ, 170) ու պատմութեան հետ: Զոր օրինակ Փաւստոսէ գիտենք՝ թէ Հայր «յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն, ամի ամի ժողովեալք՝ զօր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» (Գ, Կ): Եւ սակայն յիշեալ ցուցակին մէջ չկան առաքելոց տօնք, բաց ի թաղէոսէ, ոչ մարգարէք, և ոչ իսկ Ս. Ստեփանոս նախավկայն: Աւելի ցայտունը, կը պակասին հոն նաև վարդանանք, որ իրենց մահուան օրէն ի սուրբս դասուած էին. «ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն» (Եղիշ. Մատեն. 101): «Երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն վարդանայ և նահատակեցան» (Փարս. 1, Թ): Կ'երևին ի տես-

լեան նորադարձ մոզպետին (Եղիշ. 130),  
 և կը տօնախմբուին ևս, ինչպէս կ'իմա-  
 ցուի Եղիշէի ակնարկութենէն Վասակայ  
 մասին՝ թէ «ոչ յիշեցաւ անուն նորա ի  
 մէջ սրբոց» (121): Տօնամակի երկաթագիր  
 հին նշխարի մը մէջ (ի Վենետիկ) անոնց  
 տօնը նշանակուած է, «Հրովտից Լ. սրբոյն  
 Վարդանա», և ներսը յիշուած իւր նիգա-  
 կակիցը ալ: Նոյն տօնը կայ նաև 1287ի  
 հնագոյն տօնացուցին մէջ և ամէն տեղ-  
 որով 1284ի ցուցակին մէջ անուշադրու-  
 թեամբ չէ մտեր: Վերջապէս Ժ. Գ. դարուն  
 վերջերը կ'երևի առաջին տօնացոյցը, յի-  
 շեալ 1287ին իսկ, դրազարկեան սովո-  
 թութեամբ, որ կ'իմացնէ՝ թէ այն ժամա-  
 նակ արդէն ազգին մէջ զանազանութիւն  
 կար տօներու, և թէ Գրազարկ իւր յատուկ  
 տօնացուցակն ունէր: «Իսկ առաւելութեան  
 և պակասութեան տօնից, կ'ըսէ յիշատա-  
 կարանը, բնաւ մի՛ յերկուանար. քանզի  
 զոր ընկալեալ է Հայաստանեայց եկեղեցիք  
 ընտրութեամբ սուրբ վարդապետացն նա-  
 խադրական տանն սուրբ ուխտին Գրա-  
 զարկու, զայնոսիկ լիով գտցես ի սմա,  
 որոց պատմութիւնքն յայտնի են, որ կա-  
 տարի ի փառս Աստուծոյ»: Բայց Գրա-

զարկի միաբանից ընտրութիւնը՝ միակ և ապահովագոյն կոուանը չէր կրնար լինել, որով մեք հետագայ տօնացուցաց մէջ ուրիշ նորութիւններ ալ կը տեսնենք:

Եկեղեցական գրոց այս խառնակութեան երեսէն էր ուրեմն, և երբեմն գուցէ տօնից լոկ գաւառի մը մէջ կատարուելովն ալ, և ոչ ուրիշ նկատումներով, որ մոռացուած են նշանակեալ հայ սրբոց յիշատակները, և որոնք տօնացուցին իմաստուն կարգադրութեամբ մը կրնային նորոգուիլ այժմ: Երբեմն տօնախմբեալ ստոյգ սուրբեր՝ միշտ արժանի տօնախմբութեան կը մնան:

Գ. — Սիւնհոդոսը կը սահմանէ և նոր տոմարին գործածութիւնը «յամենայն վիճակս պատրիարքութեան մերոյ», որով զայն դեռ չընդունող վիճակաց մէջ ալ «անդէն վաղվադակի մուծցի նորն». միանգամայն հաստատելով՝ թէ Առաք. Աթոռը թոյլ տուած է միշտ հինն արևելեայց (հ. 676, 677):

Գրիգորեան տոմարի ընդհանրացման խնդիրը ծագեցաւ անգամ մ'ալ 1903ին, հանգուցեալ Պօղոս Էմմանուելեան կաթողիկոսի նախաձեռնութեամբ կամ լաւ ևս

Թոյլտուութեամբ: Ոչ ոք կրնար տարա-  
 կուսիլ այդ սրբազրութեան զիտնականու-  
 թեան մասին, որուն ես ինքս համակիր  
 էի և եմ՝ երբ կարենայ պատշաճօրէն կա-  
 տարուիլ: Բայց մեր հասարակութիւնը  
 վրդովեցաւ այն ընկերական խառնաշփո-  
 թութեան պատճառաւ՝ որ յառաջ պիտի  
 գար նոր փոփոխութեամբ: Ես այդ ժա-  
 մանակ ի կոստանդնուպօլիս էի. և Մեձմ.  
 Ախպարի մէջ (21 մայիս) մի առ մի ի տես  
 զրի ծագելի անպատեհութիւնքը, թէ ինչ-  
 պէս մի և նոյն ազգին ու ծիսին մէջ՝  
 տէրունական ու սրբոց մի և նոյն տօները  
 պիտի հեռանային իրարմէ, և ազգակիցք  
 իրարու սուրբ յիշատակաց անձանօթ և  
 անհաղորդ պիտի մնային. — թէ աշխա-  
 տանոցաց, գրասենեկաց և ուսումնարանաց  
 մէջ համազգի աշխատակիցք և ուսումնա-  
 կիցք պիտի զրկուէին կամ իրենց տօնից  
 պահպանութենէն և կամ նիւթական ու  
 մտաւոր շահերէն. — թէ այլադաւան բը-  
 նակակից ընտանիքներ կամ ընտանեաց  
 անդամներ պէսպէս դժուարութեանց և ան-  
 տեղութեանց պիտի բախէին՝ պահոց ու  
 տօնից բաժանմամբ. — թէ նոր տոմարով՝  
 ըստ մեր ծիսին կիրակէից հետ կապուած

տէրունական տօներն ու սրբոց յիշատակները պիտի հեռացնէինք հին տոմարի հետևողներէն՝ առանց մերձեցնելու արևմտեայց, այլ նոր բաժանում մ'ալ ստեղծելով, և այլն : Կաթողիկոսն ազգին զժկամակութեան հետ բարեյօժար նկատողութեան առաւ զխտողութիւնքս ալ, զգացնելով ինձ՝ թէ իւր մտքէն հեռի չէին անոնք, և մարեց խնդիրը :

Նոյն պահուն թուրքիոյ ոստանին մէջ կը գտնուէր այժմու Ամեն. Հոգևոր տէրը, դեռ եպիսկոպոս Ատանայի : Հանդիպեցաւ ինձ, շնորհաւորեց զրութիւնս զոր կարգացած էր, և ըսաւ. «Դիտողութեանցդ ես ինքս կատարելապէս հաւան եմ, և փորձով վկայ իմ վիճակիս մէջ. երբ վերադառնամ, նոր տոմարը հնոյն պիտի վերածեմ հոն ալ» : Յաջողեցաւ իւր դիտաւորութեան մէջ թէ ոչ, չիմացայ : Բայց Սիւնհոդոսին նոր ձեռնարկն իրաւունք կուտայ մեզ խորհելու՝ թէ այն ժամանակ դիտուած անպատեհութիւնք արդէն դադարած լինելու են. ապա թէ ոչ՝ Սիւնհոդոսը տոմարական սրբագրութեան մը չպիտի զոհէր ընկերական կապերն ու շահերը, գիտնալով՝ որ «Շարաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վասն շարաթու» :

Նոր տոմարին մէջ կան նաև տօնից յաւելումներ ու բաժանումներ, որոց մասին մի առ մի խօսած եմ նոյն առթիւ (Մեձ. Ախպ. 24 մայիսի), և զորս կարելի է մերձեցնել վերև պարզուած սկզբանց:

## ԺԵ

### Հ Ա Ն Դ Է Ս Ք

1. — Սրբութեամբ օրհնութեան տարի: — Սիւնհոգոսը կ'արգելու մեր կղերին զործածել «զգարդ օտար ծիսի», ինչպէս լատինական ուրարը, որ մտած է՝ կ'ըսէ՝ թեմերէն ոմանց մէջ (հ. 644): Սակայն եկեղեցական զգեստուց մէջ կը դասէ «զուսանոցն», որ կը գործածուի Ս. Խորհրդով օրհնութիւն տալու պահուն (հ. 643), և որ նոյն աղբիւրէն է: Եթէ հնախօսութեան հարցնենք, լատինական ուրարն աւելի հաշտ է մեր ծիսին հետ քան ուսանոցը: Քահանայական ուրարն հին ժամանակ հաւասար էր սարկաւազի կրածին, ու վզէն



կախուած փոխանակ ուսէն, ինչպէս յայտնի է Լամբրոնացւոյն նկարագրէն, բոլոր հին նկարներէն, և աւելի երկար էր քան այժմու լատինականը: Կերկայ միապաղաղ ձևը նորամուտ է հայ ծիսի մէջ (աստ, 39): Կաթողիկեայ ուսահայր և Ս. Ղազար շէն գործածեր ուսանոցը, և օրհնութեան առթիւ կը շատանան այն զգեստներով՝ որ ամենուն համար բաւական են քահանայագործելու Ս. Խորհուրդը և օրհնելու՝ պատարագի մէջ, առանց զգացնելու ուսանոցի պէտքը: Մանաւանդ որ Սիւնհոդոսն ինքնին կը պատուիրէ նորամուտ ջերմեռանդական պաշտամանց մասին.

«Սյլ պարտ է զգոյշ կալ՝ զի այսպիսիքն ընդ բնութեան ծիսի որչափ ինչ հնար իցէ՝ միարանեսցին» (հ. 612): Եւ այս կանոնն իսկ աւելորդ կ'ընծայէ ուսանոցը. միանգամայն անդրադարձնելով մեզ՝ թէ «ընդ բնութեան ծիսի միարանելու» համար հարկաւոր էր նաև կանգուն կատարել պաշտօնս, նման պատարագին և այլոց, և ոչ ծնրաղիր:


2. — Թարորը Ս. Խորհրդով: — Սիւնհոդոսը կը յիշեցնէ այս հանդէսն՝ ուր «ի թագս և ի հրապարակս քաղաքաց և տե-

ղեաց՝ ուր չգուցեն ինչ զժուարութիւնք, մեծաւ հանդիսիւ և փառաւորութեամբ շըրջեցուցանեն» Ա. Հաղորդութիւնը (հ. 431): Եւ կը յանձնարարէ՝ «զգոյշ կալ, զի մի ինչ ծաղու և անարգանաց տեղի տացի յերեսաց անհաւատից կամ այլակրօնից, և եթէ չիցէ հնար խուսափելոյ անտի, յեկեղեցիս կամ ի գաւիթս նոցին կատարեսցին՝ և ոչ ի հրասպարակական տեղիս» (հ. 637):

Այս մասին ոչ մէկ զգուշութիւն և պատուէր արդարև չատ չէ: Հին Քրիստոնէութիւնը, որ իւր սկիզբէն այս մեծ խորհուրդը, — որուն հաւատոյ աչքերը միայն կրնային հասնիլ, — հեոի պահեց անհաւատից տեսութենէն՝ սքողելով թարնութեան բոլոր հնարքներով, աննշան անուամբ մը՝ յեկանելի զնացն, սեպհականելով դոնփակ տաճարներ, տաճարաց մէջ վարագուրափակ խորաններ, և անոր մատուցման պահուն արտաբսելով քրիստոնեայ երախայքը, թերահաւատներն ու սպաշխարողներն անգամ, զժուարաւ պիտի կարենար համոզուիլ՝ թէ պատշաճէր խորհրդոյն՝ հանել շրջեցնել զայն փողոցաց մէջ, և մանաւանդ այն քաղաքաց՝ ուր

քրիստոնէին հետ կը բնակին մահմետա-  
 կանը, հրեայն, ամէն աղանդներ, և անոնց  
 խաւարամած աչքերուն ենթարկել զայն:  
 Որոնք եթէ ոչ մէկ արտաքին նախատինք  
 ալ չընեն առ քաղաքավարութեան, բայց  
 ոչ մի բան պիտի կարենայ արգելուլ անոնց  
 ներքին անարգիչ դատաստանները, որոց  
 արձագանգը լոկ պիտի լինէր արտաքինը,  
 և ոչ աւելի բան մը: Հետևարար Սիւն-  
 հոդոսը, որ այն տանց մէջ անգամ՝ ուր  
 պատարագ պիտի մատչէր, կ'ուզէ որ «ոչ  
 բնակիցեն բնաւ թուրքը, հրեայը, հերձուա-  
 ծողը և հերետիկոսը» (հ. 440), իրաւունք  
 ունէր ամենայն զգուշութիւն պատուիրելու  
 թարորի առթիւ: Եւ ինձ կը թուի՝ թէ  
 մեծագոյն զգուշութիւնը, մանաւանդ խառ-  
 նակրօն քաղաքաց մէջ, պիտի լինէր՝ ի  
 սպառ արգելուլ հրասպարակային թարորը  
 Սրբութեամբ, որ քրիստոնէութեան փա-  
 ռաց և ազատութեան միակ նշանակը չէ  
 անշուշտ. և որուն անձկալից վրդովմամբ  
 մը հանդիսատես եղած եմ միշտ կոստանդ-  
 նուպօլսոյ մէջ, նկատելով հետաքրքիր  
 թուրք խուժանին անպակաս ներկայու-  
 թիւնը: Հին քրիստոնէութիւնը, ոչ ալ մեր  
 Հարը՝ չխորհեցան երբեք տաճարէն դուրս

հանել խորհուրդն ի հանդէս: Մեր եկեղեցական հին գրոց մէջ յիշուած կը գտնենք թարորնեք՝ միայն խաչերով, աւետարանով, մոմերով ու խնկով, և զարդիւք սրբուրեան (տօնաց. վ. ենետ. 1284թ, 1438թ ևն): Իսկ խորհուրդը փակուած մնաց միշտ սրբավայրին խորհրդաւոր որմերէն ներս: Ամէն նորութիւն ամենուրեք հետեւելի լինելու չափ զեղեցիկ կամ յարմար չէ միշտ: Թող բրիստոնէութեան խորհրդոց մեծագոյնը և ամենէն զաղտնին՝ սլահէ անխախտ իւր աւանդական պատկառելի թարնութիւնը նոյն իսկ բրիստոնեայ վայրերու մէջ, և զսպուի աշխարհից և կամ անմաքուր փողոցաց մէջ զայն ի ցոյց դնելու բաղձանքը:



## ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

ԱՂԳ. 5-6.

Ա. ՍԻՒՆՀՈՅՈՍԻ ԳՈՐԾԵՐԸ. Ասոնց կարևորութիւնը. 7-8. — Բողանդակութիւնը. 8-10. — Նիւթերը, և քաղձալի կիտեր. 10-12.

Բ. ՀԱՅ ԵՒՍԸ. Անոր վայել մեծարանքը. 12-14. — Ս. Աթոռոյն վճիռք առ սյա. 14-16. — Իւր վերանորոգումը ժրագրուած Սիւննոցոսէն. 16-20.

Գ. ՄԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԳՈՐԾԸ. Ժողովը կազմուցք. 20-22. — Միտական ներքին զանազանութիւնք ներուած. 20. — Ժողովէն քննելի ազրերք. 22-23. — Սրբադրութիւնք ինչ կկեց. զրոյ մէջ. 23-29. — Վարժութեան կապերէն զզուշանալի. 29-30.

Դ. ՄԵՐ ԵՒՍԸ ՆԵՐԿԱՅԻՍ. Զուրկ է անարատութիւնէ. 31-32. — Զանազան կարգի նորութիւնք իւր մէջ. 32-40.

Ե. ԳԵՌ ԻՆՉ ԿԱՐՅԵԼԻ Է ՈՒՂՂԵԼ. Ընդարձակագոյն նորոգութեան մը սահմանն ու պահանջը. 40-43.

Զ. ԵՐԳՆԵԱՆ ՎՃՈԱԳԻՐԸ. 43. — Ստիպողական չէ սյն. ներքին փաստեր. 44-49. — Ս. Աթոռին ընթացքն անոր նանդէպ. 49-50. — Ազգիս և Սիւննոցոսին վարժումը. 50-52.

Է. Ս. ԿԱՐԳԻ ԵՒ ՀԻՌԱՆԳԱՅ ՅԵՄԱՆ ՆԻՒԹԵՐՆ ՈՒ ՉԵՒԵՐ. Սիւննոցոսին վճիռը. 52-53. — Կարգի առաքելական նիւթն ու ձե. 53-54. — Յոյն և հայ ձեեր. 54-57. — Սպասուց աւանդումը մեր քով. 57-61. —

Արեմտեայց տեսութիւնք. 61-65; — Բնական գասողութիւնք. 65-70; — Ինչո՞ւ և ևննազրութիւնք չէ յիշուած Սիւննոգոսէն. 70-72;

ՀԻՒԱՆԴԱՅ ՅԵՌԻԹԻՒՆԸ; Կոչումք. 72-73; — Կիլիկեան ձեր. 73-75;

Ը. ԿԻՍԱՍԱՐԿԱՍԻԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՔՐ ԱՍՏԻՃԱՆՔ. 76; — Անոնց ծագումն յարեմուսս. 77-79; — Մեր ազգին մէջ. 79-83; — Կիսասարկասազութիւնք մե՞ծ թէ փոքր աստիճան. 83-86;

Թ. ՉԵՅԱՆԿՈՒԹԵԱՆՅ ԿԱՐԳԵՐԸ. 86; — Անոնց ծագումն ու փոփոխումք մեր քով. 87-89; — Էպիսկոպոսական կարգք. 89-93; — Ընարեկազոյն կարգեր. 93; — Կաթողիկոսականք. 93-95; — Օրհնութիւն կրօնաւորաց. 95-96;

Ժ. ԵԿԵՂԵՅՑԻ ԵՒ ՍՊԱՍՔ; Ճարտարապետական նկարաչիրք. 96-97; — Քաղաքորմ. 97; — Սեղանոց թիւք, զիրքք, ևնն ու զարդք. 97-101; — Թիւ պատարազ. 98; — Համախումբ պատարազ. 100; — Էպիս. աթոռին տեղք. 102; — Ամբոնն տեւորդ. 102-104; — Ընծայարանք ինչ էին. 104-106; — Էկեզիչին սծանելի միշտ. 105-106; — Կրօնկոյթք սեղանոյ. 106-107; — Կափարիչն տեւորդ. 107-108; — Աւտարանի գաստատակ. 108; — Վարազոյրք. 108-111; — Բուրուանի զանգակներ. 111-112; — Անջատ ուսանոցք շապկաց. 112; — Գոյնք զգեատուց. 112-116; — Սողաւորս սարկասազաց. 116; — Կոնքեան կոզմք. 116-117; — Գասազանք. 117-121;

ԺԱ. Ս. ՊԱՍՏՐԱԿԻՄԷՁ. 121; — Կերա՛յք և Հեղու. 122-123; — Կրօնազրութիւն. 123-130; — Օրհնութեան ձև. 130-131; — Կշխարի պատկերն ու բեկումք. 131-133; — Ինկարեկութիւնք. 133-134; — Աւտարանք քառամտորդաց. 135;

ժԲ. ԻՈՐՀՐԴԱԿԱՆՔ: Խաչի պաշտօնը, սծումը, հայկական ձեր. 136-143: — Պատկերաց յարգանքն և սծումը. 143-146: — Օրհնած ջուր. 146-148: — Օծումն սանալուայի. 148-149: — Օծումն ննջեցելոց. 149-152:

ժԳ. ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՎ: Սիւնհոգսը կ'ամփոփէ առանձնականը. 152-153: — Նոյնը հարկաւոր նաև հասարակաց համար. 153: — Պատմական ծրագիր մը. 153-164:

ժԴ. ՏՕՆԱՅՈՅՑ: Առաջարկ փոխելու սրբոց օրերը. 165-166: — Պատմութեան մէջ տօնք անհաշտ էին պահոց նեա. 166-169: — Սրբոց տօնից թիւն ու օրեր Հայոց քով. 170-172: — Ըստ աւուրց ամսոց տօնելու հին անյաջող փորձեր. 172-173: — Նոյնն աւելորդ այժմ ալ. 173-175: — Անկարելի միարանելի միւս եկեղեցեաց նեա. 175-178: — Առաջարկ յաւելու նոր սուրբեր. 178-179: — Յապաւելի տօներ. 179-188: — Աւելորդ կրկնութիւնք սրբոց. 183-184: — Յաւելի տօներ. 184-189: — Նոր սուտարին բնականրացումը. 189-192:

ժԵ. ՀԱՆԴԷՍՔ: Լատին ուսանոցն աւելորդ. 192-193: — Ս. Խորհրդով թարորն զգուշայի. 193-196:



281.6

2-43

## ՆՈՅՆ ԳՐՁԻ ԳՈՐ.

= 0 =

Մեկ օրինակ

Ս. Պատարագի օրերն, տե՛ս  
 Հայ Եկեղեցւոյ մէջ. — Հնախօսական քննութիւն սոյն նիւթոց, հանդերձ կարևոր ծանօթութեամբ: — Գինն է ֆր. 1:

Երդուսն հին Հայոց մէջ. — Մանր նկարագիր զանազան երդմանց, արարողութեանց, պահարանաց, բժժանաց և այլն: — Գինն է ֆր. 1,50:

Ճաշեր և խնձոյք հին Հայաստանի մէջ. — Ընդարձակ նկարագրութիւն ճաշի և ուտելեաց յատուկ վայրերու, սովորութեանց, զեղծմանց. վանականաց ճաշերու, ազապներու և այլն: — Գինն է ֆր. 3:

Հայ դրօշները պատմութեան մէջ. — Քննական պատկերագարդ ուսումնասիրութիւն քաղաքական և եկեղեցական հին վառերու: — Գինն է ֆր. 2:

Հայ Ծեսք 1911 տարւոյ ազգային Սիւննդոսի գործոց մէջ: — Գինն է ֆր. 2:





